ՀԱՆՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ

# Ա Ր Ա Ր Մ Ա Ն
# Ծ Ր Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ — 2008

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ԽՈՍՔ ԸՆԹՐՈՂՆԵՐԻՆ . . . . . 3
ԻՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ . . . . . 4
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ
2008 Թ. ԸՆԹՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԵՄԻՆ . . . . . 9
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ
ՍԿՍՎՈՒՄ Է ԵՐԿՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԻՑ . . . . . 22
ԵՐԿՐՈՒՄ ԱՌԱՋԸՆԹԱՑ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ . . . . . 24
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ . . . . . 29
ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ . . . . . 32
2. ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ . . . . . 35
3. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ . . . . . 54
4. ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ . . . . . 59
5. ԱՇԽԱՏԱՆՔ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ . . . . . 64
6. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ . . . . . 69
7. ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ . . . . . 75
ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ . . . . . 76
ՀԱՅԱՍՏԱՆ – ՍՓՅՈՒՌՔ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ . . . . . 79
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ . . . . . 81
ԱՄՓՈՓՈՒՄ . . . . . 87
ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԱՌԱՋԻԿԱ
ԸՆԹՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԻ
ՈՐՊԵՍ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ . . . . . 90
ԱՆՀՐԱԺԵՇՏ Է, ՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԻՄԱՆԱ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ . . . . . 108
«ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ»
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ . . . . . 131
ԻՆՉՈՒ Է ՍԵՎ ՔԱՐՈՋՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԳԵՂԱՄՅԱՆԻ ԴԵՄ
(Հարցազրույց ԱՄԿ փոխնախագահ ԱԼԵՔՍԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ հետ) . . . . 138
ԿՈՐՅՈՒՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ – ԼԵՎՈՆ, ԱՐԻՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑԻՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՎ
ՀԱՅՏԱՐԱՐԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆԴ ՄԱՍԻՆ . . . . . 142
ԳԱԳԻԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ – ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՊԱՅՔԱՐԻ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ . . . . . .150
ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴԽԱՆՅԱՆ – ՀԱՆՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ,
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ . . . . . 156

# ԽՈՍՔ ԸՆՏՐՈՂՆԵՐԻՆ

Հարգելի՛ հայրենակիցներ, 2007 թ. նոյեմբերի 27-ին կայացավ «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահության ընդլայնված նիստը, որտեղ միաձայն որոշվեց նախագահական առաջիկա ընտրություններում երաշխավորել ինձ որպես ՀՀ նախագահի թեկնածու: Չթաքցնեմ, որ գործընկերներիս որոշմանը և դրան իմ համաձայնությունը տալուն մոտեցել եմ ժողովրդիս առաջ պատասխանատվության բարձր գիտակցումով, նկատի ունենալով այն բարդ, պայթյունավտանգ իրավիճակը, որ ստեղծվել է մեր երկրում ու նրա շուրջ...

Ձեր դատին եմ ներկայացնում «Հայաստան 2008. Արարման ծրագիր» իմ հեղինակած փաստաթուղթը, ինչպես նաև «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահության անդամների հիմնավորումներն ու իմ պարզաբանումները՝ արված ՀՀ նախագահի թեկնածու առաջադրվելու օգտին: Աշխատել եմ Ձեզ ներկայացնել վերջին շրջանում անձիս դեմ ի ուրախություն գործող իշխանությունների՝ նախկին իշխանությունների սանձազերծած սև քարոզչության նպատակը:

Սիրելի՛ հայրենակիցներ, ակնկալում եմ, որ ուշադրությամբ կընթերցեք ներկայացվող նյութերը և բոլորիդ համար պարզ կդառնա ողջ ճշմարտությունը, թե ինչու եմ այդ աստիճան անցանկալի իրար հաջորդող իշխանությունների համար:

Խիղճս ազգի, հայոց պետականության առաջ հանգիստ է, նպատակներս՝ ազնիվ, հաղթանակս՝ անխուսափելի:

Ձեզ նվիրված ու հավատարիմ՝ Մամիկոնի և Սոնյայի որդի Արտաշես Գեղամյան:

10 հունվարի 2008 թ.

# ԻՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Արդեն 11-րդ տարին է, ինչ հիմնադրել և ղեկավարում եմ «Ազգային Միաբանություն կուսակցությունը»: Կուսակցություն, որը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների միավորում է, ուր ընդգրկված անձինք իրականացնում են ազատության, ժողովրդավարության, անհատական պատասխանատվության սկզբունքները, ովքեր ապացուցել են, որ կարող են *արարել՝* արտադրել, կառուցել, կառավարել, օգնել մարդկանց, պաշտպանել երկիրը:

Ինձ համար հիմնարար են անձի գերակայությունը, մարդկային կարևորագույն արժեքները՝ բարությունը, սերը և բարոյականությունը, օրենքի առաջնայնությունը, իշխանության թևերի տարանջատումը, պետության վրա հասարակության դեմոկրատական վերահսկողությունը, մասնավոր սեփականությունը, տնտեսական ազատությունը, բոլոր քաղաքացիների իրավունքների և հնարավորությունների հավասարությունը:

Ես քաղաքականությանը, տնտեսությանը, ազգային անվտանգությանը, երկրի կյանքի բոլոր ոլորտներին նայում եմ շարքային քաղաքացու՝ այն նույն «հասարակ մարդու» տեսանկյունից, որին ավելի քան 17 տարի է, ինչ հաշվի չեն առնում իրար հաջորդող կառավարություններն ու «խոշոր քաղաքագետները»:

Իմ գործունեության հիմքում դրված է հասարակության կյանքի բոլոր կողմերի առողջացումը, ժողովրդի ստեղծարար ներուժի վերածննդի ապահովումը, ժողովուրդ, որը, հենվելով շուկայական ազատական տնտեսության լայն հնարավորությունների վրա, չժխտելով պետության կարգավորիչ դերը, իմ խորը համոզմամբ, ընդունակ է իրականացնել հասարակական հարստության արդարացի բաշխումը:

Ես կողմ եմ սոցիալական շուկայական ժամանակակից տնտեսությանը, պետության սոցիալական ազդեցիկ քաղաքականությանը ոչ միայն այն պատճառով, որ դա ինձ համար բարոյական անվերապահ կատեգորիա է, այլ որովհետև կարող է ու պետք է ծառայի որպես մեր

երկրի տնտեսության շարժիչ ուժ, դառնա տնտեսական քաղաքականության իմաստն ու նպատակը:

Կողմ եմ անձի ազատությանը և մարդու իրավունքները հարգելուն, բազմակարծության ընդլայնմանը և հանդուրժողականության ապահովմանը, քաղաքականության, տնտեսության, մշակույթի բնագավառներում ու ամենօրյա կյանքում անհատի ազատ ընտրությանը:

Ես դեմ եմ իրենց գործողություններով քաղաքացիական անգործունակության մղող իշխանությունների մշտական փորձերին, իշխանությանը տիրող անձանց ցանկացած գործողություն անմռունչ ընդունելուն, քաղաքական խնդիրներն ուժային և արյունալի ուղիներով լուծելուն, խստորեն դատապարտում եմ իշխանության անգործունակությունը հասարակության համար խիստ վտանգավոր՝ պետական մարմիններում կոռուպցիայի և անօրինականությունների դրսևորումները, պաշտոնատար անձանց նշանակմանը՝ անձնական նվիրվածության ու ազգակցականության սկզբունքով:

Անհրաժեշտ եմ համարում խիստ վերահսկողություն իրականացնել, որպեսզի օրենքները չխախտվեն, ժողովրդավարությունը զուգակցվի կարգուկանոնին, մարդիկ պաշտպանված լինեն իշխանությանը սերտաճած կլանների, մի խումբ հանցագործների ու սրիկաների կամայականություններից:

ՀՀ նախագահ ընտրվելու դեպքում աշխատելու եմ հասնել պետական այնպիսի մարմինների ձևավորմանը, որոնք կունենան ուժ, կամք Հայաստանի Հանրապետությունում օրինականություն և անհրաժեշտ կարգուկանոն հաստատելու գործում:

* * *

Իմ հայացքները, ըստ էության, համահունչ են պահպանողական կուսակցությունների գաղափարներին, քանի որ մեր կուսակցությունը կոչված է աջակցելու հայ ժողովրդին բնորոշ կայուն արժեքների

ամրապնդմանը, որոնցից ամենագլխավորներն են՝ սերն ու նվիրվածությունը նախնիների հողին և նրա սրբություններին, ընտանիքի և գերդաստանի անսասանությունը, Հայրենիքի ինքնիշխանությունը, հասարակության մեջ յուրաքանչյուր մարդու ինքնադրսևորման իրավունքի պաշտպանությունը, նորի զգացումը, կարեկցանքն ու արձագանքը նեղ վիճակում հայտնված մարդկանց ճակատագրին, համերաշխությունը բախտորոշ շրջափուլերի պահին:

Իմ գաղափարները համահունչ են նաև ազատական բնույթի կուսակցությունների գաղափարներին, քանի որ ի սպաս են դրվում քաղաքացու իրավունքներին, նրա տնտեսական ազատությանը, որը հիմնվում է մասնավոր սեփականության, ազատ ու արդարացի շուկայական մրցակցության վրա՝ ի շահ մեծամասնության ժողովրդավարական կամքի կենսագործման և փոքրամասնության իրավունքների պաշտպանության:

Գաղափարներս միաժամանակ համահունչ են սոցիալ-դեմոկրատական ուղղվածության կուսակցությունների գաղափարներին, քանի որ ըստ ամենայնի սատարում են մարդու սոցիալական պաշտպանվածությունը, նրա արժանապատվությունը, որ պետք է լինի պետական հոգածության առարկա:

Բայց և գտնում եմ՝

- մոլորության մեջ են ազատականության այն կողմնակիցները, ովքեր կարծում են, թե ժողովրդավարության, սոցիալականության և իրավունքի սահմանադրորեն ամրագրված գերակայությունները կարող են ստեղծվել ու պահպանվել մի հասարակության մեջ, ուր առկա է բնակչության սոցիալական խորը շերտավորում, ուր չկա համընդհանուր համերաշխություն,
- մոլորության մեջ են արդյունաբերողների, հողատերերի և մտավորականների միավորումների այն ջատագովները, ովքեր կարծում են, թե կարելի է կացութաձևի ու նպատակների հավասարակշռություն պահպանել հարուստների և աղքատների միջև, և թե բոլորի համար հնարավոր է ապահովել իրա-

վական ու քաղաքական ազատություն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ազատությունը թողնելով որպես զուտ ընտրյալ փոքրամասնության արտոնություն,

- մոլորության մեջ են ազգայնական շարժումների այն ջատագովները, ովքեր կարծում են, թե համերաշխ, իրավական, ժողովրդավարական հասարակություն կարող է կառուցվել մարդկանց անհավասարության և ազգից դուրս գտնվող առանձին անհատի ազատության ապահովման հիման վրա,
- մոլորության մեջ են սոցիալ-դեմոկրատական ուղղվածության այն կուսակցությունները, որոնք գտնում են, թե միայն կենտրոնացված կառավարվող տնտեսությունը կարող է նպաստել մարդու ինքնուրույն, ներդաշնակ զարգացմանը՝ չխոչընդոտելով անհատի ազատ ձևավորմանը:

* * *

Կյանքում և քաղաքականության մեջ ձգտում եմ ղեկավարվել պարզ ու հասկանալի հետևյալ սկզբունքներով.

- *պատասխանատվության սկզբունք.* պատասխանատու քաղաքականությունը ենթադրում է հաշվետու լինել ստանձնած պարտավորությունների համար: Պետական ու քաղաքական յուրաքանչյուր գործչի պատվի գործն է իշխանությունից հեռանալ այն պահին, երբ պարզվում է, որ չի կարողանում կատարել ստանձնած պարտավորությունները: Պատասխանատվության իմ ընկալումը ներառում է և պատասխանատվություն ապագայի համար. թե՛ ապագան և թե՛ նրա հեռանկարները ինձ համար ունեն մեծ կարևորություն,
- *բարոյականության սկզբունք.* բացառվում է, որ վարեմ անբարո քաղաքականություն: Քաղաքականությունը պետք է վարել մաքուր ձեռքերով. նպատակը չի արդարացնում միջոցները: Քաղաքական նպատակներին հասնելու միջոցները ինձ հա-

մար պակաս կարևոր չեն, քան բուն նպատակները. ավելին՝ օրինականությունը չի կարող զոհաբերվել նպատակահարմարությանը: Դեմ եմ այնպիսի քաղաքականությանը, որի ուժով որոշ մարդիկ և սոցիալական խմբեր առավելություն են ձեռք բերում ուրիշների տառապանքների հաշվին, երբ մի առանձին խավ բարգավաճում է՝ զանգվածային աղքատացման ֆոնի վրա,

- *կանխատեսելիության սկզբունք.* քաղաքականությունը պետք է լինի կանխատեսելի. յուրաքանչյուր քայլը պետք է հաշվարկվի մարդկանց համար դրա հնարավոր հետևանքների տեսակետից: Նրանք, ովքեր 1993 թ. թույլ տվեցին գների աճ 109 անգամ, չէին մտածել հետևանքների մասին: Այդ պատճառով բազմահազար մարդիկ զրկվեցին իրենց խնայողություններից: Ես դեմ եմ բախտախնդրությանը քաղաքականության մեջ, քանի որ քաղաքականության մեջ ամեն փորձարարություն հղի է վտանգով՝ փորձանք դառնալ մարդկանց, ժողովրդի համար: Այս իմաստով ես և մեր կուսակցությունը միանգամայն կանխատեսելի ենք ու պատրաստ՝ բանակցելու, միավորվելու, զիջումների դիմել այն դեպքերում, երբ ակնկալվում է Հայաստանի առաջընթացը դեպի մեր հռչակած գաղափարները,
- *պրոֆեսիոնալիզմի սկզբունք.* գտնում եմ, որ պետությունը պետք է ղեկավարեն պրոֆեսիոնալները: Պրոֆեսիոնալը ոչ միայն իր գործի գիտակն է, այլև բարոյական անձ, որը հավատարիմ է մասնագիտական պատվո կոդեքսին և ենթարկվում է կատարողական կարգապահությանը: Հայաստանի Հանրապետությունում կան տասնյակ հարյուրավոր մարդիկ, ովքեր պետական իշխանության մարմիններում աշխատանքի մեծ փորձ ունեն: Նրանց հետ ունեմ հայացքների միասնություն և փոխըմբռնում: Սա էլ հենց կոչվում է «թիմ»: Միասնաբար մենք կարող ենք և պատրաստ ենք ստանձնել երկրի առողջ բոլոր ուժերը միավորելու՝ հանուն Հայաստանի Հանրապետությունում արարման գործընթացները անշրջելի դարձնելու համար:

* * *

Ձեր ուշադրությանը և դատին եմ ներկայացնում «Հայաստան 2008. Արարման ծրագիրը»: Ծրագիր, որի կարգախոսն է՝ «Հանուն ազգային միաբանության»:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ 2008 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԵՄԻՆ

2003 թ. նախագահական ընտրություններին հաջորդած տարիները բնութագրվեցին հասարակության կյանքի բոլոր կողմերի վտանգավոր զարգացումների հետագա խորացմամբ: Ակնհայտ են հայրենական ապրանքարտադրողների արտադրանքի մրցունակության կորստի բացահայտ միտումները, արդյունաբերության լճացումը, հարաբերությունների ֆեոդալիզացումը (ավատականացումը) ագրարային ոլորտում, արդի գլոբալ մարտահրավերների պայմաններում Հայաստանի Հանրապետության տնտեսության ոչ միայն հետագա առաջադիմության, այլ նաև գոյատևման ռազմավարության լիակատար բացակայությունը: Դա առավելապես պայմանավորված է պետական շինարարության ընդհանուր գաղափարախոսական դիրքորոշումների ամլացմամբ, գաղափարախոսություն, որը պետք է նպատակ ունենար միաբանել հասարակությանը, որպեսզի կարողանա դիմակայել համաշխարհային մրցակցության մարտահրավերներին և աշխատանքի համաշխարհային բաժանմանը: Սա, իր հերթին, հանգեցրեց հայ հասարակության հոգևոր, գաղափարական և բարոյական խորը ճգնաժամի: Անկախության 17 տարիների ընթացքում իշխանություններն այդպես էլ չկարողացան կառուցել հասարակական կյանքի մի այնպիսի կարգ, որ Հայաստանի քաղաքացիները լինեին ազատ, իսկ իրենք՝ իշխանություններն էլ չտրտնջային մեր հանդեպ հարևան պետությունների ու նրանց հովանավորների անարդար վերաբերմունքի դրսևորումներից: Բարձրագույն իշ-

խանությունների համար ազատության ու արդարության, քաղաքացիների նյութական բարեկեցության ապահովման ձգտումն այդպես էլ չդարձավ առանցքային: Հայաստանի քաղաքացիները զրկված են ազնիվ աշխատանքով և ձեռներեցությամբ իրենց արժանավայել գոյությունն ապահովելու հնարավորությունից: Ամենուրեք՝ սկսած գյուղական, ավանային ու քաղաքային ինքնակառավարման մարմինների ղեկավարների և վերջացրած Ազգային ժողովի պատգամավորների ընտրություններով, Հայաստանի իշխանությունները կոպտորեն ոտնահարում են ընտրություններին և քաղաքական կյանքին մասնակցելու, օրենսդիր ու գործադիր իշխանություններ ձևավորելու քաղաքացիների ընտրական ու սահմանադրական համընդհանուր իրավունքները:

2003 թ. նախագահական և խորհրդարանական, ինչպես նաև 2007 թ. մայիսի 12-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքների բիրտ կեղծումը, ՀՀ Սահմանադրության մեջ փոփոխություններ մտցնելու ուղղությամբ 2005 թ. հանրաքվեի արդյունքների ցինիկ նենգափոխումը հասարակական հարաբերություններում է՛լ ավելի խորացրեցին հակադրման, ցանկացած այլախոհության ճնշման, քաղաքացիների անձնական արժանապատվության զգացմունքի ոտնահարման տեխնոլոգիան: ՀՀ անօրինական իշխանություններն անցկացնում են կիրթ, խելացի, զարգացած մարդկանց դիմազրկելու նպատակասլաց քաղաքականություն՝ սաղմի մեջ ոչնչացնելով պետության, հասարակական կյանքում, քաղաքացիական հասարակության կայացման մեջ գործուն մասնակցելու նրանց բնական ձգտումը: Արմատավորվել է մի մթնոլորտ, ուր գաղափարին փոխարինելու է գալիս վախը:

Չինովնիկական ուռճացված ապարատը ճնշում է գործնական նախաձեռնությունը, օտարում է ազգաբնակչության պատկառելի մասը հանրօգուտ ձեռներեցությունից: Պետական իշխանության գրեթե բոլոր մակարդակներում բարգավաճում է կոռուպցիան, որը քայքայում է պետության հասարակական ու սոցիալական կառուցվածքը, հանգեցնում է օրինական շրջանառությունից ֆինանսական

խոշորածավալ միջոցների դուրսմղմանը: Կոռուպցիան Հայաստանում առաջ է բերել աղքատություն, իսկ վերջինս էլ ծնել է շահամոլ մարդուն, որն անձնական օգուտի համար վաճառքի է հանել իր քաղաքացիական իրավունքները, այդ թվում՝ ընտրության միջոցով իշխանություն ձևավորելու իր սահմանադրական իրավունքը: «Տարածաշրջանային զարգացման կենտրոն - Թրանսփարենսի ինթերնեյշնլ – Հայաստան» հասարակական կազմակերպության 2006 թ. օգոստոսին անցկացրած ուսումնասիրությունները (Հայաստանի բոլոր մարզերի պատահական ընտրված 1500 տնային տնտեսություններում) հայտնաբերել են պետական ողջ մեխանիզմի ամլացման վտանգավոր միտումներ: Այսպես, հարցվածների 44.5 տոկոսը երկրի նախագահին համարել է շատ կոռումպացված, 18.0 տոկոսը՝ կոռումպացված և 12.9 տոկոսը՝ մասամբ կոռումպացված: Հարցվածների 51.3 տոկոսը ՀՀ կառավարության աշխատակազմը համարել է խիստ կոռումպացված, 26.0 տոկոսը՝ կոռումպացված և 12.5 տոկոսը՝ մասամբ կոռումպացված. ընդհանուր հաշվով՝ 89.8 տոկոսը ՀՀ կառավարության աշխատակազմը համարել է տարբեր աստիճանի կոռումպացված: Ըստ այդ նույն հարցման, 93.7 տոկոսը այն կարծիքին է եղել, որ ՀՀ նախարարները և 84.8 տոկոսը՝ ՀՀ դատախազության համակարգը նույնպես կոռումպացված են: Հանգամանք, որը, թերևս, անուղղակիորեն ընդունում է նաև Ազգային ժողովի վերջին ընտրությունների արդյունքում ձևավորված նոր կառավարությունը:

Օրենքի գերակայությունը մեր երկրում դեռևս կյանքի անխախտ կանոն չի դարձել ինչպես պետության ու իշխանավորների, այնպես էլ առանձին քաղաքացիների համար: Ակներև են փաստեր, երբ պետական իշխանությունն ամենուրեք նահանջում է, անկանոն կերպով խուսափում պատասխանատվությունից: Այս վակուումը լցվում է անհիմն հավակնություններ ու ինքնավստահություն ունեցող գործիչներով, որոնք մի շարք դեպքերում իրենցով փոխս են գցում իշխանությանը՝ «բարեգործական» լայնածավալ ձեռնարկումներ անցկացնելով հաճախ հանցավոր ծագում ունեցող, միանգամայն կասկածելի աղբյուրներից ձեռք բերած փողերով: Դեպի ժողովրդա-

վարություն քայլելու փոխարեն՝ Հայաստանի Հանրապետությունը վերջին տարիներին գլորվել-ընկել է օլիգարխների, կլանների իշխանության կրնկի տակ, որն իր անհագուրդ և ոչնչով չարդարացված ամբիցիաներով վարկաբեկում է գործարար հանրությանը: Արդյունքում՝ Հայաստանում ժողովրդավարության բոլոր հիմնական գաղափարներն ամլացվել են: Հասարակական առողջ բանավեճի փոխարեն՝ երկրի քաղաքացիները հայտնվել են բարձրագույն իշխանության շարքերում նյութվող համատարած խարդավանքների ճիրաններում:

Խիստ անհանգստություն է առաջացնում չինովնիկական ապարատի հետ քրեածին տարրերի սերտաճումը: Պետությունը իրավախախտների հետ խոսում է ոչ թե օրենքի, այլ նրանց լեզվով՝ մի բան, որ հանգեցրել է հասարակական բարոյականության հետնահանջին և բռնության, հանցավորության ու իրավական ժխտողականության հետագա աճին: Անելանելիության զգացումը բերում է ինքնասպանությունների և ինքնասպանության փորձերի էական մեծացմանը: Ազգային վիճակագրական ծառայության ամենամյա պաշտոնական հաշվետվությունների համաձայն 2003 թ. տեղի է ունեցել 188 ինքնասպանություն և 189 ինքնասպանության փորձ, 2004 թ. համապատասխանաբար՝ 184 ու 201, 2005 թ.՝ 199 և 200, ու 2006 թ.՝ 244 ինքնասպանություն և 221 ինքնասպանության փորձ: Վիճակը գրեթե անփոփոխ է մնացել նաև 2007 թ. հունվար-սեպտեմբերին. ավելին՝ արձանագրվել է սպանության 51 դեպք, իսկ սպանության փորձ կատարածների թիվը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճել է 25%-ով:

Իրավական ժխտողականությունը բնութագրում են այն տվյալները, որ 2003 թ., չնայած դատական ատյանների որոշումներին, կատարողական բոլոր վարույթներում բյուջեի օգտին չվերականգնված մնացորդ գումարները կազմել են 47 մլրդ 705 մլն 948 հազար դրամ, 2004 թ.՝ 32 մլրդ 534 մլն 78 հազար դրամ, 2005 թ.՝ 25 մլրդ 803 մլն 587 հազար դրամ, 2006 թ.՝ 18 մլրդ 715 մլն 364 հազար դրամ: Մտահոգիչ է և այն, որ 2007 թ. հունվար-սեպտեմբերին կատարողական

բոլոր վարույթներով բռնագանձված և չվերականգնված մնացորդ գումարը կազմել է 22 մլրդ 52 մլն 614 հազար դրամ:

Ահագնանում է իշխանական կառույցների ու դրանք սպասարկող կուսակցությունների քաղաքական դեմագոգիան, վտանգավոր ծավալներ է ձեռք բերում հասարակական կարծիքը ձեռնածելու ընթացքը, պետության հիմքերի համար ավերիչ դեր են սկսում խաղալ, այսպես կոչված, «ադմինիստրատիվ ռեսուրսը» և «մեծ փողը»: Իրողություններ, որոնց խիստ բացասական հետևանքները զգացնել տվեցին Ազգային ժողովի 2007 թ. ընտրությունների վերջնաարդյունքում, երբ ԱԺ պատգամավորների շարքերում կրկին հայտնվեցին ժողովրդի մեջ հարգանք չվայելող, օրինաստեղծ աշխատանքից հեռու անձինք: Հիրավի, ժողովրդավարության էությունը հանդիսացող ընտրական համակարգը փոխակերպվում և վերածվում է «կոմպրոմատների» պատերազմի, «ուղեղների լվացման», պաշտոնատարների ու «փողատեր մեշոկների» մրցության: Դա ընտրողներից խլում է այն հավատը, որ իրենց ձայներով նրանք, իրոք, ի զորու են որոշել, թե՝ ո՛վ իշխանություն կստանա իրենց կամքով ու իրենց անունից: Ընտրություններին նվազաչափ ներկայանալը և բոլորին դեմ քվեարկելը ոչ այլ ինչ է, եթե ոչ ընտրողների կողմից բողոք մեր քաղաքացիների հիմնական իրավունքի բռնատիրման դեմ: Տեղեկատվության և մամուլի ազատությունը ճզմված է իշխանության հետ կատարելապես սերտաճած իշխող մեկուսախմբի կլանի ճիրանների մեջ: Մամուլային և հեռուստատեսային ձեռնածությունները հանգեցրել են սուտ, մարդկանց ապակողմնորոշող կամ դիտավորյալ ցնցող տեղեկատվության տարածմանը: Իրողություն, երբ «դափնիները» իրարից խլում են գործող և նախկին իշխանություններին սպասարկող լրատվամիջոցները: Դա իջեցնում է մամուլի և հեռուստաալիքների բարոյական ու ինտելեկտուալ մակարդակը և դրանց սպառողներին, ասել է, թե՝ Հայաստանի քաղաքացիներին անպաշտպան է դարձնում «ուղեղների լվացման» հանդեպ:

Առանց համապատասխան իրավական երաշխավորման անցկացվող տնտեսական բարեփոխումների չկշռադատվածությունն

առաջ է բերել վարձու աշխատավորի անպաշտպանվածություն՝ զբաղվածության, աշխատանքի վարձատրման ու սոցիալական երաշխիքների ապահովման պետական համակարգերի քայքայման պայմաններում:

Իրականացվող ռեֆորմների հիմնական հետևանքները տագնապահարույց են: Երկրի առջև ծառացած հիմնախնդիրներն անաչառորեն վերլուծելու և տնտեսական աճի գիտականորեն հիմնավորված ռազմավարություն մշակելու փոխարեն, արդեն 17-րդ տարին է, ինչ գործադրվում է ազատական տնտեսական մի կեղծ քաղաքականություն, որի հիմնական իմաստն է ազգային եկամտի բաշխման համակարգի պահպանումը հօգուտ իշխանամերձ այն օլիգարխիկ կառույցների, որոնք հարստացել են ժողովրդին և պետությանը կեղեքելու հաշվին (թերևս, մասամբ բացառություն կարելի է համարել 2008 թ. պետական բյուջեն): Ավելին՝ շարունակվում է «դնովի» անձերի միջոցով բնապաշարների՝ աղետալի հետևանքներով հղի անզուսպ շահագործման, երկրից կապիտալի (դրամագլխի) անարգել արտահանման և պետական գույքի անպատասխանատու ծախծխման հանդեպ «ընտրյալների» իշխող մեկուսախմբի իրավունքն ամրագրելու երկրի իշխանությունների քաղաքականությունը:

Վարվող տնտեսական և դրամավարկային քաղաքականության ուղեգիծը հանգեցրել է նրան, որ տնտեսության ներցիոն զարգացումը գնալով դառնում է փակուղային: Չեն հաղթահարվում գիտաարդյունաբերական ներուժի անկման կամ էլ հետնահանջի միտումները, չեն լուծվում կարևորագույն այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ հիմնական ֆոնդերի արդիականացումը, փոքր էներգատար ու գիտատար տեխնոլոգիաների լայնածավալ ներդրման հիման վրա հայրենական արդյունաբերության տեխնոլոգիական մակարդակի և մրցունակության բարձրացումը: Բավարար միջոցներ չեն ձեռնարկվում երկրի գիտատեխնիկական ներուժի քայքայման առաջն առնելու ուղղությամբ: Ըստ էության, հանրապետության տնտեսությունն ընկել է տևական լճացման մեջ, ամրագրվել է համաշխարհային տն-

տեսության եզրակայքում որպես էժան աշխատուժի և հումքի աղբյուր ծառայելու նրա վիճակը (երևույթ, երբ ամեն գնով շահ կորզելու միտումը անդառնալի կորուստներ է պատճառում երկրի բնապահպանական համակարգին): Լիովին բացակայում է ինովացիոն ձեռնարկատիրությունը, պատշաճ ուշադրություն չի դարձվում տեղեկատվական տեխնոլոգիաների լայն ներդրմանը:

Առանձնահատուկ մտահոգություն է հարուցում մտավորականության փաստացի ապադասակարգայնացումը (լյումպենիզացիան): Չհաշված շահամոլների ու հարմարվողականների մի նեղ խավի՝ մտավորականները հայտնվել են տնտեսական և հասարակական-քաղաքական գործընթացներին մասնակցելու ոլորտից հեռացված վիճակում կամ էլ իշխող մեկուսախմբային վարչակարգի համար դարձել վահան:

Հայոց պետականության հիմքերի համար լուրջ վտանգ է ներկայացնում զուտ ֆիզիոլոգիական գոյապայքարի կացության մեջ խրված մարդկանց ահագնացող քանակը: Նրանք չեն վստահում պետությանը, իշխանությունների կարգախոսներին ու պոպուլիստական խոստումներին, նրանց հավատ չեն ներշնչում աղքատության հաղթահարման կամ բնակչության զբաղվածության ապահովման ուղղությամբ պետության կողմից առաջարկվող տարաբնույթ ծրագրերը: Հանրապետությունում ձևավորված և խորացող իրադրությունն այնպիսին է, որ քաղաքացիների զգալի մասը դուրս է մղվել երկրում ընթացող իրական զարգացումներից: Մեր հասարակությունն սկսում է կորցնել հայ մարդուն, ընտանիքին ներհատուկ ավանդականությունը, հոգևոր-բարոյական ավանդույթների կրողի ու տիրոջ իր առաքելությունը: Մարդկանց հայացքները, նրանց ներգրավվածությունը կյանքի մեջ այնքան երկրորդական են դարձել, որ, թվում է, նրանք Հայաստանում ներկա են սոսկ ֆիզիկապես: Գերիշխում է պետության համար իրապես վտանգավոր դարձած ընդհանուր դիրքորոշումը. ի՞նչ կարող է փոխվել, եթե պետական գործառույթների արդյունքում քաղաքացուն ամեն պահ ասես թե ներշնչում են, որ անձամբ ինքն ու իր նմանները ոչինչ չեն կարող շտ-

կել հասարակության մեջ, որ իրենց մասնակցությունը երկրի կյանքին որևէ օգուտ չի տալիս: Դրա հետևանքով քաղաքացիների մեծ մասն ընկնում է խորը հիասթափության և անտարբերության, պետության կյանքում իրենց մասնակցության անիմաստության գիտակցման մեջ: Պետության կողմից արմատավորվող այդօրինակ մտածելակերպը, անգործությունը, անտարբերությունը զգալի չափով խտացնում են պաշտոնավորների ու իշխանակալների՝ մեր երկրում այժմ թագավորող անպատժելիության մթնոլորտը: Իշխանության կողմից վարվող հակազգային քաղաքականության արդյունքում մարդկանց զգալի մասը դատապարտված է միմիայն իրենց ֆիզիկական գոյության համար պայքարելուն: Մեր քաղաքացիների պատկառելի զանգվածը ստիպված է կատարել այլազան «սոցիալական դերեր»՝ մտավոր աշխատանքի մարդուց վերածվելով բանվորի, մանրավաճառի կամ վարձու հողագործի, կամ էլ՝ տնայնագործ արհեստավորի:

Վտանգավոր միտումներ են արձանագրվել ազգաբնակչության զբաղվածության ոլորտում: Այսպես, 1999 թ. Հայաստանի տնտեսության մեջ զբաղված է եղել 1 մլն 320.1 հազար մարդ, այն դեպքում, երբ 2006 թ. նրանց թիվը կրճատվել և հասել է 1 մլն 112.4 հազարի: Ասել է, թե՝ այդ ժամանակամիջոցում զբաղվածների թիվը կրճատվել է 207700 մարդով: Նման միտումը շարունակվել է նաև 2007 թ. հունվար-սեպտեմբերին, երբ տնտեսության մեջ զբաղված է եղել 1 մլն 84 հազ. մարդ՝ 10 հազ. 900 մարդով պակաս, քան նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում:

Չափազանց տագնապալի նշագծի է իջել ազգաբնակչության բնական աճը: Այսպես, 1997 թ. այն կազմել էր 19944 մարդ, իսկ 2006 թ.՝ ընդամենը 10419 մարդ: Այսինքն՝ վերջին 9 տարիներին Հայաստանի ազգաբնակչության բնական աճը կրճատվել է գրեթե 50 տոկոսով: Ավա՜ղ, դրական տեղաշարժ գրեթե չի արձանագրվել նաև 2007 թ. ինը ամիսների կտրվածքով, երբ բնական հավելաճի տեմպը կազմել է ընդամենը 0,6%:

Հարկ է նշել, որ չքավորության մեջ է նաև զբաղված մարդկանց

մեծամասնությունը: Պաշտոնական վիճակագրության համաձայն, տնտեսության մեջ զբաղված յուրաքանչյուր մարդու բաժին է ընկնում երկու չաշխատող: Սա, իր հերթին, նշանակում է, որ մեկ աշխատող մարդը պետք է կերակրի և՛ իրեն ու ևս երկուսի: Եթե հաշվի առնենք, որ 2007 թ. հունվար-սեպտեմբերին տնտեսության մեջ զբաղված աշխատողի միջին ամսական աշխատավարձը կազմել է 74028 դրամ, իսկ սպառողական նվազագույն զամբյուղը գնահատվել է շուրջ 33145 դրամի չափով, ապա երկրում մեկ շնչին ընկնող միջին եկամուտները կազմել են 24676 դրամ, որը կազմում է սպառողական նվազագույն զամբյուղի 74,4 տոկոսը կամ պահանջվածի երեք քառորդը:

Աղետալի վիճակի մեջ են շարունակում մնալ կենսաթոշակառուները: Նրանց ամսական եկամուտներն ավելի քան 2 անգամ ցածր են սպառողական նվազագույն զամբյուղից և ավելի քան մեկ քառորդով էլ՝ պարենային նվազագույն զամբյուղի արժեքից: Հարկ եմ համարում նաև նշել, որ 2008 թ. պետական բյուջեով նախատեսված է կենսաթոշակների 60%-ի չափով ավելացում: Դա իր որոշակի դրական ազդեցությունը կունենա շուրջ 300000 թոշակառուների վրա: Կարևորում եմ և այն, որ նման հնարավորության հասնելու ուղիները հստակ մատնանշված են եղել 2007 թ. իմ հեղինակած «Հակաճգնաժամային ծրագրում»:

Խախտված է անհատի, հասարակության և պետության շահերի միասնությունը, այն հավասարակշռված ու ներդաշնակ չէ տնտեսական, սոցիալական, միջազգային, տեղեկատվական, ռազմական և բնապահպանական հիմնախնդիրների հետ: Այս խախտված միասնությունը չի կարող դառնալ ազգային շահի հիմք ու բովանդակություն:

Առ այսօր չեն իրականացվում անհատի շահերը, սահմանադրական իրավունքների ու ազատությունների հիման վրա՝ քաղաքացիների անվտանգության ապահովումը, մարդկանց կյանքի ու բարեկեցության որակական մակարդակի բարձրացումը նրանց ֆիզիկական, հոգևոր և մտավոր զարգացման պայմաններում:

Արհամարհվում են հանրության շահերը, անտեսվում են քաղաքացիական հասարակության վրա խարսխված իրավական, սոցիալական պետության հիմքերը ստեղծելու անհրաժեշտ գործոնները: Միաբանվելու փոխարեն հասարակության մեջ էլ ավելի են խորացել դիմակայությունն ու անհանդուրժողականությունը:

Ոտնահարված են պետության շահերը, երաշխավորված չէ սահմանադրական դրույթների գործառությունները, խախտված է քաղաքական, տնտեսական և սոցիալական կայունությունը, որոնք օրինականություն և հանրային կարգուկանոն ապահովելու պարտադիր պայմաններ են: Ազգային շահերն այդպես էլ իրենց արտացոլումը չեն գտնում հասարակության բարոյական և հոգևոր հիմքերի ձևավորման, հայրենասիրական ու մարդասիրական արժեքների ամրապնդման և պահպանման մեջ:

Արդ, որո՞նք են եղել երկրի առաջընթաց զարգացումը խոչընդոտող մյուս պատճառները: Թվարկեմ դրանցից ամենակարևորները:

*Առաջին.* ազգային անվտանգության հայեցակարգի հիման վրա ընդունված պետական շինարարության ռազմավարության բացակայությունը հանդիսանում է հետխորհրդային Հայաստանի տնտեսական և իրավական ողջ համակարգի թուլության պատճառներից մեկը: Դրա հետևանքով անհնար է դարձել կուտակման և զարգացման համարժեք մեխանիզմի ստեղծումը, որն էլ հանգեցրել է.

- տնտեսական կյանքի պետական կարգավորման կատարյալ բացակայության պայմաններում էկոնոմիկայի, ներքին և արտաքին շուկաների հապճեպ ու չկշռադատված ազատականացմանը,
- պետական ձեռնարկությունների «նոմենկլատուրային», հանցավոր սեփականաշնորհման, որը նպաստեց բնակչության թալանին և նախկին ու գործող պաշտոնյաների հետ սերտաճած մեկուսախմբերի միջև պետական ունեցվածքի բաժանբաժան անելուն, կողոպուտին: Ժողովրդական բարիքի քաշելտանելը տեղի է ունեցել «սեփականաշնորհված» ձեռնարկությունների արդյունավետ գործունեության համար անհրա-

ժեշտ շուկայական միջավայրի ու ինստիտուցիոնալ բարեփոխումների բացակայության պայմաններում,

- բյուջետային պակասուրդը ծածկելու և մակրոտնտեսական կայունությունը պահպանելու անհրաժեշտությունից դրդված՝ անընդհատ արտաքին նորանոր վարկերի փոխառությանը դիմելու քաղաքականությանը, որն իր հերթին երկիրն օրեցօր ընկղմում է արտաքին պարտքի ճահճի մեջ: Ելնելով հենց այդ իրողությունից՝ ՀՀ կենտրոնական բանկը ճարահատյալ իրականացնում է կոշտ դրամավարկային (մոնետար) քաղաքականություն, որն էլ կասեցնում է մեր տնտեսական զարգացումը:

*Երկրորդ.* ՀՀ կառավարության կողմից վարվող տնտեսական քաղաքականության հիմնական սխալները հանգեցրել են՝

- դատահիրավական ողջ համակարգը քրեամենաշնորհայնացված իրավիճակում հայտնվելուն, սեփականության իրավունքների, քաղաքացիների իրավունքների ու ազատությունների պաշտպանության իրական և գործուն մեխանիզմների բացակայությանը, երկրում օրինականություն հաստատելու ոչ թե օրենքի, այլ՝ իշխանությունների՝ միակ ուժային միջոցի դերում հանդես գալուն,
- վարչախմբի կողմից արժեքների արատավոր համակարգի արմատավորմանը, որը ստեղծել է մի այնպիսի վիճակ, երբ անձի պաշտոնեական և մասնագիտական առաջխաղացման համար պարտադիր պայմաններ դարձան կաշառատվությունը, խաբեությունը, անբարոյականությունը: Ազգաբնակչության զգալի մասը ամեն օր ստիպված է լինում «ընտրություն» կատարել իր ընտանիքի համար գոյապայքարի և հայրենիքի միջև: Կամ կանգնել ժողովրդի, հասարակության շահերի պաշտպանության դիրքերում, կամ էլ իր ընտանիքի ապրուստի նվազագույն չափն ապահովելու համար հրաժարվել պետական շահը պաշտպանելու սուրբ առաքելությունից: Ահա նման երկընտրանքի առաջ է կանգնած մեր քաղաքացիների

մեծամասնությունը: Մարդկանց որոշակի զանգված վերածվել է այս աշխարհում ամեն սուրբ բան աստիճանաբար կորցնող խաբեբաների: Արմատախիլ են արվում հոգևոր և բարոյական արժեքները, Հայաստանում արդար ու ազնիվ աշխատանքով ապրելու հնարավորության հավատը: Ահա, սա է հենց ամենամեծ կորուստը,

- վարվող քաղաքականությունը առավել հարուստ փոքրամասնության շահերի պաշտպանությանն է ստորադասել հասարակության կայունության հիմքը հանդիսացող միջին խավ ձևավորելու անհրաժեշտությունը: Դա բերել է սոցիալական վտանգավոր շերտավորման և եկամուտների մակարդակով երկբևեռ, պայթյունավտանգ հասարակության ձևավորմանը: Սա ազգաբնակչության մեծամասնության աղքատացման գլխավոր պատճառներից մեկն է: Երևույթ, որը էապես կասեցնում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը:

*Երրորդ.* պետականության գլխավոր հիմքերը կազմող գործոնները մոտեցել են վտանգավոր սահմանագծի. պետությունն այլևս ի վիճակի չէ իրականացնել իր գործառնությունները պատշաճ մակարդակով, ասել է, թե ապահովել ազգաբնակչության առողջության վերարտադրությունն ու պահպանումը, բանակի մարտունակությունը, գիտության, կրթության և արտադրական ենթակառուցվածքների կանոնավոր գործունեությունը:

*Չորրորդ.* նախագահական, օրենսդիր և գործադիր իշխանությունները չեն կարողացել համախմբել հասարակությանը, ստեղծել այնպիսի պայմաններ, որոնց առկայության պարագայում խավերի, կուսակցությունների, անհատականությունների շահերը և առաջնորդների ձգտումները նպատակաուղղվեին երկրի կողմից գլոբալիզացիայի մարտահրավերները հաղթահարելու պատրաստակամությանը: Դրա փոխարեն ունենք կուսակցությունների ու խմբավորումների, տեղական և գյուղական հայրենակցական միավորումների, եկեղեցական ու կրոնական համայնքների, աղանդների աննախադեպ աճ: Խորանում է ազգի պառակտումը: Դեռ ավելին. կան կու-

սակցություններ, որոնք, արհամարհելով ոչ հեռավոր անցյալի պատմական դասերը, իրենց համարում են հասարակության առանցք և միմիայն սեփական անձերի մեջ են տեսնում համազգային առաջնորդություն իրականացնելու իրավունքը: Սպառնալի չափերի է հասել պետական իշխանության տարբեր մակարդակի մարմինների, դրանց ղեկավարների, կուսակցությունների հանդեպ քաղաքացիների վստահության անկումը:

*Հինգերորդ.* երկիրը հայտնվել է հոգևոր խորը ճգնաժամի մեջ, որն ուղեկցվում է ազգային մշակույթի, գիտության և կրթության անկումով: Մշակույթի ու կենցաղի ոլորտում շարունակվում են արմատավորվել հայ ժողովրդին խորթ ավանդույթներ ու սովորույթներ: Ժողովրդի լայն խավերի համար դեռևս մատչելի չեն առողջապահությունն ու կրթությունը: Սպառնագին չափերի են հասել պոռնկությունը, թմրամոլությունը և աղանդավորությունը:

*Վեցերորդ.* երկրում ձևավորվել է մեկուսախմբային տնտեսություն: Իշխանության մարմիններում խորապես արմատակալած կոռուպցիան, կաշառակերությունը, պետական միջոցների շարունակվող թալանը հասել է վտանգավոր չափերի: Սասանվել է մարդկանց հավատը, խռովվել են նրանց հոգիները: Այս ամենը, վերջիվերջո, խոցելի է դարձրել մեր պետությունը արտաքին ոտնձգությունների համար:

Հայաստանի Հանրապետության հասարակությունը պառակտված է, անելանելիության զգացումը կաթվածահար է արել ժողովրդի հավաքական կամքը: Իշխանություններն անընդունակ եղան միավորել երկրի հայրենասիրական բոլոր ուժերը: Ազգային ինքնությունը վտանգող սպառնալիքը պահանջում է համաժողովրդական պայքար, պայքար, որ պիտի համախմբի հասարակության առողջ ուժերին:

Հայ ժողովրդի առջև ներկայումս ծառացել է կենսահույզ հետևյալ հարցադրումը. ինչպե՞ս ապրել այսուհետ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ ՍԿՍՎՈՒՄ Է ԵՐԿՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԻՑ

Համընդհանուր մրցակցության պայմաններում Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման գործնական կազմակերպման համար անհրաժեշտ է քաղաքական նոր դաս, որն ընդունակ կլինի երկրին և, առաջին հերթին, նրա երիտասարդությանը առաջարկել հեռանկար ու աշխատանք: Ըստ այդմ, հարկ է իշխանության նոր կազմակերպում, որը հստակ կսահմանի երկրի զարգացման ուղղությունը, կառաջադրի զարգացման նպատակները և կնպաստի հասարակության ու պետության համախմբմանը առկա բոլոր միջոցներով՝ դրա իրականացման համար: Այլ ճանապարհ հանրապետությունը չունի, քանի որ կայացած համակարգի սահմաններում մեր տնտեսությունը մոտեցել է իր զարգացման եզրագծին:

Հրամայական պահանջ է առաջիկա 10-15 տարիներին պետության զարգացման սեփական մոդելի ստեղծումը: Եվ երկրի համար ուրվագծվող ապագան անհրաժեշտ է, որ կապված լինի գործունեության նոր համակարգերի ստեղծման հետ, որոնք և ապահովելու են որակական աճ կյանքի բոլոր բնագավառներում:

ՀՀ նախագահ ընտրվելու դեպքում իմ գործունեության մեջ գերակայություններ եմ հռչակելու ժամանակակից առողջապահական համակարգի ստեղծումը, «Հայաստանի տարածաշրջաններում հավասարակշռված զարգացման» պետական ծրագրի հաստատումը՝ բնական և աշխատանքային պաշարների առավել արդյունավետ օգտագործման հիման վրա (հաշվի առնելով Երևանի ու հանրապետության մարզերի միջև սոցիալ-ժողովրդագրական հաշվեկշռի հավասարեցման արդիական անհրաժեշտությունը), դրա հետևողական բարելավումը հատկապես՝ բարձրլեռնային և սահմանամերձ շրջաններում:

Պետական քաղաքականության կարևոր ուղղություն եմ համարում հանրապետության բնակչության՝ ողջ կյանքի ընթացքում

որակյալ ու անընդհատ կրթություն ստանալու վերաբերյալ ազգային նախագծի հաստատումը, երիտասարդության հարցերով՝ «Գլոբալացման դարաշրջանում երիտասարդության հարմարեցման (ադապտացիայի)» ազգային ծրագրի իրականացումը՝ հաշվի առնելով հայկական կյանքի ներկա իրողությունները: Երիտասարդության հարցերով ազգային նախագծի շրջանակներում առաջնահերթ եմ համարում երիտասարդ ընտանիքներին հարմարավետ և մատչելի բնակարաններով ապահովելու համապետական միջոցառումների մշակումը:

Ազգային նախագծերի գերակայության պայմաններում դրանց անվիճելի կարևորությունն այն է, որ իշխող քաղաքական դասի գործունեության հիմքում դրված լինի *արարումը*, այսինքն՝ նոր կազմավորվող առաջատար ինֆրակառուցվածքների և արտադրական համակարգերի ստեղծումը, հասարակության սոցիալական կառուցվածքի ղեկավարումը:

ՀՀ նախագահ ընտրվելու դեպքում իմ գործունեության հիմքում կդնեմ վերը շարադրված նպատակների կենսագործումը և քայլերս կուղղեմ համապետական ու ազգային նշանակություն ունեցող հենց այդ խնդիրների իրականացմանը:

Ընդ որում, ինձ հաշիվ եմ տալիս, որ առաջարկվող ազգային նախագծերի իրականացումը հնարավոր է միայն գործունեության նոր համակարգի հիման վրա: Այսպես, հնարավոր չէ գոնե կանգնեցնել երկրի ժողովրդագրական անկումը՝ չստեղծելով մարդկանց ապահով կյանքի և նրանց հարմարավետ տեղաբաշխման նոր ձևեր, որոնք, մասնավորապես, նկատի կունենան բազմազավակ ընտանիքներին (նվազագույնը երեք երեխայից բաղկացած): Հնարավոր չէ կյանքը վերադարձնել գյուղ, կանգնեցնել գյուղից աշխատունակ բնակչության արտագաղթի հոսքը, հատկապես՝ երիտասարդության, առանց տարածաշրջանային զարգացման կազմակերպման և ժամանակակից ինֆրակառուցվածքների ու արդյունաբերության ստեղծման, որոնք հնարավորություն կտան լիարժեք և արժանապատվորեն ապրել ու *արարել* գյուղում: Եվ, վերջապես, չի կարելի

«կացարանային խնդիրը» լուծել բացառապես տնտեսական ու իրավական միջոցներով՝ առանց պետության կողմից երաշխավորված երիտասարդ ընտանիքների երկարաժամկետ ու մատչելի վարկավորման, ապագային միտված հեռանկար ունեցող ծրագրերի իրականացման, առանց քաղաքաշինական և տնաշինական համակարգերի արմատական, համալիր վերափոխման:

Պետության կողմից հասարակության զարգացման ղեկավարումը որակապես նոր մակարդակի բարձրացնելու նպատակով անհրաժեշտ եմ համարում նաև ստորև մատնանշել ընթացիկ խնդիրներն ու պետության դերը շուկայական տնտեսության մեջ: Հասունացած հիմնահարցերի ընդհանրացումը և դրանց փոխակերպումը նպատակների ու խնդիրների, որոնք թույլ կտան առարկայորեն և տեխնոլոգիապես լուծել նշված գերակայությունները՝ ահա սա է լինելու իմ քաղաքականությունն առաջիկա տարիներին:

## ԵՐԿՐՈՒՄ ԱՌԱՋԸՆԹԱՑ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երկրի առաջընթաց զարգացումն ապահովելու համար, նախևառաջ, անհրաժեշտ է ձերբազատվել միստիկայից և «բարեփոխումներ» կոչվող հասկացությանն առնչվող խոսելախտից: Իսկ դա նշանակում է.

*առաջին.* երկրում իրականացվող բոլոր բարեփոխումները, տնտեսական վերափոխությունները հարկավոր է հարաբերակցել և ներդաշնակեցնել ազգային անվտանգության շահերի հետ: Հիմնականը պիտի լինի այն, թե ի՛նչ են, ի վերջո, տալիս այդ նորամուծությունները հայոց պետականության ամրապնդման, մրցունակ արտադրության վերստեղծման, ինքնիշխանության և ազգաբնակչության բարեկեցության աճի համար:

*Երկրորդ.* երկրի ու ժողովրդի շահերը, ազգային անվտանգության

ապահովումը պետք չէ պայմանավորել սեփականության այս կամ այն ձևով, պետական հատվածում պետք չէ քանդել այն, ինչը դեռ կա և որը մոտակա ժամանակներում չի լինի մասնավոր սեփականության ոլորտում: Խոսքը վարչահրամայական համակարգի վերականգնման մասին չէ, այլ չսեփականաշնորհված ձեռնարկությունների կառավարումը շուկայական համակարգի շրջանակների մեջ փոխադրելու մասին է:

*Երրորդ.* Հայաստանի տնտեսությունն ունի փոքր ու միջին մասնավոր ձեռնարկատիրության և ագարակատիրության պետական հովանավորության քաղաքականության կարիք: Այդ քաղաքականությունը պետք է հենվի շուկայական տնտեսության երեք կարևորագույն սկզբունքների վրա՝ հավասար հնարավորությունների ընձեռում, ազատ մրցակցության ապահովում և սեփականության անձեռնմխելիության երաշխավորում: Ու այդ ամենը օրենսդրական հիմքերի ստեղծման վրա: Այս բնագավառում վարվող քաղաքականությունը պետք է նպաստի ինչպես խոշոր բիզնեսի գործունեությանը, այնպես էլ գանձապետական (ֆիսկալ) համապատասխան ծակների միջոցով խրախուսի փոքր և միջին ձեռնարկատիրության ու ագարակային տնտեսությունների զարգացումը: Այդօրինակ մոտեցման դեպքում հնարավոր կլինի ստեղծել հազարավոր աշխատատեղեր և էապես բարձրացնել ազգաբնակչության կենսամակարդակը:

*Չորրորդ.* հարկավոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել գիտության զարգացման վրա և ձգտել ապահովելու փոխշահավետ ու բեղմնավոր գործակցություն գիտության և բիզնեսի ամենատարբեր բնագավառների միջև: Անհրաժեշտ է ստեղծել համապատասխան (օրենսդրական, ինստիտուցիոնալ, մտավոր, կազմակերպական) նախադրյալներ և պայմաններ, որպեսզի տնտեսական աճը պայմանավորված լինի ինովացիոն գործունեության առաջատար դերով, որը թույլ կտա ներդնել և՛ նորույթներ, և՛ նրա արդյունքը, որպեսզի գաղափարը, մշակումը և տեխնոլոգիան ներդրվեն շուկայական համատեքստի մեջ ու բավարարեն հանապազօր պահանջմունքները: Հարկավոր է, գործնական նորամուծությունների միջո-

ցով, հասնել իրենց հատկանիշներով ու հատկություններով բարձրորակ ապրանքների, մթերքների, ծառայությունների ու տեխնոլոգիաների ստեղծմանը: Վարվող տնտեսական քաղաքականության հիմքում պետք է դրվի նոր հնարավորությունների, տեխնոլոգիաների ու գաղափարների շահագրգիռ որոնումը, որոնք գործնականում կապահովեն աշխատունակ ազգաբնակչության առավել գործուն մասի համար մտավոր ու ստեղծագործական գործունեության լավագույն պայմաններ:

*Հինգերորդ.* մեր ազգաբնակչությունն ունի հայրենական արտադրության առաջին անհրաժեշտության ապրանքների, մատչելի ծառայությունների, բարձր որակավորում չպահանջող նոր աշխատատեղերի կարիք: Դա հրատապ է դարձնում ներքին շուկայի զարգացման խնդիրը՝ բնակչության գնողունակության աճի, դեպի հայրենական արտադրություն մարդկանց վերակողմնորոշելու հիման վրա: Խիստ կարևոր ենք համարում նաև արտադրական և գյուղատնտեսական հատվածների ուժերի միավորումն ու սերտ համագործակցությունը:

*Վեցերորդ.* հարկավոր է բացառել գործերի այնպիսի վիճակի հնարավորությունը, երբ բնակչությանը հուզող, հրատապ հարցերի լուծումը պետությունը փոխանցում է օլիգարխիկ կառույցներին՝ մի բան, որն անխուսափելիորեն հանգեցնում է պետական ինստիտուտների էրոզիային, դրանց դերի ամլացմանը, երկրի ապաարդիականացմանը և սոցիալական անկմանը:

Այն գլխավոր հարցերը, որոնց պատասխանները իշխանությունից սպասում է հասարակությունը, առաջին հերթին վերաբերում են աղքատության հաղթահարման հիմնախնդիրներին, ինչպես նաև վերաբերում են աշխատունակ ազգաբնակչության մեծամասնությանը, անվճար կրթություն, բժշկական օգնություն ստանալու, սոցիալական երաշխիքներ հաստատելու հնարավորությանը, անհրաժեշտ հարմարություններով ապահովված, պաշտպանված մանկությանն ու ծերությանը:

Ապրանքային գործելակարգով ապրող մարդկային հասարակու-

թյան մեջ գործում է համապատասխանության օրենքը, որի համաձայն՝ տնտեսությունը նորմալ է զարգանում միայն այն դեպքում, եթե հասարակության մեջ հաստատված արտադրական հարաբերությունները համապատասխանում են հասարակության արտադրողական ուժերի միաժամանակ երկու պարամետրերին՝ զարգացման մակարդակին և դրանց բնույթին: Այսինքն, երբ արտադրողի շահերը համընկնում են երկրի տնտեսական շահերին: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ անհրաժեշտ է որոշել տնտեսական քաղաքականության գերակայությունները, դրանց հասնելու նպատակների ու միջոցների համապատասխանությունը: Հարկ է նաև առանձնացնել երկրի տնտեսական անվտանգությանը սպառնացող գործոններն ու մարտահրավերները, որոնցից գլխավորներն են.

- արտադրական հին հզորությունների՝ զանգվածաբար շարքից դուրս գալը և, արդյունքում, գիտաարտադրական ու պահուստային ներուժերի կտրուկ կրճատումը,
- տնտեսության կառուցվածքակազմիչ ճյուղերի նկատմամբ պետական և հասարակական հսկողության ու հոգածության լիակատար բացակայությունը,
- մտավոր ներուժի շարունակական քայքայումը,
- դրամական կանոնավոր շրջանառության արգելակումը:

Տնտեսական քաղաքականության մեջ, իբրև գործելակերպ, կարևորում եմ հետևյալ գերակայությունները.

1. գիտատար բարձր տեխնոլոգիական (տեղեկատվական, կենսաբանատեխնոլոգիաներ, գենային ճարտարագիտություն, նանոտեխնոլոգիաներ) արտադրությունների մեջ ներդրումների ծավալների զգալի (3 և ավելի անգամով) ավելացում, որը պարտադիր պայման է գիտաարտադրական առկա ներուժի պարզ վերարտադրության համար,

2. ինովացիոն ծրագրերի լայնածավալ ներդրման երաշխավորումը, ինովացիոն ներուժի վերածումը արտադրականի, այնուհետև՝ առևտրայինի: Տնտեսության արդիականացումը՝ նոր տեխնոլոգիական հենքի հիման վրա, որն անհրաժեշտ է երկրի տնտեսությունը

ճարակած կառուցվածքային ճգնաժամը հաղթահարելու և գլոբալ մրցակցության պայմաններում կայուն զարգացում երաշխավորելու համար: Այնպիսի պայմանների ապահովում, որ գիտելիքներն ու նոր տեխնոլոգիաները դառնան հիմնական տեխնոլոգիական ռեսուրս,

3. երկրի զարգացմանը միտված խնայողությունների ու ներդրումների միջև փոխշահավետ կապի վերականգնումը, բանկային համակարգի բնականոն, ներդրումային մթնոլորտ խրախուսող աշխատանքի կարգավորումը, հանրապետությունից կապիտալի ապօրինի դուրսբերման արգելումը,

4. գործուն միջոցների ձեռնարկումը՝ աշխատավարձի անհրաժեշտ չափի վերականգնման ու զանգվածային գործազրկություն առաջացնող պատճառների վերացման ուղղությամբ և երկրից բարձրորակ ու բարձրակիրթ կադրերի արտահոսքը դադարեցնելուն ուղղված պայմանների ստեղծումը,

5. դրամական շրջանառության, վճարումների ու հաշիվների համակարգի կանոնավորումը, արտադրական գործունեության վերաֆինանսավորման գործընթացի կարգավորումը,

6. մակրոտնտեսական բարենպաստ պայմանների ապահովումը՝ արտադրությունը զարգացնելու համար, ինովացիոն ու արտադրական ներուժի մակարդակի աճի խթանումը,

7. տնտեսության ապաքրեականացման ապահովումը, շուկայական մրցակցության մեխանիզմների գործողության երաշխիքների ստեղծումը, շուկայում մենաշնորհային դիրքով պայմանավորվող չարաշահումների հնարավորության բացառումը,

8. գլոբալ մրցակցության պայմաններում հայրենական տնտեսության համեմատական առավելությունները լիովին բացահայտելու, տեխնոլոգիական նորագույն դրվածքի հանգուցային բնագավառներում՝ համաշխարհային շուկայում միանգամայն մրցունակ արտադրատեխնիկական ու բարձր տեխնոլոգիական կառուցվածքների աճի «լոկոմոտիվներ» առաջ բերելու նախադրյալների հաստատումը,

9. բյուջետային եկամուտների կրկնապատկման ապահովումը՝ բյուջետային ռեսուրսների պակասը համալրելու նպատակով՝ խն-

դիր ունենալով հաղթահարել հանրապետության առաջ ծառացած և հրատապ լուծումներ պահանջող պրոբլեմները: Իրողություն, որը պայմանավորված է ՀՆԱ-ի նկատմամբ բյուջեի աննշան տեսակարար կշռով, ինչն էլ հետևանք է պետության՝ իր պարտավորությունները կատարելու անկարողության փաստով: Հարկ է նշել, որ այս հարցը փոքր-ինչ մեղմվել է 2008 թ. պետական բյուջեում, որտեղ հիմնականում ստվերի կրճատման արդյունքում նախատեսված է եկամուտների շուրջ 130% աճի տեմպի ապահովում: Անհրաժեշտ եմ համարում նաև բյուջետային ու վարչական ռեսուրսները կենտրոնացնել Հայաստանի քաղաքացիների կյանքի որակը բարձրացնելու համար. հենց այսօրինակ մոտեցումը պետք է դրվի երկրի տնտեսական ուղեգծի հիմքում: Դա երաշխիք է՝ միջոցները ինքնահոս, առանց շոշափելի դարձարդյունքի մսխելու դեմ, դա ներդրում է մարդկային գործոնի մեջ, ուստիև Հայաստանի ապագա զարգացման գործին,

10. կրթության, բնակատեղիի ու առողջապահության ոլորտի զարգացման արդիական ու առաջնային խնդիրների լուծումը: Որպես պետական կարևորություն հռչակել այն հարցերի լուծման խնդրի հայտարարումը, որոնք անմիջականորեն ազդում են երկրի ժողովրդագրական իրավիճակի բարելավման վրա և, որոնք անհրաժեշտ մեկնարկային պայմաններ են ստեղծում մարդկային կապիտալը զարգացնելու համար:

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Պետության հիմնական գործառույթը շուկայական համակարգին համապատասխանող օրենսդրության մշակումն է, դրա անշեղորեն կենսագործման նպատակով համապատասխան պայմանների ապահովումը, շուկայական ինստիտուտների ձևավորմանն աջակցելը: Պետության գործունեության կարևորագույն ուղղություններից է նաև մրցակցային միջավայրի ստեղծումն ու խրախուսումը: Շուկա-

յի բնականոն գործունեության համար դրանք զգալիորեն ավելի կարևոր են, քան սեփականաշնորհումը: Այս համատեքստում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փոքր ու միջին բիզնեսի զարգացմանը և աճին նպատակաուղղված ակտիվ քաղաքականությունը:

Հատկապես պետք է իսպառ բացառել պետական չվճարումների հնարավորությունը, ներառյալ՝ որպես վճարման միջոց դրամական զանազան փոխարինիչների պարտադրումը: Կարևոր է, որ ազգային շահերին համապատասխան կարգավորելով բնական ռեսուրսների օգտագործման ուղղությունները, պետության կողմից կիրառվող գործիքները չսասանեն շուկայական մեխանիզմների գործունեության հիմքերը:

Միջոցները կենտրոնացնելով պետբյուջեում՝ կառավարությունը հնարավորություն է ստանում ապրանքների և ծառայությունների պետական գնումների միջոցով ուղղակիորեն ազդել արտադրական հզորությունների տեղաբաշխման վրա: Պետությունն իր տրամադրության տակ ունի նաև անուղղակի այլևայլ լծակներ՝ արտոնյալ հարկեր ու ակցիզներ, արտահանումը խրախուսելու միջոցառումներ, ներմուծումը սահմանափակող մաքսային տուրքեր: Դրանց շարքին կարելի է դասել և մրցունակ կառույցների ձևավորման ու արտասահմանյան արտադրական ներարկումների՝ դեպի մեր երկիր հոսքի ապահովման խթանիչներ, անհրաժեշտ պայմանների ստեղծում՝ խիստ սահմանափակ մեր բնական ռեսուրսները մանրազնին ընտրված արտադրական ուղղությունների վրա կենտրոնացնելու համար: Այս ամենը կնպաստի, որ հանրապետությունում իրականացվի տեխնոլոգիական ճեղքում:

Պետությունը պետք է երաշխավորի շուկայական տնտեսության մեջ «կոշտ» օրենքների գործողությունը, ինչը թույլ կտա բացառել գործունեության շատ այնպիսի տեսակներ, որոնք տեղ չեն գտնի նախապատվելիների թվում:

«Արարման ծրագրի» հայեցակարգերի համակարգում կենտրոնական տեղ է գրավում ինստիտուցիոնալ (համակարգային) և կա-

ռուցվածքային բարեփոխումների համալիրը, որը ենթադրում է մակրոտնտեսական ընդհանուր ստաբիլիզացիայի խրախուսում, տրանսֆերտային և դրամական քաղաքականության կայունություն:

Հայաստանի Հանրապետության կողմից ներկայումս իրականացման կարոտ ինստիտուցիոնալ բարեփոխումների կարևորագույն բաղադրիչներն են.

1. հարկային բարեփոխումներ և հարկային բեռի թեթևացում,

2. բյուջետային համակարգի բարեփոխումներ: Խոսքը վերաբերում է ոչ թե բյուջետային ծախսերի ձևական կրճատմանը, այլ բյուջետային սեկտորի (հատվածի) կառուցվածքային խորը բարեփոխումներ իրականացնելուն, ինչը կապահովի պետական միջոցների օգտագործման արդյունավետությունը,

3. տնտեսական գործունեության ապակարգավորում կամ, որ նույնն է, տնտեսական գործունեության պետական կարգավորման արդյունավետության բարձրացում: Խոսքը շուկա մուտք գործելու արգելապատնեշները նվազեցնելու, մասնավոր ձեռներեցության գրանցման, արտոնագրման և ձեռնարկատիրության գործունեության վերահսկման համակարգերի ու ներարկումային նախագծերի իրագործման պարզեցման մասին է,

4. մասնավոր սեփականության՝ ներառյալ մտավոր, երաշխիքների ապահովում, պետական սեփականության օգտագործման արդյունավետության բարձրացում,

5. մաքսային դրույքաչափերի նվազեցում և միօրինականացում,

6. ֆինանսական շուկայի և ֆինանսական հաստատությունների զարգացում: Առանձնահատուկ խնդիր է բանկային համակարգի հուսալիության և արդյունավետության բարձրացումը,

7. բնական մենաշնորհների բարեփոխում, ինչը ենթադրում է դրանց ներդրումային գրավչության բարձրացում, մենաշնորհային և մրցակցային հատվածների բաժանում՝ մեծացնելով վերջիններիս գործունեության թափանցիկությունը և մրցակցության խթանման առավելագույն հնարավորությունը,

8. սոցիալական աջակցության համակարգի բարեփոխում՝ չքա-

վորներին օգնելու նպատակով հանրապետությունում առկա պաշարների կենտրոնացման ուղղությամբ,

9. կենսաթոշակային համակարգի արդիականացում՝ Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամում կուտակման սկզբունքների կիրառմամբ:

## ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 1. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

*Ներկա իրավիճակը:*

Միջազգային կազմակերպությունների հետազոտությունների համաձայն [«Ֆրիդոմ Հաուզ» կազմակերպության 2006 թ. հրապարակած «Անցումային երկրները» զեկույց, «Գելափի» 2006 թ. կոռուպցիայի համաթիվ ուսումնասիրություն, 2006 թ. Համաշխարհային բանկի հրապարակած «Կոռուպցիայի դեմ պայքարը անցումային տնտեսությամբ երկրներում (երկրորդ հաշվետվություն)]» արձանագրվել է, որ, չնայած 2003 թ. Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի մշակմանը ու 2004 թ. Կոռուպցիայի դեմ պայքարի բարձրաստիճան խորհրդի ստեղծմանը, իրավիճակը Հայաստանում, կոռուպցիայի բազմաթիվ բաղադրիչների առումով, դարձել է ավելի վատ, քան 2002 թ.: Մասնավորապես, ինչպես վերն ասվեց, «Թրանսփարենսի ինթերնեյշնլ-Հայաստան» հասարակական կազմակերպության կողմից 2006 թ. անցկացված հարցման արդյունքներով (հարցումը ներառել է 1500 պատահականորեն ընտրված տնային տնտեսություն) ակնհայտ է դարձել, որ Հայաստանում կոռուպցիայի տարածմանը հիմնականում նպաստում են պետական պաշտոնյաները, և որ այն մեծապես առկա է երկրի կառավարման համակարգի բարձր մակարդակում: Հարցվածներն առավել կոռումպացված պետական ինստիտուտներ են ճանաչել ՀՀ նախագահի, կառավարության և նախարարների ինս-

տիտուտները, շատ մտահոգիչ են դատախազական համակարգին տրված գնահատականները: Խոր տագնապ է հարուցում նաև այն, որ հարցվածների մեծ մասը որպես ամենակոռումպացված նշել է ընտրական համակարգը և հարկային ծառայությունը: Հարցումները, որն անցկացվել են ՀՀ-ում 2007 թ. դեկտեմբերի 1-ից 8-ը «Գելափի» վերլուծական-սոցիոլոգիական կենտրոնի մասնակցությամբ, վկայում են, որ ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը շարունակում է խիստ մտահոգ լինել երկիրը ճարակած կոռուպցիայի, անօրինականությունների բազում դրսևորումներով:

Կոռուպցիայի դեմ պայքարը մշտապես համարել և համարում եմ ազգային անվտանգության ապահովման գլխավոր խնդիրներից մեկը: Պետական ապարատի կոռումպացվածությունը, իմ կարծիքով, իրական վտանգ է դառնում հայոց պետականության կենսունակության համար: Կոռումպացվածությունը հիմնականում հետևանք է իշխանությունների քաղաքական կամքի բացակայության, ինչպես և վերջիններիս կոռուպցիայի աղբյուր լինելու հանգամանքով: Հասարակական այդ չարիքը մեծապես պայմանավորված է ընտրական ողջ համակարգի զանգվածային կոռումպացվածությունից, ընտրական համակարգ, որն էլ ձևավորում է իշխանություն:

Գտնում եմ, որ կոռուպցիայի դեմ առաջին հերթին պայքար պետք է ծավալվի պետական ապարատում: Խորը մտահոգություն է առաջացնում և այն իրողությունը, որ տեղական իշխանությունները, կաշառելով շարքային քաղաքացիներին և դրանով իսկ վերջիններիս դարձնելով նույնպես կոռումպացված, նրանց զրկում են իրենց քաղաքացիական պարտքը ինքնուրույն կատարելու հնարավորությունից, այն է՝ սեփական համոզմունքներով մասնակցել ընտրություններին, մասնակից լինել պետական մարմինների ձևավորմանը:

Երկրի դինամիկ զարգացման կարևորագույն պայմաններից մեկը համարում եմ լեգիտիմ ընտրված ՀՀ նախագահի կողմից հակակոռուպցիոն հետևողական քաղաքականության իրականացումը: Դրա հիմքում պետք է դրվի պետության, հասարակության կողմից բազմակողմանի ու նպատակասլաց միջոցառումների մշակումը և իրականա-

ցումը՝ կյանքի տարբեր ոլորտներում կոռուպցիայի պատճառների ու պայմանների նվազագույնի հասցման և վերացման նպատակով:

Հակակոռուպցիոն գործառույթի իրականացումը համարում եմ պետության առաջնային խնդիրներից մեկը: Դրա լուծումը ենթադրում է այնպիսի մեխանիզմների ստեղծում, որոնք թույլ կտան կարճ ժամանակահատվածում նվազեցնել այդ չարիքի չափերը, մշակել և իրագործել հակակոռուպցիոն քաղաքականություն՝ որպես պետության մշտապես գործող կենսական նշանակություն ունեցող գործառույթներ:

Հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական ուղղությունները հետևյալներն են.

- քրեածին տարրերի՝ Ազգային ժողով ներթափանցելուն նպաստող պայմանների հետևողական վերացում, նրանց կողմից օրենքների ընդունման վրա ազդեցության զգալի սահմանափակում,
- օրենսդրական հիմքի ստեղծում՝ հասարակության կողմից գործադիր իշխանության մարմինների գործունեության վերահսկելիությունն ու թափանցիկությունն ապահովելու համար,
- պետական և քաղաքացիական ծառայությունների սկզբունքների փոփոխություն՝ կատարողական գործառույթների և պաշտոնական կարգավիճակի հստակ սահմանում՝ նրանց գործունեության խիստ ու վերահսկելի պայմանների ստեղծման ճանապարհով: Պայմաններ, որոնք թույլ չեն տա պաշտոնատար անձանց զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ իրենց պետական լիազորությունների կատարման ժամկետի ընթացքում,
- բյուջետային միջոցների բաշխման և ծախսման արդյունավետ վերահսկման համար թափանցիկ համակարգի ստեղծում,
- վարչական ու քրեական պատասխանատվության խստացում՝ հանցագործ ճանապարհով կուտակված եկամուտների քողարկման և լեգալացման համար,

- պատգամավորների և պետական ծառայողների սեփականության շարժընթացը վերահսկող օրենսդրական բազայի կատարելագործում,
- Հայաստանի քաղաքացիների շրջանում կրթության բոլոր համակարգերում հակակոռուպցիոն աշխարհայացքի ձևավորում՝ այդ խնդրի լուծմանը լայնորեն ներգրավելով հեռուստատեսությունն ու ռադիոն,
- կյանքի տարբեր ոլորտներում, ամենօրյա գործունեության մեջ մեծապես ապահովել փոքր և միջին բիզնեսի ձեռներեցների ներգրավումը հակակոռուպցիոն ծրագրերի ու պետական հակակոռուպցիոն քաղաքականության մեջ:

## 2. ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

*Ներկա իրավիճակը:*

Վերջին տարիներին Հայաստանի էկոնոմիկայում նկատվում են անառողջ միտումներ: Այսպես, 2006 թ. արդյունքներով նվազել են արդյունաբերական արտադրության ծավալները (99,1%՝ 2005 թ. մակարդակից), էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները (94,1%՝ 2005 թ. մակարդակից) և այլն: Այդ վտանգավոր միտումները շարունակվել են նաև 2007 թ. հունվար-սեպտեմբերին, երբ արդյունաբերական արտադրանքի ծավալը առանց էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման կազմել է 2006 թ. նույն ժամանակաշրջանի ընդամենը 104,1%-ը, իսկ էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ 98,9%: Շինարարության աճի բարձր տեմպերը, որ գրանցվել էին 2005-2006 թթ. (համապատասխանաբար 134 և 139,8%), 2007 թ. հունվար-սեպտեմբերին կրճատվել են ավելի քան 4 անգամ: Դրա հետ մեկտեղ հարկ է նշել, որ բնակարանային շինարարությունը, ըստ էության, ոչ միայն չի թեթևացնում ազգաբնակչության բնակարանային խնդիրների լուծումը, այլև ավելի է սրում հասարակության մեջ սոցիալական լարվածությունը: Հայաստանի քաղաքացիները շատ հստակ պատկերացնում են, որ «ընտրյալների

դասի» համար կատարվող բնակարանային այդ շինարարությունը որպես կանոն ունի ֆինանսավորման անօրեն աղբյուրներ, և որ բնակարանային շինարարությունը դարձել է ոչ այլ ինչ, քան «կեղտոտ» փողերի, անաշխատ եկամուտների քողածածկույթ:

Չի զարգանում գյուղատնտեսությունը, շարունակում է բնակչության արտահոսքը գյուղական, հատկապես հանրապետության սահմանամերձ և բարձրլեռնային շրջաններից: Այս գործընթացն ուղեկցվում է զգալի տարածքների և գյուղատնտեսական հանդերի անապատացմամբ:

Առանձնակի մտահոգիչ իրավիճակ է ստեղծվել արտաքին առևտրում: Այսպես, 2006 թ. առևտրային բացասական հաշվեկշռի աճի տեմպը 2005 թ. նկատմամբ կազմել է 131,1%, ընդ որում, Հայաստանից ապրանքների արտահանումն այդ նույն ժամանակահատվածում նվազել է 21 մլրդ 187 մլն դրամով, իսկ ներմուծվող ապրանքների աճի տեմպը կազմել է 142,8%: Նման տագնապահարույց զարգացումներ են արձանագրվել նաև 2007 թ. հունվար-սեպտեմբերին: Այսպես, առևտրային բացասական հաշվեկշռի աճի տեմպը 2006 թ. հունվար-սեպտեմբերի համեմատ կազմել է 164,56%, ներմուծման աճի տեմպը 2007 թ. հունվար-սեպտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ կազմել է 145,7%:

Երկրի էկոնոմիկան զրկվել է զարգացման տեսանելի հեռանկարից: Տնտեսական ինֆրակառուցվածքի հետամնացության մասին է վկայում Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ի ընդհանուր ծավալի մեջ բարձր տեխնոլոգիական արտադրանքի ծայրահեղ ցածր տեսակարար կշիռը:

Հաշվի առնելով տնտեսական իրողությունները և տարածաշրջանային տնտեսական խոշոր նախագծերից Հայաստանի ամբողջովին օտարումը (Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատար, Բաքու-Թբիլիսի-Էրզերում գազատար, Կարս-Ախալքալաք-Թբիլիսի-Բաքու երկաթգիծ)՝ անհրաժեշտ եմ համարում նոր տնտեսական կուրսի մշակում, որը նպատակ կունենա մակրոտնտեսական բարենպաստ պայմաններ ստեղծել հայրենական արտադրության մրցունակության զար-

գացման, հասարակական-հանրօգուտ խոշորածավալ աշխատանքների կազմակերպման և իրականացման համար՝ հանրապետության բնակչության լայն շերտերի ներգրավմամբ (ճանապարհների, մատչելի կացարանների, բուժհիմնարկների, մշակութային նշանակության օբյեկտների շինարարություն, շահագործումից դուրս եկած գյուղատնտեսական հանդերի վերականգնում): Այդ քաղաքականության հիմնարար նպատակներից մեկը պետք է դառնա Հայաստանի Հանրապետություն ապրանքների ներմուծումափոխարինման համար արտոնյալ պայմանների ստեղծումը, գիտատար և քիչ էներգատար արտադրությունների լայն ներդրումը: Ապրանքաշրջառության մեջ տարեցտարի ավելացող ներմուծման մասնաբաժինը մեծապես պայմանավորված է նրանով, որ անկախության հռչակումից հետո Հայաստանում այս ոլորտում վարվել է սեփական ապրանքարտադրողի շահերն անտեսող արատավոր քաղաքականություն: Ազգային տնտեսական քաղաքականության բացակայության հետևանք է տնտեսական և սոցիալական ծանր իրավիճակը, որում արդեն 17 տարի է, ինչ գտնվում է հանրապետությունը: Գլոբալիզացման պայմաններում բացառիկ արդիականություն է ստանում տնտեսական գերակայությունների և դրանց հիմքի վրա Հայաստանի զարգացման ռազմավարության մշակման հրամայականը:

Նոր տնտեսական քաղաքականության գլխավոր բաղադրիչները պետք է դառնան՝ գործող հարկային համակարգի արմատական վերափոխումը, հասարակական խիստ վերահսկողությունը բնական պաշարների օգտագործման և արտահանման նկատմամբ, ներքին պահանջարկի աճը և, որպես դրա հետևանք, հայրենական արտադրության զարգացման խրախուսումը, տեղական արտադրողների համար ազատ և արդար մրցակցային միջավայր ապահովելու անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

Նոր տնտեսական կուրսի իրականացման կարևորագույն պայմաններից մեկը համարում եմ հասարակ մարդկանց և ձեռներեցների վստահության վերականգնումը պետական ինստիտուտների նկատմամբ: Դրան կարելի է հասնել կառավարության գործողու-

թյունների կանխատեսելիության, էկոնոմիկայի վիճակի անկողմնակալ գնահատման, իրական բյուջեի կազմման, պետության կողմից եղած պաշարների թափանցիկ օգտագործման, ներդրողների հետ ազնիվ և կայուն հարաբերությունների կառուցման ճանապարհով:

Նոր տնտեսական քաղաքականության հիմնական ուղղություններն են.

*1. դրամավարկային քաղաքականության բնագավառում* հրատապ լուծում պահանջող հիմնական խնդիրը համարում եմ դրամական զանգվածի և ՀՆԱ-ի այնպիսի բալանսը, որի պարագայում հնարավոր կլինի.

- զգալիորեն նվազեցնել վարկավորման տոկոսադրույքները և արտոնյալ պայմաններ ստեղծել էկոնոմիկայի իրական հատվածի վարկավորման, հատկապես պետության մասնակցությամբ ներմուծումը փոխարինող արտադրությունների զարգացման համար,
- ապահովել տնտեսության բնականոն գործունեության համար անհրաժեշտ դրամական զանգվածի քանակություն, որը կբացառի ինչպես նրա փոխարժեքի տնտեսապես չհիմնավորված բարձրացումը, այնպես էլ կերաշխավորի ազգային դրամի կայունությունն ու կանխատեսելիությունը: Դա բարենպաստ պայմաններ կստեղծի ինստիտուցիոնալ և կառուցվածքային որակական փոփոխությունների համար, աջակցություն ցույց կտա ագրարային և արդյունաբերական հատվածներին, հատկապես տնտեսության այն ճյուղերին, որոնք մասնագիտացած են ապրանքների արտահանման ոլորտում: Ես գիտակցում եմ, որ այդպիսի մոտեցումը ենթադրում է ֆիսկալ քաղաքականության մեղմացում, որը կարող է դառնալ գնաճի տեմպի բարձրացման պատճառ: Սակայն նշեմ, որ երբ համախառն ներքին արտադրանքի աճի տեմպը գերազանցում է դրամական զանգվածի աճի տեմպին, ինչպես նաև՝ ապրանքային զգալի զանգվածի ստվերից դուրս բերելու պայմաններում (մասնագետների կարծիքով՝

ստվերում է գտնվում ՀՆԱ-ի մինչև 40 %-ը) գնաճը և դրամի հնարավոր արժեզրկումն այս դեպքում դառնում է վերահսկելի ու վտանգավոր չէ:

Հավելեմ, որ ՀՀ կենտրոնական բանկը հաճախ չհիմնավորված դրամական զանգվածի զգալի սեղմման հիման վրա դրամավարկային կոշտ քաղաքականությունն արդարացնում է գնաճը կանգնեցնելու ձգտումով: Նման քաղաքականությունը հանգեցրել է էլ ավելի վտանգավոր երևույթի՝ թաքնված ինֆլյացիայի, որը ծայրահեղորեն բացասաբար է անդրադառնում քաղաքացիների կենսամակարդակի վրա: Այս եզրակացությունը հաստատվում է 2006 թ. պարենային և սպառողական նվազագույն զամբյուղների արժեքների՝ 2005 թ. համեմատությամբ զգալի աճի փաստով (համապատասխանաբար՝ 111,6% և 106,1%): Այդ միտումը շարունակվել է նաև 2007թ. հունվար-սեպտեմբերին, երբ արձանագրվել է պարենային նվազագույն զամբյուղի 119,7%-ի, սպառողական նվազագույն զամբյուղի 103,7%-ի աճի տեմպ (2006թ. նույն ժամանակաշրջանի համեմատ), դա էլ այն պարագայում, երբ դրամը արժևորվել է 122,8%-ով: Ստեղծված իրավիճակը հիմնովին հերքում է գնաճի, իբր, ցածր մակարդակի վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից բազմիցս հնչեցված հայտարարությունները: Անհրաժեշտ է հատուկ նշել, որ քաղաքացիների կենսաապահովման նվազագույն զամբյուղների գների աճն արձանագրվել է դրամի փոխարժեքի, կրկնում եմ,122,8% աճի տեմպի պայմաններում: Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ գտնում եմ, որ արդիական խնդիր է դառնում մշակել և իրականացնել ծրագրեր, որոնք կապահովեն տնտեսական բազմապատկչի (մուլտիպլիկատորի) էֆեկտ: Դրա իմաստն այն է, որ տնտեսապես հիմնավորված ներդրումների ժամանակ տնտեսության մեջ ներդրված ամեն մի դրամը կարճ ժամանակահատվածում երաշխավորում է գումարային արտահայտությամբ արտադրության այնպիսի աճի տեմպ, որը անգամներով (պայմանավորված բազմապատկչի մեծությամբ) գերազանցում է ներդրված գումարների ծավալը: Այդպիսի հաջողված օրինակներն աշխարհում բազմաթիվ են, հատկապես,

եթե համահունչ ու սերտորեն փոխկապակցված են տնտեսության զարգացման ռազմավարական ընդհանուր ծրագրի և դրանում ներառված ենթահամակարգերի հետ:

*2. Հարկային քաղաքականության բնագավառում* անհրաժեշտ եմ համարում այնպիսի մոտեցումների ձևավորումը, որոնց հիմքում դրված է արտահանվող արտադրանքի, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության և ինովացիոն ձեռներեցության խրախուսման անհրաժեշտություն՝ հարկային բեռի հետևողական նվազման, հարկային վարչարարության որակական բարելավման պարագայում:

Անհրաժեշտ է նաև հետևողականորեն փոխել հարկային քաղաքականության հիմնական ուղղությունը՝ նկատի ունենալով հարկային բեռի տեղափոխումը անուղղակի հարկերից դեպի ուղիղ հարկեր: Անթույլատրելի եմ համարում, երբ ուղիղ հարկերի (շահութահարկ և եկամտահարկ) տեսակարար կշիռը 2006 թ. երկրի բյուջեում կազմել է հարկային եկամուտների 23 %-ը՝ զգալիորեն զիջելով անուղղակի հարկերի տեսակարար կշռին (օրինակ, 2006 թ. ավելացված արժեքի հարկի տեսակարար կշիռը կազմել է 37,7%): Այդ միտումները, ըստ էության, ամրագրվել են նաև 2008 թ. ՀՀ պետական բյուջեում, որի կատարման արդյունքում ուղղակի հարկերի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում կազմելու է 23,9%, ավելացված հարկի տեսակարար կշիռն էլ բյուջետային եկամուտներում կազմելու է 33,2%, ցուցանիշ, որը զգալիորեն գերազանցում է ուղղակի հարկերի տեսակարար կշիռը, ինչը և մտահոգիչ է:

Հարկային քաղաքականության այսպիսի վերակողմնորոշումը արդիական է դարձնում հարկային և մաքսային մարմինների աշխատակիցների աշխատանքի արդյունավետության չափորոշիչների մշակման խնդիրը՝ հաշվի առնելով ոչ միայն նրանց կողմից հարկեր ու մաքսային տուրքեր հավաքելու ծրագրերի կատարումը, այլ նաև հարկային ու մաքսային օրենսդրության պահպանման, հաշվարկների ճշգրտության, հարկերի և մաքսային տուրքերի ժամանակին վճարման վերահսկողության կատարման որակը: Այսպիսի մոտեցումը ենթադրում է նաև հարկային ու մաքսային մարմինների աշխա-

տակիցների նյութական խրախուսման ժամանակակից մեխանիզմների ներդրում, որոնք հաշվի կառնեն նրանց աշխատանքի համապատասխանությունը նշված չափորոշիչներին:

Որակապես նոր հարկային քաղաքականություն վարելու արդիականությունը մեծապես պայմանավորված է նրանով, որ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայում վտանգավոր չափերի է հասնում տնտեսավարող սուբյեկտների զգալի մասի ստվերում գործելու հանգամանքը: Տնտեսավարող սուբյեկտները զանգվածաբար չեն կատարում փոխադարձաբար ստանձնած պարտավորությունները և, դրա հետ մեկտեղ, տարիներով շարունակում են հարկային օրենսդրությունը շրջանցող գործունեություն: Ստեղծված իրավիճակը հետևանք է այն բանի, որ նրանց միջավայրում փաստացի ձևավորված բարքերն ու մոտեցումները հիմնովին տարբերվում են գործող օրենքներից: Այսպես, միայն 2005-2006 թթ. պետական շահագրգիռ կառույցների հայցերով դատարանների վճիռներով պետբյուջե և Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ պետք է գանձվեր համապատասխանաբար 25 մլրդ 803 մլն և 18 մլրդ 715 մլն դրամ, որը, սակայն, վերականգնված չէ: Այդ միտումը փոքր-ինչ մեղմվել, սակայն շարունակվել է նաև 2007 թ. 9 ամիսների կտրվածքով, երբ բյուջեի օգտին չվերականգնված գումարը կազմել է 4 մլրդ 849 մլն դրամ, ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի օգտին՝ 422 մլն դրամ: Գործերի նման իրավիճակը համոզիչ վկայում է, որ Հայաստանում առկա հարկային համակարգը չի համապատասխանում տնտեսավարման ժամանակակից պահանջներին: Դրա ձևավորման ժամանակ, կտրվելով ներկայիս իրողություններից, ելակետային նախադրյալ էր ընդունվել վճարման բարձր կարգապահության անվերապահ կատարումը, տնտեսավարող սուբյեկտների ֆինանսների թափանցիկությունը և դրանց վերահսկողության պատշաճ մակարդակը հարկային մարմինների կողմից: Հանրապետությունում նշված նախադրյալների բացակայության պարագայում հարկային համակարգը, ըստ էության, դարձել է օրինապաշտ հարկատուների պատժման, իսկ «ստվերայինների» և

«կլանականներ» խրախուսման միջոց: Նկատի ունենալով դա՝ անհրաժեշտ է արմատապես թեթևացնել հարկային բեռը, ինչը կխրախուսի տնտեսական աճը: Միաժամանակ հարկ է վարչատնտեսական անհետաձգելի միջոցներ ձեռնարկել էկոնոմիկայի զգալի մասը ստվերից հանելու համար, հակառակ դեպքում հարկային մուտքերը բյուջե զգալիորեն կնվազեն, որն էլ խիստ բացասաբար կանդրադառնա երկրի տնտեսության վրա:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ անհրաժեշտ է ելնել այն նախադրյալներից, թե տնտեսավարող սուբյեկտի համար ինչն է ավելի իրատեսական: Վճարել, թե չվճարել հարկերը՝ անբարեխիղճ հարկատուն որոշելու է՝ ելնելով կիրառվող տույժի և օրենքով նախատեսված վճարելիք հարկերի չափի համամասնությունից: Օրինապաշտ հարկատուի ծախսերը՝ հարկային բարձր տոկոսադրույքների պատճառով չափազանց մեծ են, իսկ հարկերից խուսափողների համար հայտավորված տույժերը իրականում չունեն անհրաժեշտ ներգործություն, ինչը պայմանավորված է պատժամիջոցների կիրառման ցածր հավանականությամբ ու այս ոլորտում առկա կոռուպցիայի դրսևորումներով:

Շահութահարկի տեսանկյունից տնտեսավարող սուբյեկտի համար կարևոր է ոչ այնքան շահութահարկի դրույքաչափը, որքան իրավունքը՝ նվազեցնել հարկվող բազան ռեալ ներդրումային ծախսերի չափով: Ծախսերի կառուցվածքի ազատականացումը շահութահարկի հաշվարկման համար զգալիորեն կնպաստի Հայաստանի տնտեսությունում ներդրումային պայմանների բարելավմանը:

Եկամտահարկի մասով անհրաժեշտ է անցում կատարել դեպի եկամտահարկի միասնական դրույքաչափին, միաժամանակ մտցնելով բարձր չհարկվող նվազագույնը, որը վճարողներին թույլ կտա էապես իջեցնել հարկային վճարումների չափը: Այստեղ սկզբունքորեն կարևոր է չմեծացնել շարքային հարկատուների հարկային բեռը:

Սոցիալական վճարումների մասով անհրաժեշտ է գործատուների հարկային դրույքաչափերը աստիճանաբար մոտեցնել աշխատող-

ներից գանձվող դրույքաչափերին՝ նկատի առնելով ներկայիս իրողությունները, երբ որքան մեծ է եկամուտը, այնքան նրա ավելի շոշափելի մասն է գնում ստվերային ոլորտ և, համապատասխանաբար, ավելի պակաս է վճարվում հարկերի տեսքով: Անհրաժեշտ է նաև անցում կատարել բացառապես հասցեագրված սոցիալական վճարումներին, երբ աշխատողների անհատական կենսաթոշակային հաշվին պետք է նստի աշխատավարձի հարկվող դրույքի կեսից ոչ պակասը: Միայն այդ դեպքում դրանք կարող են դիտվել ոչ թե պետության կողմից դրված սոցիալական հարկեր, այլ որպես հենց իրենց՝ աշխատողների ապագա եկամուտներ: Դրանով, կարծում եմ, զգալիորեն կթուլանա «սև» աշխատավարձ ստանալու հիմնական պատճառներից մեկը: Իրավիճակն անհնար է ուղղել միայն պատժամիջոցներով, ընդսմին, առաջարկվում է այս մոտեցումը, որը կխրախուսի ստվերային ոլորտից օրինականին անցումը: Անհրաժեշտ եմ համարում տնտեսավարող սուբյեկտների համար տնտեսական և իրավական պայմանների ստեղծում՝ դրանց ստվերից հանելու նպատակով: Այս խնդրի լուծումը հնարավոր է հարկային համաներում հայտարարելու միջոցով, որի պարագայում տնտեսավարող սուբյեկտների համար հարկային վճարները չեն գերազանցի 15%-ը: Ստվերից դուրս գալը պետք է դառնա ավելի շահեկան, քան հարկային օրենքների շրջանցումը:

Կարևոր բաղադրիչ եմ համարում երկարատև, հետևողական կոշտ կանխարգելիչ աշխատանքների իրականացումը հարկերից խուսափողների նկատմամբ, որը պայմանավորված կլինի հարկային և իրավապահ մարմինների գործունեության ակտիվացմամբ: Նման ակտիվությունը կարող է բերել հարկահավաքության որոշակի աճի միայն այն դեպքում, եթե մասնավոր բիզնեսը համոզվի, որ դա մեկանգամյա գործողություն չէ: Այստեղ խոսքը ոչ թե գործարար որոշակի շրջանակների հետ հաշիվ մաքրելու մասին է, այլ պարբերաբար իրականացվող միջոցառումների: Ուստի, նման միջոցառումները, ի սկզբանե, պետք է վերաբերեն էկոնոմիկայի բոլոր ոլորտներին և քաղաքական տարբեր դիրքորոշման պատկանող անձանց:

Այսպիսի միջոցառումներ պետք է իրականացվեն ինչպես խոշոր բիզնեսի, որն ակտիվորեն օգտագործում է միջնորդական կառույցները գործարքների համար՝ նպատակ ունենալով խուսափել հարկերի վճարումից, յուրացնել արտահանման հատկացումները, դեպոզիտային-ապահովագրական զանազան ծրագրերը և այլն, այնպես էլ փոքր ու միջին բիզնեսի նկատմամբ, որոնք, ձգտելով խուսափել հարկերի վճարումից, օգտագործում են բացառապես չհաշվառված կանխիկ շրջանառությունը: Ընդսմին, չհաշվառված կանխիկ շրջանառության դեպքում հիմնական ուշադրությունը պետք է բևեռել թե՛ հարկատու տնտեսավարող սուբյեկտների վերահսկողության, և թե՛ չհաշվառված կանխիկ շրջանառություն կազմակերպող բանկերի ու ֆինանսական ընկերությունների նմանօրինակ գործունեության կանխարգելման վրա:

Հարկերից խուսափողների հետ տարվող կանխարգելիչ աշխատանքն անհրաժեշտ է զուգակցել բոլոր մակարդակներում գտնվող պաշտոնատար անձանց շրջանում կոռուպցիայի դեմ պայքարի հետ: Դա հատկապես հրատապ է, քանի որ փոքր և միջին բիզնեսով զբաղվողների համար կաշառքների չափերը երբեմն համադրելի են չվճարված հարկերի գումարների հետ: Պարզ է, որ և՛ կաշառքները, և՛ հարկեր վճարելու անհրաժեշտությունը կհանգեցնի վերջիններիս գործարար ակտիվության նվազեցմանը՝ այստեղից բխող տնտեսական և սոցիալական բնույթի նեգատիվ բոլոր հետևանքներով:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել հարկային ժամանակավոր արտոնությունների համակարգի ձևավորման վրա՝ սեփականաշնորհվող և նոր կազմավորվող ձեռնարկությունների գործունեությունը խթանելու նպատակով, ուշադրությամբ և պետական հոգածությամբ շրջապատել ինովացիոն ուղղվածության նախագծերի կենսագործումը: Միաժամանակ պետք է ընդունվեն հարկային այնպիսի մեխանիզմներ, որոնք կպարտավորեցնեն սեփականաշնորհված ձեռնարկությունների սեփականատերերին գործարկել արտադրությունը կամ հրաժարվել տվյալ սեփականությունից՝ վաճառելու կամ պետությանը վերադարձնելու ճանապարհով: Խոսքն ամենից

առաջ գույքահարկի և ժամանակի ընթացքում աճող հարկավորման մասին է: Քաջ հայտնի է, որ արդյունաբերական ոլորտի ձեռնարկություններից շատերի վերագործարկմանը մեծապես խանգարում են նաև նախորդ ժամանակաշրջաններում կուտակված մեծ պարտքերը: Խնդրի լուծումը պարտքերի վճարման հետաձգման մեջ է՝ դրանք որպես պետական երկարաժամկետ վարկ վերաձևակերպելով, եթե ներկայացվի արտադրության թողարկման հստակ ծրագիր: Դա հնարավորություն կտա առավել արդյունավետ իրականացնել կարևորագույն մի շարք խնդիրներ. շոշափելիորեն կրճատել ստվերային տնտեսության ծավալները, գործարկել նոր հզորություններ և դրա հիման վրա զգալիորեն ավելացնել բյուջեի եկամտային մասը, շոշափելիորեն մեղմացնելով սոցիալական լարվածությունը՝ բնակչության անապահով և նվազ ապահով խավերի սոցիալական վիճակի բարելավմամբ: Դա, իր հերթին, դրական ազդեցություն կունենա հասարակության և հարկային մարմինների միջև բնականոն ու գործընկերային հարաբերություններ ստեղծելու վրա:

*3. Ներդրումային քաղաքականության բնագավառում.* տագնապալի եմ համարում հանրապետության էկոնոմիկայի մեջ ներդրումների կրճատման միտումը: Ինձ անհանգստացնում է, որ 2006 թ. 9 ամիսների ընթացքում ուղղակի ներդրումները կազմել են ընդամենը 195,62 մլն դոլար, ինչը հավասար է Ադրբեջանի էկոնոմիկայի մեջ 20 օրվա ընթացքում իրականացվող ներդրումներին: Դրական համարելով «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի շրջանակում ՀՀ-ում իրականացված 235 մլն դոլարի ներդրումների ավարտը, հարկ եմ համարում համաշխարհային ֆինանսական կազմակերպություններին ներկայացնել հեռանկարային այնպիսի ծրագրեր, որոնց կատարումը խոստանում է կարճ ժամանակաշրջանում ծախսված գումարների հավելյալ փոխհատուցում: Հաշվի առնելով, որ առանց նպատակային ներդրումների անհնար է ակնկալել տնտեսական զգալի աճ, անհրաժեշտ է մշակել նաև օրենսդրական, ինստիտուցիոնալ, հարկային, իրավական միջոցառումների համակարգ՝ Հայաստանի տնտեսությանը ներդրումային գրավչություն հա-

ղորդելու նպատակով: Անհրաժեշտ է իրականացնել վարկավորման դրույքաչափի մակարդակի հետևողական նվազեցման քաղաքականություն, զուգահեռաբար խրախուսել գործարարների հետաքրքրությունը ստացված եկամուտներն արտադրության մեջ ներդնելու նպատակով: Դրա համար պետք է իրականացնել արդյունավետ սեփականատիրոջ ձևավորմանն ուղղված պետական քաղաքականություն: Սեփականատեր, որը շահագրգռված կլինի իր ձեռնարկության հեռանկարային զարգացման մեջ: Հարկային օրենսդրությունը պետք է նպատակաուղղված լինի ներդրումների խրախուսմանը, հարկային արտոնությունների ներդրմանը, խոշոր ներդրողների համար կայունության երաշխիքների ապահովմանը, ընդ որում կարևոր է առաջնահերթության կարգով խրախուսել տեղական ներդրողներին: Դրականորեն գնահատելով մրցակցային միջավայրի ստեղծումը (արտաքին ապրանքարտադրողների մասնակցությամբ) հայրենական արտադրողների համար՝ նաև անհրաժեշտ է, որ պետությունն իրականացնի հովանավորչական քաղաքականություն, ինչը ոչ միայն կկանգնեցնի հայրենական արտադրության կրճատման տագնապահարույց միտումները, այլև մեծապես կխրախուսի այն ու կհավասարակշռի վտանգավոր չափերի հասնող ներմուծումը: Առանձնահատուկ նշանակություն պետք է տրվի այն միջոցառումներին, որոնք խրախուսելու են հումք և կիսաֆաբրիկատներ արտադրող հայրենական ձեռներեցների անցումը վերջնական արտադրանքի թողարկման:

Հատուկ տեղ պետք է հատկացնել չափազանց ցավոտ հարցի՝ սեփականաշնորհման ընթացքում թույլ տրված սխալների և չարաշահումների ուղղման անհրաժեշտությանը: Հարց է առաջանում, ինչպե՞ս: Կարծում եմ, որ սեփականաշնորհված ձեռնարկությունների ազգայնացումը կհանգեցնի տնտեսական և սոցիալական էլ ավելի ծանր հետևանքների, քան ներկայումս է: Խնդիրը պետք է լուծել ցածր հարկերի, չվճարումների հանգուցալուծման, փոխադարձ հաշվանցումների ծավալների կրճատման միջոցով: Դա պահանջում է անհատական մոտեցում ամեն մի առանձին արտադրության

նկատմամբ: Սակայն հարցի էությունն այն է, որ եթե սեփականատերը չի կարողանում վարձատրել աշխատողներին, ապա տնտեսական և ֆինանսական առողջացման համար այդպիսի ձեռնարկության նկատմամբ պետք է կիրառել այնպիսի հայտնի լծակներ, ինչպիսիք են անվճարունակ ճանաչելու մեխանիզմի ներդրումը և սանացիան (առողջացումը), որոնց միջոցով կիրականացվի ձեռնարկության հանձնումը մեկ այլ սեփականտիրոջ, որը կկարողանա կազմակերպել տվյալ արտադրության աշխատանքը՝ վճարելով պետական հարկերը և աշխատավարձերը: Դա միակ ճանապարհն է, որը թույլ կտա կարճ ժամկետներում շտկել հիմնական թերությունները ու փոխհատուցել այն կորուստները, որոնք կրել է հասարակությունը վերջին տարիներին:

*4. Բյուջետային քաղաքականության բնագավառում.* վերջին տարիներին բյուջետային ծախսերի բնագավառում երկրում իրականացվում է արատավոր քաղաքականություն, մասնավորապես.

- գործնականորեն նախատեսված չեն ֆինանսներ անվճարունակ ձեռնարկությունների վերակազմավորման, դրանց առողջացման և նոր աշխատատեղերի ստեղծման համար,
- իրական միջոցներ չեն ձեռնարկվում զանգվածային չվճարումները արմատախիլ անելու ուղղությամբ,
- հատկացումների կառուցվածքում դոտացիոն կարևորագույն հատվածներում շարունակում են գերակայել աշխատավարձի ծախսերը, ինչպես նաև ձեռնարկությունների սոցիալական ինֆրակառուցվածքի պահպանմանն ուղղված դրամական միջոցները,
- մշակված չեն էկոնոմիկայի զարգացման ռազմավարական ուղղությունները և առաջնահերթությունները, որտեղ պետք է հաշվի առնված լինեն գլոբալիզացիայի մարտահրավերները, սահմանված չեն տնտեսական գերակայությունները և կարգավորված չէ առողջապահության, սոցիալական ոլորտի, կրթության, գիտության ու մշակույթի գերակա ֆինանսավորման համակարգը,

- դեռևս աննշան է ինստիտուցիոնալ վերափոխումների հետ կապված բյուջետային ծախսերի տեսակարար կշիռը,
- լրիվ չափով չի ապահովվում բյուջեի ծախսային մասի կատարումը՝ առանձին հոդվածների գծով:

Բյուջետային քաղաքականության մեջ գլխավոր և առաջնահերթ խնդիրը համարում եմ մեր կողմից առաջարկվող ազգային ծրագրերի և պետական նախագծերում նշված ու առաջադրված խնդիրների լուծման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու գործը: Սկզբունքորեն սխալ եմ համարում նկատվող այն քաղաքականությունը, երբ կառավարությունը բյուջետային պակասուրդի ֆինանսավորման ապահովմանը փորձում է հասնել բացառապես հարկային բեռն ավելացնելու և բյուջետային ֆինանսավորման ծավալները կրճատելու ճանապարհով: Լուրջ վերանայման է կարոտ բյուջեի ծախսային մասի կառուցվածքը: Առաջնահերթ խնդիրներից մեկն է ապահովել բյուջետային այն ծախսերի եռապատկումը, որոնք կուղղորդվեն աղետի գոտու բնակարանային և սոցիալ-մշակութային կառույցների շինարարությանը: Բյուջետային ծախսերի ավելացումը պետք է կատարվի այն հոդվածներով, որոնք հետագայում ռեալ հատուցում կտան: Բյուջետային քաղաքականության գերակա ուղղությունները պետք է դառնան աջակցությունը փոքր և միջին ձեռներեցությանը, վնասով աշխատող այն ճյուղերին, որոնք ունեն տնտեսական առողջացման հիմնավորված ծրագիր: Այս աշխատանքներին զուգընթաց, հարկ է դադարեցնել ոչ շահութաբեր ձեռնարկությունների սնանկ ճանաչելու գործընթացների արհեստական զսպումը: Բյուջետային քաղաքականության կարևոր բաղադրամաս պետք է դառնա նաև հակամենաշնորհային, պետական արդյունաբերական քաղաքականության ակտիվ իրականացումը, հայրենական մրցունակ արտադրանքի թողարկման խրախուսումը և այլն: Քանի որ բյուջետային եկամուտները և ծախսերը փոխկապակցված մեծություններ են, ծախսերի կրճատումն անխուսափելիորեն հանգեցնում է հարկվող բազայի կրճատմանը և հարկային եկամուտների հետագա նվազեցմանը: Հենց այդ պատճառով պետական ֆինանսների իրական, եր-

կարաժամկետ, կայուն առողջացումը սերտորեն կապված է հանրապետության ողջ տնտեսության առողջացման հետ:

*5. Ագրարային քաղաքականության բնագավառում.* ընդհանուր առմամբ դրական գնահատելով հողի սեփականաշնորհման գաղափարը, հարկ է նշել, որ Հայաստանում հողի և գյուղատնտեսական մյուս հիմնական արտադրամիջոցների նկատմամբ սեփականատիրական կարգավիճակի փոփոխությունը կատարվեց հանցավոր հապճեպությամբ, այդ գործում թույլ տրվեցին կոպիտ սխալներ, որոնք բացասական ազդեցություն ունեցան երկրի ագրոարդյունաբերական և պարենային համալիրների վրա: Արդյունքում աղետալի չափերով նվազեցին գյուղատնտեսական մթերքների ապրանքային արտադրության ծավալները, փոշիացվեց ու թալանվեց գյուղատնտեսության տեխնիկական բազան, գյուղացին դեմ առ դեմ մնաց իր հոգսերի ու խնդիրների հետ:

Հողի սեփականության արմատավորված նոր ձևերի պայմաններում գյուղացիական բազմաթիվ տնտեսություններ մինչ օրս չունեն իրենց գործունեությունն ուղղորդող, իրենց շահերն ու իրավունքները պաշտպանող մարմին: Իրավիճակը վատթարացնում է օժանդակ տեխնիկայի, մասնագիտացված կազմակերպությունների զգալի պակասը: Կազմակերպություններ, որոնք պետք է կոչված լինեին տնտեսություններին մատակարարել քիմիկատներ, պարարտանյութ, ապահովեին գյուղտեխնիկայի տեխնիկական վերանորոգումը, ստանձնեին դրանց լիզինգի կազմակերպումը: Կազմակերպական նշված բացթողումների հետևանքով գրեթե աշխատանքներ չեն կատարվում հողերի ագրոտեխնիկական սպասարկման ուղղությամբ, ինքնահոսի են մատնված տոհմաբուծական, ընտրասերման, սերմնաբուծական, անասնաբուժական աշխատանքները: Շարունակում է բարձիթողի վիճակում մնալ ոռոգման համակարգի որոշակի հատվածը:

Լիարժեք ձևավորված չեն շուկայական ենթակառուցվածքները, չկա ագրոհամալիր կատարվող ներդրումների արդյունավետ համակարգ, չի մշակվում հակամենաշնորհային օրենսդրություն, դեռևս

իրական գործառնություններ չեն ծավալել ֆերմերային տնտեսությունների կարիքներն ապահովող վարկաֆինանսային, հարկային և ապահովագրական հիմնադրամները, մշակված չեն բնագավառի կառավարումը, կադրերի ուսուցումը և որակավորման բարձրացումը, գիտատեխնիկական ապահովումը կարգավորող օրենսդրական ու նորմատիվ ակտերը:

Կարգավորված չեն գյուղմթերքներ արտադրողների և գնորդների միջև հարաբերությունները, չկան պարենամթերքների մեծածախ շուկաներ, չհաջողվեց ձևավորել արտադրություն-վերամշակում-սպառում արդյունավետ շղթա, որի հետևանքով ստացվող բերքի որոշակի մասն այդպես էլ չի իրացվում:

Վարելով փակ բնատնտեսություն՝ գյուղացին լուծում է միայն իր կենսաապահովման նվազագույն խնդիրը. հիմնականում օգտագործում է սեփականաշնորհված հողի այն մասը, որն անհրաժեշտ է այդ նպատակին հասնելու համար: Ավելին անել նա ուղղակի ի վիճակի չէ՝ պարարտանյութերի, քիմիկատների, վառելիքի, պահեստամասերի բարձր գների, հողի մասնատվածության պատճառով: Ավելի քան 200 հազար հեկտար վարելահող կամ վարելահողերի 46%-ը շարունակվում է մնալ անմշակ: Դա հանգեցնում է նրան, որ օգտագործվող հողակտորներն արագորեն կորցնում են որակական ցուցանիշները, ծավալվում է բնահողի քայքայումը (էրոզիան) և հողերի անապատացումը:

Ագրարային քաղաքականության մեջ կարևոր գերակայություն եմ համարում բնակչության պարենային անվտանգության ապահովումը: Ագրարային ոլորտում հիմնական խնդիր է՝ դադարեցնել անկումը, հասնել կայունության և դրա հիման վրա ագրոարդյունաբերական համալիրի դինամիկ զարգացման: Ագրոհամալիրի զարգացումը, իմ խորը համոզմամբ, առաջատար երկիր դառնալու հիմնական պայմաններից մեկն է, ինչպես նաև բնակչության կենսաապահովման ոլորտը: Գյուղը դիտարկում եմ ոչ միայն որպես սննդամթերք մատակարարող, այլև, առաջին հերթին, որպես հայության բնամիջավայր:

Ագրոարդյունաբերական համալիրում իմ գործունեության գլխավոր ուղղություններից է լինելու.

- ագրոհամալիրի բոլոր օղակների համակարգված փոխգործողության համար օրենսդրական, նյութական և կազմակերպչական անհրաժեշտ պայմանների ստեղծումը, գյուղմթերքներ վերամշակող արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքի իրական գների ապահովումը, ագրարային ապրանքարտադրողի ազատագրումը մենատերերի և ապրանքամիջնորդային քրեածին տարրերի թելադրանքից,
- հայրենական գյուղմթերք արտադրողների պետական պաշտպանությունն այն սննդամթերք ներկրողներից, որոնք, դեմպինգային գներով (ինքնարժեքից ցածր) իրացնելով Հայաստանում արտադրվող նույնանուն սննդամթերք, անհավասար պայմանների մեջ են դնում հայրենական գյուղացիական տնտեսությունները,
- հարկային համակարգի կատարելագործումը, որը պետք է նպաստի գյուղմթերքների արտադրության և ստացվող եկամուտների աճին: Անհրաժեշտ է կիրառել հողային հարկի տարբերակված սահմանում և մյուս հարկերի վերացում,
- յուրաքանչյուր գյուղացու իրավունքի ամրագրումը՝ ինքնուրույն ընտրելու գործունեության տեսակը, տնտեսավարման ձևը [կոոպերատիվ, բաժնետիրական ընկերություններ, գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններ, կոլեկտիվ ձեռնարկություններ, կոմբինատներ], արտադրության կազմակերպման և կառավարման գործում դրանց անկախ զարգացումը,
- օրենքի խիստ կիրառում այն դեպքերում, երբ վարչականորեն պարտադրվում են տնտեսավարման ձևերը՝ հաշվի չառնելով արտադրողների կամքն ու ցանկությունը,
- սեփական բազայի արդյունավետ օգտագործման հիման վրա ընդլայնված վերարտադրության և ագրոհամալիրի բոլոր օղակների հստակ փոխգործողության համար պայմանների ստեղծումը:

Վերոթվարկյալ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է

մշակել ագրարային ոլորտի զարգացման երկարաժամկետ ծրագիր, որը կներառի.

- հողօգտագործման և հողային հարաբերությունների ոլորտը՝ հողի շուկայի ձևավորման, հողային հարաբերությունների ամբողջ համալիրի իրավական համակարգի կարգավորման, հողակտորների գոտիավորման միջոցով հողի տնտեսավարական օգտագործման վրա պետության արդյունավետ ազդեցության ապահովման, հողը ոչ արտադրական նպատակներով օգտագործելու և ենթակառուցվածքի զարգացմանը չնպաստելու համար հողօգտագործման որոշակի սահմանափակումներ մտցնելու, սննդի որակական և սանիտարահիգիենիկ օրենսդրական նորմատիվների կիրարկման, ինչպես նաև պետությանը հողերի հետգնման իրավասություն տալով հասարակական կարիքների՝ ճանապարհների, օդանավակայանների, պուրակների շինարարության համար,
- հողի արդյունավետ վերաբաշխման պայմանները՝ ընդգրկելով նաև դրա գրավադրման արժեքի (հիպոթեկ վարկերի կիրառման), որակով օգտագործելու կարգի և հողահանդակների՝ իբրև առքուվաճառքի առարկա շրջանառությունից երկարաժամկետ դուրս մնալը կասեցնող կանոնների մշակումը,
- հողի սեփականության ապահովագրական իրավունքի ստեղծումը, որը կբարձրացնի շուկայում նրա ապրանքային կենսունակությունը՝ ներդրումների համար գրավիչ դարձնելով, հավելյալ հողերը վաճառելով և, որ կարևոր է, հողը կապիտալի և գրավային երաշխիքի հիմնական աղբյուր դարձնելով: Դա կնպաստի մասնատված հողակտորների միավորմանը և պայմաններ կստեղծի հողի արդյունավետ օգտագործման, գյուղատնտեսական արտադրության զարգացման, տեխնիկայի արտադրողականության բարձրացման, պարարտանյութերի արդյունավետ օգտագործման համար:

Պետական կարգավորման ոլորտում պետք է համակարգվեն արտադրանքի որակի հսկողության, գիտահետազոտական աշխա-

տանքների, տեղեկատվական և ենթակառուցվածքի ապահովման ծախսերը:

Ագրարային հատվածում պետական վարկավորման քաղաքականության հիմքում պետք է դրվեն.

- ապրանքային վարկավորման կիրառումը,
- գյուղի սոցիալական ենթակառուցվածքի արդիականացման պետական աջակցությունը՝ արտոնյալ և երկարաժամկետ վարկերով, շինարարական աշխատանքների իրականացման համար տեխնիկական օգնության, գյուղական ապրանքարտադրողների եկամուտների պաշտպանության իրականացում, գների կարգավորում և գյուղատնտեսական ապրանքների պետական առևտրի կանոնակարգում, գյուղատնտեսական հումք ձեռքբերելու նպատակով լրացուցիչ վճարի տրամադրում, գյուղարտադրանքի իրացման շուկաներ բացահայտելու նպատակով մարկետինգի կազմակերպում (շուկայի զարգացման ծրագիր, լրացուցիչ վճարներ՝ արդյունաբերական վերամշակման, պահպանության, տեղափոխման, որակի վերահսկման համար), տնտեսախորհրդատվական աջակցություն, ագրարային ոլորտի ապահովագրության համակարգի ներդրում և հողի վարձակալման զանազան ձևերի կիրառում. դրամական (1 հա դիմաց ամրագրված), զուտ դրամական, ճկուն դրամական (կախված արտադրության պայմաններից կամ գնից, բերքից), խառը դրամական և այլն:

*6. Բնապահպանության ոլորտում.* գտնում եմ, որ հանրապետությունում տնտեսական, սոցիալական և քաղաքական փոփոխություններ իրականացնելիս ամենայն հետևողականությամբ պետք է հաշվի առնել շրջակա միջավայրի պահպանության կարևորությունը, քանի որ դրա տերը ոչ միայն ներկա, այլև ապագա սերունդներն են:

Բնապահպանական քաղաքականությունը հիմնականում պետք է նպատակաուղղված լինի էկոլոգիապես մաքուր միջավայրում քաղաքացիների կենսագործունեության իրավունքի ապահովմանը: Անհրաժեշտ է բացառել տնտեսական ռեֆորմների բացասական

հետևանքները շրջակա միջավայրի վրա, բնակչության գիտակցության մեջ ձևավորել և արմատավորել բնապահպանական աշխարհայացք:

Բնապահպանական քաղաքականության երկարաժամկետ ուղղություններ եմ համարում.

- էկոնոմիկայի վերակողմնորոշումը՝ չվերականգնվող բնական պաշարների օգտագործումից դեպի վերականգնվող պաշարներ,
- Սևանա լճի փրկության ազգային ծրագրի հետևողական իրագործումը,
- էրոզիայի ենթարկված հողերի բնապահպանական վերականգնման ծրագրի մշակումը և իրականացումը, դրանց վերամշակումը հողօգտագործողների կողմից, աղտոտված տարածքների մաքրման, վերականգնողական աշխատանքների կազմակերպումը,
- այնպիսի պայմանների ստեղծումը, որոնց պարագայում տնտեսության կառուցվածքային վերակառուցումը կարող է տալ բնապահպանական իրական, շոշափելի արդյունք:

Կարևորագույն խնդիր եմ համարում բնապահպանական անվտանգության, օդի, ջրի, հողերի, անտառների պահպանության ոլորտները կարգավորող օրենքների ընդունումը:

## 3. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

*Ներկա իրավիճակը:*

Վերջին տարիները բնութագրվում են սոցիալական լարվածության շարունակականությամբ, որը մեծապես պայմանավորված է Հայաստանի քաղաքացիների կենսապահովման համար նվազագույն պահանջների բավարարման զգալի թանկացումով: Եթե 2005 թ. ամսական պարենային նվազագույն զամբյուղի արժեքը կազմում էր 18308 դրամ, իսկ սպառողական նվազագույն զամբյուղինը՝ 29843 դրամ, ապա 2006 թ. նվազագույն պարենային զամբյուղի միջին ամ-

սական արժեքը կազմում էր 20436.9 դրամ, իսկ սպառողական զամբյուղինը՝ 31677.1 դրամ: Ինչպես վերը նշեցի, այդ միտումը շարունակվել է նաև 2007 թ. հունվար-սեպտեմբերին. նվազագույն պարենային զամբյուղի արժեքը կազմել է 21377 դրամ, նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը ամսական կտրվածքով՝ 33145 դրամ: Համաձայն պաշտոնական վիճակագրության, 2006 թ. ընթացքում ազգային փոխարժեքի «թանկացման» աճի տեմպը կազմել է 110 %, ընդ որում նվազագույն պարենային զամբյուղի արժեքի աճը 2006 թվականին 2005 թվականի համեմատ կազմել է 111.6 %, սպառողական զամբյուղինը՝ 106.1 %: Այսպիսով, 2006 թ., հաշվի առնելով նաև դրամի «թանկացումը», ապրուստի արժեքը Հայաստանում աճել է մոտավորապես 20-25 տոկոսով, ինչն ի չիք է դարձրել կառավարության կողմից հայտարարված բնակչության մեկ շնչին ընկած միջին եկամուտների բարձրացումը: Եթե հաշվի առնենք նաև այն, որ 2007 թ. հունվար-սեպտեմբերին ազգային փոխարժեքի «թանկացման» աճի տեմպը 2006 թ. նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 122,8%, նվազագույն սպառողական և պարենային զամբյուղների աճի տեմպերը 2006-ի նույն ժամանակաշրջանի համեմատ կազմել են համապատասխանաբար 112,7% և 118,5%, ապա, ինքնին հասկանալի է, որ ապրուստի արժեքի առաջանցիկ թանկացումը բնակչության միջին եկամուտների բարձրացման համեմատ շարունակվել է նաև 2007 թվականին:

Հասարակության մեջ զգալիորեն աճել են, մեծապես սոցիալական լարվածությամբ պայմանավորված, մտահոգիչ այնպիսի երևույթներ, ինչպիսիք են ինքնասպանություններն ու ինքնասպանությունների փորձերը, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունները, կատարված հանցագործություններն ընդհանրապես: Այսպես, 2006 թվականին (2005 թվականի համեմատությամբ) գրանցված հանցագործություններն աճել են 9.9 տոկոսով և կազմել 9757 դեպք: Միջին ծանրության հանցագործությունները (2774 դեպք) աճել են 85.3 տոկոսով, ծանր հանցագործությունները՝ 15 տոկոսով, առանձնապես ծանր հանցագործությունները՝ 23 տոկոսով:

2006 թ. գրանցվել է սպանության 75 դեպք (աճը 2005 թվականի համեմատ կազմել է 36.4 %), խուլիգանության 402 դեպք (աճը՝ 35.4 %), թմրանյութերի հետ կապված հանցագործությունների 957 դեպք (աճը՝ 29.9 %), անձնական ունեցվածքի գողության 354 դեպք (աճը՝ 20.4 %): Տագնապ է հարուցում ինքնասպանությունների և ինքնասպանության փորձերի աճը. 2006 թ. գրանցվել է ինքնասպանության 244 և ինքնասպանության փորձի 221 դեպք (2005 թ. համապատասխանաբար՝ 199 և 200 դեպք): Այս ոլորտում առկա ծանր վիճակը շարունակվել է նաև 2007 թվականին. հունվար-սեպտեմբերին գրանցվել է 6510 հանցագործություն, 651 բնակարանային գողություն (աճի տեմպը 2006 թ. նույն ժամանակաշրջանի համեմատ կազմել է 11,9%), 8,8%-ով աճել է առանձնապես ծանր հանցագործությունների թիվը՝ կազմելով 136 դեպք: Խիստ մտահոգություն է հարուցում այն, որ 25%-ով աճել են սպանություն կատարելու փորձերը, իսկ սպանությունների թիվը կազմել է 51 դեպք (2005 թ. նույն ժամանակահատվածի 38-ի, 2006թ.՝ 54-ի դիմաց):

Հանրապետությունում ծայրահեղ անբարենպաստ սոցիալական իրավիճակի հետևանք է սոցիալական այնպիսի հիվանդությունների բարձր տեսակարար կշիռը, ինչպիսիք են սուր աղիքային հիվանդությունները, շնչառական օրգանների տուբերկուլյոզը, պեդիկուլյոզը (ոջլոտություն): Այսպես, 2006 թ. գրանցվել է սուր աղիքային հիվանդությունների 5330 դեպք կամ գրանցված հիվանդությունների ընդհանուր թվի 5.2 տոկոսը, շնչառական օրգանների տուբերկուլյոզի 1216 դեպք կամ հիվանդությունների ընդհանուր թվի 1.17 տոկոսը, ոջլոտության 4877 դեպք կամ հիվանդությունների ընդհանուր թվի 4.7 տոկոսը: Այսպիսով՝ հանրապետությունում գրանցված հիվանդությունների ավելի քան 11 տոկոսը պատկանում է, այսպես կոչված, «սոցիալականների» թվին: Վիճակը գրեթե չի բարելավվել 2007 թ. հունվար-սեպտեմբերին. մասնավորապես աճել են սալմանելոզային ինֆեկցիաների գրանցված դեպքերը՝ 232, բրուցելյոզի՝ 192 դեպք: Այս պայմաններում անթույլատրելի եմ համարում, երբ շուրջ կես միլիոն կենսաթոշակառուների ամսական միջին թոշակնե-

ը շարունակում են 1,5 անգամ ցածր մնալ սպառողական նվազագույն զամբյուղի արժեքից, իսկ մեկ շնչին ընկնող ամսական միջին եկամուտները ներկայումս Հայաստանում կազմում են սպառողական նվազագույն զամբյուղի շուրջ երեք քառորդը:

Աներկբա է, որ Հայաստանի գլխավոր հարստությունը մարդն է: Որպեսզի յուրաքանչյուր ոք նպաստի հանրապետության ծաղկմանը, անհրաժեշտ է մշակել և իրականացնել նպատակաուղղված պետական սոցիալական քաղաքականություն: Դրա ելակետային նախադրյալը պետք է լինի ցանկացած մարդու համար հնարավորությունների ստեղծումը՝ իրականացնել աշխատանք ունենալու իր սահմանադրական իրավունքը, որի արդյունքներով նա ի զորու կլինի արժանապատվորեն պահել իր ընտանիքը: Վերջին տարիներին ազգային վերածննդի և միաբանության գաղափարները վարկաբեկող պատճառներից մեկն էլ հանդիսացավ բնակչության, պետության հիմքը ծառայող հայկական ընտանիքի կենսամակարդակի կտրուկ անկումը:

Աշխատատեղերի սուր դեֆիցիտի պայմաններում կամ էլ դրանց առկայության դեպքում՝ աշխատանքի ցածր վարձատրության պարագայում ակնհայտ է, որ հանրապետությունում գործող գներն ու սակագները չարդարացված բարձր են, և դրանց իջեցումը կամ փոխհատուցումը համարում եմ սոցիալական քաղաքականության բնագավառում իմ կարևորագույն խնդիրներից մեկը: Պետությունը պարտավոր է մարդկանց ապահովել աշխատանքով և պատշաճ աշխատավարձով: Հայկական ընտանիքը պետք է կրկին հնարավորություն ստանա ապրել արժանապատիվ, և դա հարկ է ամրապնդել նյութապես՝ առաջին հերթին աշխատանքով ապահովելով ընտանիքի գլխավորին: Նման մոտեցումը օբյեկտիվորեն առաջին պլան է մղում երկու կարևորագույն խնդիրների լուծում, որոնք պետք է ապահովի պետությունը. նոր աշխատատեղերի ստեղծում և բյուջետային աշխատողների աշխատավարձերի բարձրացում:

«Արարման ծրագրի» սոցիալական քաղաքականության հիմքում ընկած է դեպի ներկան և ապագան ուղղված սոցիալական կողմնո-

րոշում ունեցող տնտեսական քաղաքականությունը, որը պետք է ունենա կանխարգելիչ բնույթ և զուգորդի շահութաբերությունն ու մարդասիրությունը՝ խոչընդոտելով աղքատության և սոցիալական չարիքի առաջացմանը: Սոցիալական քաղաքականության մեջ ես ելնում եմ այն նախապայմանից, ըստ որի ամեն մի անհատ պետք է ունենա պարտավորություններ և պատասխանատվություն կրի հասարակության, պետության առջև, ինչպես և հասարակությունը, պետությունը՝ անհատի առջև:

Իմ կողմից հռչակված հիմնական արժեքները հաստատվում են սոցիալական հետևողական քաղաքականության իրականացմամբ, որը միտված է հետևյալ նպատակների կենսագործմանը.

- Հայաստանի քաղաքացիները պետք է ապահովվեն սոցիալական անվտանգության երաշխիքներով՝ իշխանության բոլոր ինստիտուտների կողմից մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պահպանման հիման վրա: Պետության առջև դրված առաջնային խնդիրն է կերակրել և հագցնել մարդկանց, մեծահասակներին ապահովել արժանապատիվ աշխատանքով, նախադպրոցական տարիքի երեխաներին՝ լիարժեք սննդով և անվճար բուժսպասարկմամբ, դպրոցականներին՝ անվճար դասագրքերով ու նախաճաշով, կենսաթոշակառուներին՝ մատչելի դեղորայքով և արտոնություններով, որոնք կապահովեն նվազագույն կենսապայմաններ, պետական հոգածություն և պաշտպանվածություն,
- ընտանիքի ամրապնդում, մայրության և մանկության պահպանություն, կանանց իրավունքների պաշտպանություն, նրանց աշխատանքի և կենցաղային պայմանների բարելավում, բազմանդամ ընտանիքների աջակցում, ժողովրդագրական ճգնաժամը հաղթահարելուն ուղղված համազգային ծրագրի ընդունում, երիտասարդության պետական աջակցություն,
- պետական վերահսկողական լծակների օգտագործման միջոցով անհրաժեշտ է մեղմել բնակչության կենսամակարդակի և եկամուտների ծայրահեղ բևեռացումը հասարակության մեջ:

Այդ ուղղությամբ իրականացվող քաղաքականության հիմքում պետք է ընկած լինեն փոխօգնության սկզբունքները. ուժեղն օգնում է թույլին, առողջը՝ հիվանդին, հարուստը՝ աղքատին,

- անհրաժեշտ է աշխատանքի վարձատրության, կենսաթոշակի ամենացածր մակարդակը կտրուկ մոտեցնել սպառողական նվազագույն զամբյուղի չափերին, բարձրացնել անաշխատունակների, հատկապես հաշմանդամների և երեխաների սոցիալական ապահովվածության երաշխիքների մակարդակը:

Մեծապես կարևորում եմ նաև փախստականների հետ տարվող աշխատանքները և ունեմ նրանց տնտեսական ու հասարակական կյանքում ներգրավելու համապատասխան ծրագիր:

Համոզված եմ, որ հասարակության համար խիստ վտանգավոր են կեղծավորությունը և բարգավաճման պոպուլիստական խոստումները՝ առանց բացատրությունների, թե ինչի՞ հաշվին դա կարելի է իրականացնել:

ՀՀ նախագահ ընտրվելու դեպքում իմ գործունեությամբ ձգտելու եմ հասնել այն բանին, որ ազատական տնտեսությունը մեկ ամբողջի մեջ միավորի շուկայական հարաբերություններն ու սոցիալական ապահովության համակարգը:

## 4. ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

Կրթության ոլորտում իմ առջև դրած խնդիրները ձևավորվել են՝ հաշվի առնելով XXI դարում ինովացիոն հասարակություններին ներհատուկ մարտահրավերները: Ես ելնում եմ նրանից, որ կրթությունը յուրաքանչյուր պետության առաջընթացի հիմքն է: Երրորդ հազարամյակում ցանկացած երկրի սոցիալ-տնտեսական աճը պայմանավորված է պետության ընդունակությունով՝ ապահովել հասարակության բոլոր անդամների կրթությունը, որպեսզի յուրաքանչյուր մարդ հնարավորություն ստանա հաջողության հասնել արագընթաց փոփոխվող աշխարհում: Պետության կարևորագույն խնդիրն եմ համարում երեք տարրերի կամ «գիտությունների եռանկյունու»՝ կրթու-

թյան, հետազոտությունների և ինովացիաների զարգացումն ու ինտեգրումը: Այդ հիմնահարցերի լուծումը հնարավոր է մարդկային ռեսուրսներին ուղղված խոշորածավալ ներդրումներ իրականացնելով, մարդկանց մասնագիտական հմտությունները զարգացնելով, գիտական հետազոտություններ կատարելու համար պայմաններ ստեղծելով: Նշված խնդիրները կյանքի կոչելու համար անհրաժեշտ պայման է կրթության համակարգի արդիականացման պետական աջակցությունը, որպեսզի այն առավելագույնս համապատասխանի գլոբալ էկոնոմիկայի պահանջներին:

Գտնում եմ, որ գլոբալիզացիայի մարտահրավերների պայմաններում հայկական քաղաքակրթության գոյատևումը հնարավոր է միայն գիտելիքների վրա հիմնված էկոնոմիկայի պարագայում: Ընդսմին, իմ աշխատանքում առաջնահերթ եմ համարում որակյալ կրթություն ապահովող ազգային նախագծի մշակումն ու կենսագործումը: «Կրթությունը XXI դարում» ազգային նախագծի հիմքում դրվելու է դրույթ կրթության ժամանակակից, արդյունավետ համակարգ ստեղծելու անհրաժեշտության մասին, որը կհամապատասխանի գլոբալ, ինովացիոն հասարակության պահանջներին և յուրաքանչյուր մարդու հնարավորություն կտա լիարժեքորեն մասնակցելու դրան: Ազգային նախագիծը նպատակաուղղված է լինելու կրթության ոլորտում ներդրումային քաղաքականության խրախուսմանը, ինչը կնպաստի արդյունավետ, կայուն և բարձրակարգ կրթություն ապահովող, հատկապես բարձրագույն ուսումնական հաստատությունների զարգացմանը: Այդ քաղաքականությունը կխրախուսի շարունակական ու անընդհատ կրթության ներդրման գաղափարը: Նշեմ, որ «Ութի խմբի» (աշխարհի առավել զարգացած ութ երկրների մասին է խոսքը) Քյոլնյան գագաթաժողովի հռչակագրի սկզբունքների հիման վրա ուսուցման նպատակ ու խնդիրներ են ճանաչվել՝ մարդկանց հնարավորություն տալ հարմարվելու աշխարհում կատարվող արագընթաց փոփոխություններին, առավելագույնս խորացնելու մասնագիտական հմտություններն ու գիտելիքները, ինչպես նաև ակտիվ դեր խաղալու հասարակական ու մասնա-

գիտական գործունեության մեջ: Սկզբունքորեն կարևոր եմ համարում կրթական համակարգի և մասնավոր հատվածի համագործակցության պետական կարգավորումն ու աջակցությունը՝ նպատակ ունենալով ընդլայնել գիտական հետազոտությունների ցանցը՝ գիտելիքների կուտակման, ինովացիաների խրախուսման, Հայաստանի տնտեսությունում նոր, բարձր տեխնոլոգիաների արագ ներդրման նպատակով: Ազգային նախագծի համար կարևոր բաղադրիչ պետք է հանդիսանա բարձր չափանիշների ներդրմանն աջակցությունը, հատկապես մաթեմատիկայի, բնական գիտությունների, տեխնիկական ու կիրառական գիտությունների և օտար լեզուների ոլորտներում՝ կրթության բոլոր մակարդակների վրա: Կարևորում եմ նաև բարձրորակ դասախոսներին գործուն աջակցություն ցուցաբերելը՝ արդիական այդ բնագավառներում հետագայում նրանց հաստատուն տեղն ամրապնդելու համար:

«Կրթությունը XXI դարում» ազգային նախագծի կենսագործման կարևոր նախապայման եմ համարում աշխարհի առաջատար երկրների («Ութի խմբի») աջակցությունը: Նշենք, որ վերջիններս 2006 թ. հուլիսի 16-ին Սանկտ Պետերբուրգի գագաթաժողովում ընդունեցին «Կրթությունը XXI դարի ինովացիոն հասարակությունների համար» հռչակագիրը: Համոզված եմ, որ իմ կողմից առաջարկվող «Կրթությունը XXI դարում» ազգային նախագիծը աջակցություն կստանա «Ութի խմբի» երկրների կողմից, քանի որ դրանում ամրագրված նպատակներն ու խնդիրներն ամբողջովին համահունչ են ընդունված հիշատակածս հռչակագրի բուն գաղափարին, որի կենսագործմանը օժանդակելու իրենց պատրաստակամությունն են հայտնել աշխարհի առաջատար պետությունները:

Կրթության, գիտության և մշակույթի բնագավառում ընթացիկ խնդիրների լուծումը պահանջում է ինչպես հեռանկարային համապատասխան ծրագրի բազայի ստեղծում, այնպես էլ դրանք իրականացնելու համար գործուն միջոցների ձեռնարկում:

Այս ամենը հաշվի առնելով՝ իմ գործունեության մեջ առաջնորդվելու եմ այն իրողությամբ, որ կրթությունը՝ որպես գիտելիքների, վար-

պետության և ավանդույթների փոխանցման համակարգ, այսօր կանխորոշում է ցանկացած ազգի ճակատագիրը ու նրա պատմական հաջողությունը: Հայաստանի Հանրապետությունը կարող է արժանապատիվ ապագա ունենալ միայն իր քաղաքացիների կրթական մակարդակը պահպանելու և անշեղորեն բարձրացնելու ճանապարհով: Կրթությունը պետք է զարգանա՝ դրա բարձր պահանջարկն ունենալու օբյեկտիվ պայմաններում: Այն պետք է դառնա ազգային գերակայություններից կարևորագույնը:

Հանրակրթական դպրոցի առջև ծառացած հիմնական խնդիրներ եմ համարում.

- կրթական ողջ համակարգի գերակա (նախապատվելի) ֆինանսավորումը,
- պարտադիր սկզբնական կրթությունը, լրիվ միջնակարգ կրթության բարձր մասնաբաժինը, մարզպետարանների ղեկավարության գործունեության գնահատման ժամանակ բնակչության կրթական մակարդակի բարձրացմանն ուղղված նրանց կատարած աշխատանքի հաշվի առնելը,
- կրթության բնագավառում կապիտալ շինարարությունը, դպրոցական կցակառույցներին և ուսուցիչների համար կացարաններ կառուցելուն նպատակաուղղված պետական ֆինանսավորումը, պետպատվերի հիման վրա դպրոցական մանկավարժների և նախակրթարանների դաստիարակների պատրաստման ապահովումը,
- ուսուցիչների, կրթության բնագավառի բոլոր աշխատողների աշխատավարձերի զգալի բարձրացումը,
- պետական աջակցությունը հեռավոր և մերձավոր արտասահմանի հայկական հանրակրթական դպրոցներին, Սփյուռքում հայկական դպրոցի դերի բարձրացումը, նրա հեղինակության ապահովումը:

Ե՛վ պետական, և՛ մասնավոր կրթության հիմքում պետք է դրվի ազատության ու պատասխանատվության ոգով դաստիարակությունը, մատաղ սերնդի մտավոր, հոգևոր և ֆիզիկական զարգաց-

ման համար հավասար ու արդար պայմանների ստեղծումը: Անհրաժեշտ է կատարելագործել պետպատվերի և վճարովի ուսուցման համակարգերը: Միաժամանակ, հարկ է կիրառել մասնավոր բուհերի ատեստավորման և արտոնագրման ավելի խիստ պահանջներ:

Գտնում եմ, որ գիտությունը, գիտական դպրոցները, ազգի գիտական ինտելեկտը և դրա օպտիմալ օգտագործումը կարևոր նախապայման են XXI դարում Հայաստանի գոյատևման համար:

Գիտության ոլորտում կարևորագույն հիմնախնդիրներ եմ համարում.

- Հայաստանի տնտեսական, քաղաքական, հոգևոր վերածննդին նպաստող գիտական հետազոտությունների աջակցության պետական ծրագրի մշակումն ու իրագործումը,
- արդիականություն ունեցող գիտական ծրագրերի ու նախագծերի առաջնահերթ ֆինանսավորումը և այդ խնդրի լուծմանն ուղղված պետական դրամաշնորհների համակարգի զարգացումը, այլ ոչ թե աջակցությունը կարծրացած բյուրոկրատական կառուցվածքներով գիտական հիմնարկներին,
- Հայաստանում գիտության հեռանկարային ուղղությունների զարգացման գերակայությունների ճշգրտումը, հայագիտությանն ու ֆունդամենտալ գիտություններին պետական ֆինանսավորման մակարդակի ավելացումը:

Համոզված եմ, որ մեր ազգային մշակույթի պահպանումը, վերածնունդը և զարգացումը պարտադիր պայման են կյանքի մյուս բոլոր բնագավառներում հաջողության հասնելու համար: Այն ազգի համախմբման կարևորագույն միջոց է: Գտնում եմ, որ այսօր, հայոց պետականության կայացման ներկայիս ծանր ժամանակներում, միայն մշակույթը կարող է ապահովել ազգի ինքնատիպությունը, պետության և հասարակության սոցիալական, բարոյական, հոգեբանական բնութագրերի կայունությունը:

Մշակույթի բնագավառում իմ առաջնահերթ խնդիրն է լինելու աջակցել մշակույթի գործիչներին՝ նրանց ստեղծագործական գոր-

ծունեության համար բարենպաստ պայմաններ ստեղծելուն, տաղանդների բացահայտմանը և ինքնադրսևորմանը, մշակույթի պետական հովանավորության ապահովմանը: Այս հարցում կարևորում եմ, որ մշակույթի գործիչների բարոյական և նյութական խրախուսումը պայմանավորված լինի բացառապես գեղագիտական նկրտումներով, ելնի զուտ գեղարվեստական ընկալումներից՝ անկախ մնալով քաղաքական կոնյունկտուրայից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Երիտասարդության հետ տարվող իմ աշխատանքների հիմքում դնելու եմ «Կրթությունը XXI դարում» ազգային նախագծի կյանքում իրականացումը, ինչպես նաև «Գլոբալիզացիայի դարաշրջանում երիտասարդության հարմարեցման (ադապտացիայի)» ազգային ծրագրի մշակումն ու դրա կենսագործումն ապահովող պետական աջակցությունը, «Հայաստանի տարածաշրջաններում հավասարակշռված զարգացման» պետական ծրագիրը և այլն: Ընթացիկ ու հեռանկարային ծրագրերի լուծման ժամանակ ելնելու եմ նրանից, որ երիտասարդությունը հասարակության ամենադինամիկ ու առաջավոր մասն է, և որ նրա գործունեությամբ, դավանած գաղափարներով, ակտիվ դիրքորոշմամբ են պայմանավորված մեր առաջընթացն ու երկրի հետագա զարգացումը:

Արագորեն գլոբալիզացվող աշխարհի պայմաններում երիտասարդության հետ իմ աշխատանքներում կարևորում եմ.

- գիտելիքների ծառայեցումը ժողովրդավարության, մարդու իրավունքների, հիմնական ազատությունների, քաղաքացիական հասարակարգի ձևավորման ու զարգացման գործին, և առողջ ազգային ու համազգային առաջադեմ գաղափարների ոգով աճող սերնդի դաստիարակության ապահովումը,
- երիտասարդությանը հաղորդակից դարձնել XXI դարի ինովացիոն հասարակության նոր մարտահրավերներին: Կեցության ստեղծված պայմաններին, գիտական նոր տեսություններին և

դրանց վրա հիմնված բարձր տեխնոլոգիաների տիրապետման հարցում նրանց օգնություն ցուցաբերելը,

- երիտասարդության հայրենասիրական, ֆիզիկական ու մշակութային-քաղաքակրթական դաստիարակության կազմակերպումը՝ հայրենիքի և քրիստոնեական հնագույն քաղաքակրթության պատկանելու համար հպարտության ոգի սերմանելը,
- երիտասարդ ընտանիքներին բազմակողմանի աջակցության ապահովումը:

Մինչև պետական մակարդակով երիտասարդության ազգային ծրագրի ընդունումը, կարևոր եմ համարում գործուն քայլեր ձեռնարկել, որոնք համահունչ կլինեն հասարակության զարգացման միջազգային առկա միտումներին և կհամապատասխանեն առաջիկա տասնամյակում երիտասարդությանը ներկայացվող գլոբալիզացիայի նոր մարտահրավերների պահանջներին:

Երիտասարդության հետ տարվող քաղաքականության մեջ առաջնահերթ եմ համարում նրանց բնավորության այնպիսի գծերի ու մտածելակերպի ձևավորումը, որոնք պահանջված կլինեն քաղաքակրթության զարգացման վաղվա օրվա մարտահրավերների տեսանկյունից և որոնք դրականորեն կազդեն հասարակության տնտեսական ու սոցիալական զարգացումների վրա: Այս առումով եմ դիտարկում երիտասարդությանը՝ որպես հիմնական ուժ, որն ունակ է հայկական լճացող հասարակությունը փոխակերպել հետինդուստրիալով, իսկ այնուհետև կարճ ժամանակում նոր՝ XXI դարի ինովացիոն հասարակությունով:

Գտնում եմ, որ երիտասարդության հետ տարվող քաղաքականության հիմքում պետք է դրվեն արտադրական և միջանձնային նոր հարաբերություններ: Կարևորում եմ, որ երիտասարդությունը հնարավորինս արագ կարողանա ադապտացվել և դիմակայել գլոբալիզացվող աշխարհի մարտահրավերներին, կենսագործունեության ապահովման շարժիչ ուժ դառնալ երկրի զարգացման ճանապարհին: Նպատակը մեկն է. կարճ ժամանակահատվածում ձևավորել երիտասարդ սերունդ, որն ընդունակ կլինի ինքնուրույն

գործողությունների, արագորեն կընկալի առաջատարն ու նորը, և որին հատուկ կլինեն խիզախությունը, ձեռներեցությունը, հնարամտությունը:

Նոր քաղաքականության ձևավորման պայմաններում ավելի մեծ տեղ կհատկացվի երիտասարդության տնտեսական, արտադրական գործունեությանը, բիզնեսի արդիական՝ էլեկտրոնային, ինֆորմացիոն, ինովացիոն և այլ բարձր տեխնոլոգիաներով հագեցված ոլորտներում նրանց ներգրավմանը: Հետևաբար, պատանիներն ու աղջիկները պետք է դեռևս վաղ տարիքից լայնորեն դառնան ընտանեկան բիզնեսի մասնակիցը, իրենք էլ կարողանան ապահովել ընտանիքի եկամուտը: Այս ամենն արդիական կդարձնի երիտասարդության ազգային նախագծում առավել ընդգրկուն արտացոլելու խնդրո առարկա ռազմավարական մոտեցումները, որոնք թե՛ հոգեբանորեն և թե՛ մասնագիտորեն կնախապատրաստեն երիտասարդներին ու մեծահասակներին ժամանակի մարտահրավերների արժանապատիվ հաղթահարման համար:

Հատուկ նշանակություն եմ տալիս երրորդ հազարամյակի՝ տեղեկատվական և տեխնոլոգիական հեղափոխությունների դարաշրջանի նոր անձի ձևավորմանը: XXI դար Հայաստանի սահուն մուտքի կարևորագույն պայման է հանդիսանում ինտերնետ կապի միջոցով դպրոցականների, ուսանողների, երիտասարդ գիտնականների, ինժեներատեխնիկական աշխատողների հաղորդակցումը համաշխարհային գիտության, տեխնիկայի և մշակույթի նորություններին:

Նոր մարդու ձևավորման գործում կարևոր նշանակություն եմ տալիս երիտասարդների՝ սեփական ուժերի վրա հենվելու, նոր պայմաններին հարմարվելու, դժվարությունները հաղթահարելու, հմտություններ ձեռք բերելու ընդունակությունների ձևավորմանը: Միաժամանակ հրատապ եմ համարում երիտասարդության գիտակցության մեջ այն գաղափարի արմատավորումը, որ լավ սովորելով, գիտելիքներ և մասնագիտություն ձեռք բերելով, սկսած գործը ավարտին հասցնելու հաստատակամությունով է պայմա-

նավորված ինքնուրույն կյանք մտնող մարդու վաղվա հաջողությունը, որի նախապայմանն է միջակության, անտարբերության, կյանքի նկատմամբ սպառողական վերաբերմունքի մերժումը:

Դպրոցական, ուսանողական և գիտական երիտասարդության միջավայրերում անհրաժեշտ է ապահովել.

- հանրակրթական համակարգի արտոնյալ ֆինանսավորում, մանկավարժական երիտասարդ կադրերի բարեկեցության երաշխիքների ստեղծում, կրթական ծրագրերի հարստացում նորերով, որոնք կնպաստեն ժամանակակից գիտելիքների յուրացմանը, երրորդ հազարամյակի մարդու, անձի և քաղաքացու ձևավորմանը,
- շուկայական հարաբերություններին, տնտեսական, սոցիալական և քաղաքական պայմաններին համապատասխանող դաստիարակչական ծրագրերի մշակում, գործնական գիտելիքներ ապահովող, նոր կենսապայմաններին հարմարվելու ունակություն ձևավորող առարկաների ուսուցում,
- ուսումնական ծրագրերի մեջ հոգևոր ու հայրենասիրական դաստիարակությանը նպաստող միջոցառումների մշակում և ներդրում,
- բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում նոր մասնագիտությունների ցանկի ընդգրկում, ինչպես նաև մասնագիտական կրթության կողմնորոշում դեպի համաշխարհային շուկայի պահանջները և Հայաստանի հնարավոր տեղը աշխատանքի միջազգային բաժանման մեջ,
- բուհական և դպրոցական լաբորատորիաների արդիականացում ժամանակակից սարքերով ու սարքավորումներով, աուդիովիզուալ ձեռնարկներով, գրադարանային ֆոնդերի համալրում, էլեկտրոնային գրադարանների ստեղծում և ապահովում ուսուցման ժամանակակից տեխնիկական միջոցներով, տեղեկատվական և համակարգչային տեխնիկայով, պարտադիր ինտերնետ կապով,
- ապագա մասնագետներին ինովացիոն գործունեությանը նա-

խապատրաստող, գիտահետազոտական աշխատանքներում ուսանողներին ներգրավելու ծրագրերի մշակում և իրագործում,

- գիտամանկավարժական, պրոֆեսորադասախոսական կազմի երիտասարդացում, երիտասարդության գիտական գործունեությանը հետևողական աջակցության ցուցաբերում,
- ուսման և գիտական գործունեության մեջ հաջողությունների համար խրախուսման միջոցների ու անվանական թոշակների համակարգի ընդլայնում, ուսման վարձավճարների չափերի և պետական ու այլ միջոցներով ուսման վարձի փոխհատուցման հստակ սահմանում՝ ապահովելով դրանց կիրառման թափանցիկությունը, ներդնելով պարտադիր արտոնություններ անապահով ուսանողների և գերազանցիկների համար, կիրառելով կրթություն ստանալու նպատակով պետական վարկավորման համակարգ,
- ուսանողների կյանքի և առողջության պահպանման ծրագրի մշակում ու հետևողական իրականացում, ուսանողական հանրակացարանների վերանորոգում, դրանցում բնակկենցաղային պայմանների բարելավում:

Բանվոր, ծառայող, գյուղաբնակ և գործազուրկ երիտասարդության միջավայրում անհրաժեշտ է.

- զարգացնել մասնագիտական (արհեստակցական) սկզբնական կրթությունը, այդ հաստատություններում մշակել և իրականացնել հանրակրթական ծրագիր,
- ապահովել երիտասարդ ձեռներեցների, նրանց բիզնեսի և նախաձեռնությունների համար մշտական աջակցություն, որն ուղղված կլինի տնտեսության զարգացմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը,
- բյուջետային աջակցության ապահովում երիտասարդ ուսուցիչների, բժիշկների և այլ մասնագետների համար, հատկապես՝ գյուղերում և սահմանամերձ բնակավայրերում,
- կազմակերպել գործազուրկ երիտասարդության մասնագի-

տական վերապատրաստում, ապահովել նրանց՝ ժամանակակից մասնագիտությունների տիրապետումը, ստեղծել երիտասարդական զբաղվածության մարզային կենտրոններ,

- պետության լայն աջակցությամբ կարգավորել գյուղական երիտասարդության զբաղվածության խնդիրները, և առաջին հերթին՝ սահմանամերձ ու բարձրլեռնային գյուղերում, հանրապետության գյուղական վայրերում կազմակերպել մշակութային կենտրոնների, մարզահրապարակների վերանորոգում ու նորերի կառուցում:

## 6. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

*Ներկա իրավիճակը:*

Հայաստանի բնակչության առողջության վիճակը բնութագրվում է ցածր ծնելիությամբ (11,7 ծնունդ՝ 1000 բնակչի հաշվարկով), մինչև 1 տարեկան երեխաների մահացության բարձր մակարդակով (13,8 դեպք՝ 1000 նորածնի հաշվարկով): Ավելին, 2006 թ. նախորդ տարվա համեմատությամբ արձանագրվել է մինչև 1 տարեկան երեխաների մահացության աճ՝ 13,0%-ով: Իրավիճակը գրեթե չի փոխվել նաև 2007 թ. հունվար-սեպտեմբերին. ծնելիությունը 1000 բնակչի հաշվով կազմել է 12 երեխա, մահացածներից մինչև 1 տարեկան երեխաներ են եղել 11,4%-ը:

2006 թ. Հայաստանի բնակչության շրջանում արձանագրվել են 103127 տարբեր հիվանդություններ, որոնցից հիմնականներն են, ինչպես արդեն նշել եմ, սուր աղիքային վարակներ՝ 5330 դեպք, շնչառական օրգանների սուր վարակներ՝ 87285 դեպք, գրիպ՝ 1985 դեպք, շնչառական օրգանների տուբերկուլյոզ՝ 1216 դեպք և ոջլոտություն՝ 4877 դեպք: Դրությունը էականորեն չի բարելավվել նաև 2007 թ. հունվար-սեպտեմբերին, երբ արձանագրվել է 67614 հիվանդության դեպք. գրանցվել են 4160 սուր աղիքային հիվանդություններ, 56560 վերին շնչուղիների սուր ինֆեկցիաներ, շնչառա-

կան օրգանների տուբերկուլյոզի 878 դեպք, ոջլոտության 2554 դեպք:

Ազգաբնակչության շրջանում առողջապահության գործում առկա չլուծված խնդիրները բացասական ազդեցություն են թողնում մարդկանց կյանքի միջին տևողության վրա. 2006 թ. այն կանանց մոտ կազմել է 71-72, տղամարդկանց մոտ՝ 68-70 տարեկան:

Հայրենական առողջապահական համակարգի խնդիրներից հարկ է նշել հետևյալները.

- բժշկական սարքավորումների, սանիտարական ավտոտրանսպորտային փոխադրամիջոցների մաշվածություն,
- բժշկական հաստատությունների (հատկապես՝ մարզերում) անբավարար հագեցվածություն ժամանակակից ախտորոշիչ սարքավորումներով,
- թանկարժեք, բարձր տեխնոլոգիական տեսակների բժշկական օգնություն ստանալու հարցում բնակչության պահանջների ծայրահեղ ցածր բավարարում:

Ավելին, արմատական բարելավման կարիք ունի հիվանդությունների կանխարգելման համակարգը:

Իմ գործունեության ծրագրային հիմնական խնդիրներից մեկը համարում եմ աջակցությունը՝ ժամանակակից առողջապահական համակարգ ստեղծելուն, որը հետապնդում է հետևյալ նպատակները.

- ամրապնդել Հայաստանի բնակչության առողջությունը, իջեցնել հիվանդացության, հաշմանդամության, մահացության մակարդակները,
- բարձրացնել բժշկական օգնության մատչելիությունն ու որակը,
- ամրապնդել առողջապահության առաջնային օղակը, պայմաններ ստեղծել նախահոսպիտալային փուլում արդյունավետ բուժօգնություն ցուցաբերելու համար,
- զարգացնել առողջապահության կանխարգելիչ ուղղվածությունը,
- բավարարել բնակչության պահանջարկը բժշկական օգնու-

թյան բարձր տեխնոլոգիական տեսակներում,

- լուծել պետական սոցիալական աջակցության կարոտ քաղաքացիների խնդիրները՝ բուժսպասարկման մասով:

Ժողովրդի առողջությունը համարում եմ ժամանակակից կայացած հասարակության ու զորեղ պետության և՛ պայմանը, և՛ նպատակը: Ըստ այդմ, առողջապահական արդիական համակարգի ստեղծումը լինելու է իմ գործունեության կարևորագույն գերակայություններից մեկը: Այս մոտեցումը պետք է դրվի առողջապահության ոլորտում պետության քաղաքականության հիմքում, որն ուղղված կլինի մարդկանց առողջության պահպանության ապահովմանը: Գիտակցելով, որ ներկա փուլում առողջապահության գնահատման նախկին չափորոշիչները չեն գործում, անհրաժեշտ է որոշել բուժօգնության այն օպտիմալ հնարավորությունները, որոնք պարտավոր է երաշխավորել պետությունը:

Այս գործում կարևոր պայման է բժշկական ծառայությունների ստանդարտացման անհրաժեշտությունը, պետական և ապահովագրական բժշկությունների համամասնության օպտիմալացումը, ինչը ենթադրում է.

- առողջապահության զարգացման ռազմավարական հիմնական ուղղությունների որոշում,
- առողջապահության հիմնական սկզբունքների և զարգացման խնդիրների որոշում,
- առողջապահության համակարգի պետականորեն պահպանման ապահովում,
- առաջին բուժօգնություն ցուցաբերող սկզբնական օղակի գերակայության ապահովում,
- բժշկական գիտության զարգացման երաշխիքների ապահովում,
- առողջապահության օպտիմիլացմանը միտված միջոցառումների ապահովում,
- բնակչության բոլոր խավերի համար բժշկական օգնության մատչելիություն,
- ընտանեկան բժշկության ինստիտուտի և ցերեկային ստացիո-

նարների ցանցի հետագա զարգացման, բնակչության դիսպանսերիզացման ապահովում,
- բուժիմնարկների սեփականաշնորհման գործընթացի թափանցիկության և օրինականության ապահովում,
- մոր և մանկան առողջության, սանիտարահիգիենիկ ու հակահամաճարակային ծառայությունների գործունեության կտրուկ բարելավմանն ուղղված միջոցառումների ապահովում,
- բժշկական ապահովագրության օրենսդրական հիմքերի սահմանում և երաշխիքների ստեղծում,
- բնակչության առաջին անհրաժեշտության բուժօգնության անվճար կազմակերպում:

Գտնում եմ, որ ժամանակակից առողջապահության պետական համակարգը պետք է նպատակաուղղված լինի հետևյալ խնդիրների իրականացմանը.

- հասնել բուժական և սանիտարահիգիենիկ միջոցառումների համակարգմանը՝ ապահովելով կանխարգելիչ և բուժական բժշկության սինթեզը, օգտագործելով ամբուլատոր-պոլիկլինիկական օղակների բոլոր հնարավորությունները, ժամանակին կազմակերպելով բնակչության դիսպանսերիզացումը,
- բժշկական հիմնարկների ցանցի օպտիմալացման հիման վրա ապահովել դրանց մատչելիությունը,
- վերականգնել գյուղական առողջապահությունը,
- ապահովել հիվանդանոցներին կից ցերեկային ստացիոնարների գործունեությունը,
- ստացիոնար ծառայության օղակում զարգացնել ինչպես նեղ մասնագիտական, այնպես էլ բազմապրոֆիլ հիվանդությունների բուժմանն ուղղված պայմանների ապահովումը,
- ֆինանսական լրացուցիչ միջոցներ հատկացնել սրտանոթային, հոգեկան, նարկոլոգիական, վարակիչ հիվանդությունների, չարորակ նորագոյացությունների կանխարգելմանը և բուժմանը,

- զարգացնել և եվրոպական չափանիշներին հասցնել ատամնաբուժական, մաշկավեներական, վիրաբուժական, թերապևտիկ և մյուս ծառայությունները,
- վերականգնել և խորհրդային վերջին տարիների մակարդակին հասցնել մոր ու մանկան առողջության պաշտպանությանն ուղղված միջոցառումների համալիր կազմակերպումը,
- ապահովել շտապբուժօգնության մատչելիությունը՝ ծառայությունը համալրելով բարձրակարգ մասնագետներով,
- ընդլայնել անվճար բուժօգնության ցուցաբերումը որոշակի հիվանդությունների դեպքում (սրտանոթային համակարգի, սուր վիրաբուժական, հոգեկան, նարկոլոգիական, վեներական, վարակիչ, չարորակ նորագոյացությունների, տուբերկուլյոզի, վնասվածքների, երիկամների), ինչպես նաև որոշակի ծառայությունների մատուցման ժամանակ (մոր ու մանկան, շտապօգնության, դիսպանսերիզացման, սանիտարահիգիենիկ, ամբուլատոր): Այդ ծառայությունների մատուցումը օրենսդրորեն ամրագրել Մեծ հայրենական, աֆղանական, ղարաբաղյան պատերազմների հաշմանդամների, մինչև 15 տարեկան երեխաների, միայնակ մայրերի, թոշակառուների և սպառողական նվազագույն զամբյուղից ցածր եկամուտներ ունեցող քաղաքացիների համար,
- քաղաքացիների վերը նշված խմբերին ապահովել անվճար դեղորայքով,
- բազմակողմանիորեն զարգացնել բժշկական գիտությունը, անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել գիտական նվաճումները բժշկական պրակտիկայում ներդնելու համար,
- գործող ենթակառուցվածքներին համապատասխանեցնել սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային, բուժկանխարգելիչ սպասարկումը:

Առողջապահության ոլորտում ռազմավարական հիմնական ուղղությունները համարում եմ.

- բնակչության առողջության պահպանումը, խնդիր, որը պետք է

դառնա պետության ամենօրյա հոգածության առարկան, և որի լուծումը կպահանջի նախարարությունների, գերատեսչությունների ու հասարակության գործունեության համակարգում,

- բնակչության անվճար բուժօգնության ծավալների զգալի աճ: Որոշակի հերթականությամբ՝ մշակված ծրագրերին համապատասխան, աստիճանական անցում ապահովագրական բժշկությանը,
- սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային ծառայությունների համապատասխանեցում ժամանակակից պահանջներին,
- Հայաստանի բնակչությանն ընդգրկել համընդհանուր դիսպանսերիզացման ոլորտ:

Վերը թվարկված հիմնախնդիրների իրականացման համար անհրաժեշտ են ֆինանսական միջոցներ: Առողջապահությունը շահութաբեր կառույց չէ և առանց պետական ֆինանսավորման ու արտաբյուջետային աղբյուրների աջակցության չի կարող գոյատևել: Առողջապահության ֆինանսավորման հիմնական աղբյուրները պետք է լինեն.

- առողջապահության բյուջեն, որը պետք է ֆինանսավորի պետպատվերը,
- բուժհիմնարկների հարկային բեռի թեթևացումից առաջացած միջոցները,
- առողջապահության երկարաժամկետ զարգացման հիմնավոր ծրագրերի կենսագործմանն ուղղված նպատակային ներդրումները,
- ծխախոտի և ալկոհոլային խմիչքների վաճառքի ակցիզային հարկերի, ինչպես նաև դեղորայքի վաճառքից ստացված ավելացված արժեքի հարկի որոշակի միջոցների ուղղումը առողջապահության բյուջե,
- վճարովի բժշկական ծառայություններից մուտքագրվող միջոցների մի մասը,
- մարդասիրական օգնությունը,

- ներքին ռեզերվների արդյունավետ օգտագործումը:

Առողջապահության բնագավառում ձեռնարկվող քայլերը պետք է նախատեսեն պետպատվերի շրջանակներում անվճար բուժման ենթակա հիվանդությունների ցանկի ընդլայնում, ինչը ենթադրում է առողջապահության տարեկան բյուջեի զգալի աճ:

Առողջապահության ոլորտում անհրաժեշտ է հետևողականորեն իրականացնել բժշկական հիմնարկների հարկային բեռի թեթևացում, ինչը հզոր խթան կդառնա սեփական եկամուտներ ստեղծելու գործում:

## 7. ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Հայաստանում ազգամիջյան հարաբերությունների բնագավառում վարվելիք քաղաքականության մեջ ղեկավարվելու եմ հետևյալ սկզբունքով. կանխել առանձին անհատների, խմբավորումների, կուսակցությունների կողմից ազգային-մշակութային հնարավորությունների օգտագործումը՝ ի վնաս ազգային փոքրամասնությունների, հասարակության և այլ անձանց շահերի:

Ազգային քաղաքականության առաջնահերթ խնդիրներ եմ համարում.

- ճանաչել Հայաստանի Հանրապետության էթնոմշակութային բազմազանությունը, որը, որպես հասարակության սեփականություն, ենթակա է պետական պաշտպանության,
- տնտեսական վերափոխումներ կատարելիս հաշվի առնել էթնիկ փոքրամասնությունների (ռուսներ, քրդեր, եզդիներ, ասորիներ, հույներ, ուկրաինացիներ, հրեաներ) տնտեսավարման ավանդական առանձնահատկությունները,
- խստիվ արգելել ու պատժել ազգային խտրականության դրսևորումները, ճիշտ նույն կերպ՝ բացառել արտոնություններ՝ ըստ ազգային հատկանիշների,
- անհրաժեշտ պայմաններ ստեղծել ազգային փոքրամասնու-

թյունների լեզվի, կրոնի և մշակույթի պահպանման ու հետագա զարգացման համար:

## ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Իմ ծրագրային խնդիրներն իրագործելիս հենվելու եմ ազգային գաղափարախոսության վրա:

Ազգային գաղափարախոսությունն արժեքների գնահատման և վերագնահատման միակ չափանիշն է ոչ միայն ներկայի, այլև անցյալի ու ապագայի համար: Այն կոչված է համազգային շահերի տեսակետից հետազոտել պատմական իրողությունները, ի հայտ բերել սխալները՝ դրանց կրկնությունը կանխելու համար:

Ազգային գաղափարախոսությունն ինքնապահպանման հավաքական բնազդի գիտակցված աստիճանն է, հավաքական գոյատևման երաշխիքը:

Ազգային գաղափարախոսությունը հայերիս համար կենսական անհրաժեշտություն է, այն պանթուրքիզմի գաղափարական հակակշիռն է, մի գաղափարախոսություն, որը պարբերաբար ճգնաժամային իրավիճակներ է ստեղծում մեր ժողովրդի համար՝ վերջնական նպատակ ունենալով ոչնչացնել հայկական պետականությունը: Այս իրողությունը չեն գիտակցում բոլոր նրանք, ովքեր ժխտում են ազգային գաղափարախոսության անհրաժեշտությունը՝ այն նենգափոխելով պատեհապաշտ կոչերով, կոսմոպոլիտիզմի քարոզչությամբ, դրսից պարտադրված փորձարարական ծրագրերով:

Ազգային գաղափարախոսության հիմքը համարում եմ համազգային հավաքականությունը, որը պահանջում է մշտական պայքար պառակտման ամեն մի դրսևորման դեմ: Ազգային գաղափարախոսությունը պետք է վեր լինի բոլոր խավերից և կուսակցություններից, ելնի համազգային շահերից, քանզի ազգի կորուստը չի կարող կորուստ չլինել նաև նրանց համար:

Ազգային գաղափարախոսությունը հասարակական կյանքի բոլոր պրոցեսները գնահատում է ազգի համախմբման, ազգային դիմագծի, բարոյականության և ոգու պահպանման տեսակետից:

Ազգային գաղափարախոսությունը իրականացնելիս հատուկ տեղ եմ հատկացնելու Սփյուռքին: Առանց Հայրենիքի չկա Սփյուռքի ազգային կեցությունը և, ընդհակառակը, առանց Սփյուռքի քաղաքական, նյութական, բարոյական և մշակութային օժանդակության անհնար է հայոց պետականության ամբողջական առաջընթաց զարգացման ապահովումը:

Ազգային գաղափարախոսությունը պետության և ժողովրդի համար վճռական, պատմության բեկումնային ժամանակահատվածներում իշխանությունների, կուսակցությունների, լիդերների գործունեությունը արժևորում է կորուստները նվազագույնի հասցնելու, դրանց համար պատասխանատվություն ստանձնելու, ժողովրդավարությունը զարգացնելու նրանց կարողության տեսակետից, ինչպես նաև գլոբալիզացմանը հատուկ պրոցեսների մեջ ներդաշնակ ընդգրկվելու, աշխատանքի համաշխարհային բաժանման գործում սեփական երկրի արժանապատիվ դերակատարությունն ապահովելու ընդունակությամբ:

ՀՀ նախագահ ընտրվելու դեպքում ես ձգտելու եմ ազգային գաղափարախոսությունը դարձնել հայոց պետականության հոգևոր հիմքը՝ հետևողականորեն աշխատելով, որ ազգային գաղափարախոսությունն իր դրոշի ներքո միավորի հայ հասարակության ազգային բոլոր ուժերը՝ հասնելով համայն հայության ընդհանուր նպատակի իրականացմանը, Ազգ-Պետության ստեղծմանը:

Ազգային գաղափարախոսության առանցքն եմ համարում՝

- ազգի գոյապահպանման, ամբողջական Հայրենիքի, ազգային անկախ պետականության, ազգային մշակույթի, կրոնի և եկեղեցու հիմնադրույթների ապահովությունը,
- իրավական և կազմակերպական համապատասխան այնպիսի կառուցվածքների ձևավորումը, որոնք աշխարհասփյուռ հայության համար կապահովեն անհրաժեշտ պայմաններ՝ հա-

մազգային խնդիրները լուծելու ճանապարհին:

Գտնում եմ, որ ազգային գաղափարախոսության հիմքում պետք է դրված լինի սոցիալական արդարությունը, վերջինիս բացակայությունն անհնար է դարձնում հասարակական համաձայնությունը: Ազգային գաղափարախոսությունը մերժում է ծայրահեղականությունը, սոցիալական խիստ բևեռացումը, երբ դեռևս ամբողջովին չձևավորված միջին դասը փորձում են կապող օղակ դարձնել ազգի միավորման, ազգային կայուն համաձայնության և համերաշխության համար: Ազգային գաղափարախոսությունը վնասակար ու անընդունելի է համարում ամեն մի վերափոխություն և գործողություն, որոնք, թեկուզ ժամանակավորապես, թուլացնում են միջին դասը, քանի որ դրանում դիտարկում եմ համազգային ուժի ամլացում:

Ազգային գաղափարախոսությունը կտրուկ սահմանափակում է իշխանությունների սխալ գործելու հնարավորությունները: Ոչ ոք, ոչ մի խումբ, ոչ մի կուսակցություն չպետք է իրավունք ունենա արդարացնելու սեփական սխալները, որոնք խարխլում են մի ամբողջ ժողովրդի անվտանգությունը, նրանց, ովքեր խաբված են:

Ազգային գաղափարախոսությունը տնտեսության ոլորտում առաջնային նշանակություն է տալիս արդյունաբերության և գյուղատնտեսության այն ճյուղերին, որոնք հնարավորություններ են ստեղծում Հայրենիքում մեծ թվով մարդկանց ապրուստի համար, նպաստում են մարզերի, հատկապես փոքր քաղաքների և գյուղական վայրերի համաչափ զարգացմանը, բնապահպանական ծրագրերի իրականացմանը:

Ազգային գաղափարախոսությունը հատուկ ուշադրություն է պահանջում գիտության այն բնագավառների նկատմամբ, որոնց զարգացման կենտրոնը օբյեկտիվորեն Հայաստանի Հանրապետությունն է, իսկ կրողը՝ հայկական էթնոսը: Քանի որ կրթությունը, գիտությունը և մշակույթը բնութագրում են ազգի ինքնատիպությունը, որոշում նրա տեղը աշխարհում, ազգային գաղափարախոսությունն անթույլատրելի է համարում նահանջը՝ կենսագործունեության այդ

ոլորտներում ձեռք բերած մակարդակից:

Ազգային գաղափարախոսությունը լեզվական և մշակութային ընդհանրության (հայկական էթնոսի) պահպանման պարտադիր պայման է համարում պետական լեզվամշակութային հետևողական քաղաքականության իրականացումը, քաղաքականություն, որը պետք է համախմբի ազգը:

Այսպիսով, ազգային գաղափարախոսության գերակայությունն եմ համարում ազգային բոլոր ուժերի միավորումը մեկ գերխնդրի՝ Ազգ-Պետության ձևավորման շուրջ, միաժամանակ պահպանելով քաղաքական, սոցիալական, փիլիսոփայական և կազմակերպչական կառուցվածքները, որոնք համայն հայության համար կապահովեն անհրաժեշտ պայմաններ՝ գլոբալիզացիայի մարտահրավերները հաղթահարելու և XXI դարում համազգային խնդիրները լուծելու համար:

## ՀԱՅԱՍՏԱՆ – ՍՓՅՈՒՌՔ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արդի պատմական, աշխարհաքաղաքական իրողությունների պայմաններում ողջ հայության առջև ծառանում են նաև Հայաստան-Սփյուռք հարաբերությունների նոր զարգացումները՝ համազգային համերաշխության և միասնության ոգով: Այս կտրվածքով էլ ներկայացնեմ հարցի մասին իմ մոտեցումները:

1. Հարկ է կարճ ժամանակում ստեղծել ոչ կառավարական կարգավիճակ ունեցող հեղինակավոր մի մարմին, որը կկանոնակարգի պետության տարբեր օղակների հարաբերությունները Սփյուռքի հետ: Հենց այդ մարմնի գործուն մասնակցությամբ և ազգային գաղափարախոսության հիման վրա պետք է մշակվեն Հայաստան-Սփյուռք միասնացմանն առնչվող բոլոր հարցերը՝ տնտեսական, քաղաքական, հոգևոր, մշակութային և այլն: Դրանք պետք է դրվեն պետական հոգածության ներքո:

2. Հայաստան-Սփյուռք ինտեգրացիայի նախապայմանը պետք է

լինի վերջինիս միասնության ապահովումը թե՛ առանձին գաղթօջախներում, թե՛ համասփյուռքյան միասնական ղեկավար մարմիններ ստեղծելու միջոցով: Այսօր Սփյուռքում, կարծում եմ, միասնության հնարավորությունը հայտնի չափով կախված է նաև Հայ առաքելական եկեղեցու միաբանությունից:

3. Հարկ է գիտակցել, որ առանց Հայաստանի Հանրապետության գոյության կդադարի Սփյուռքը: Ուստի, Հայաստանի գոյության ու զարգացման պատասխանատվությունը պետք է բաժանել բոլոր հայերի վրա՝ անկախ նրանց բնակության վայրից:

4. Հայաստան-Սփյուռք միասնականացումը հնարավոր է ապահովել միայն քաղաքական պատասխանատվության բարձր գիտակցումով: Պետք է մշակվեն մեխանիզմներ, որոնցով սփյուռքահայությունը կմասնակցի երկրի քաղաքականության գերակա հարցերի լուծմանը և քաղաքական որոշակի պատասխանատվություն կվերցնի իր վրա: Մեխանիզմներ, որոնք բխում են սահմանադրական փոփոխություններով ընձեռված հնարավորություններից, և որոնք կկանոնակարգվեն Սահմանադրությանը չհակասող օրենքներով:

5. Հայաստան-Սփյուռք հարաբերությունների մակարդակի բարձրացման արդիական հիմնահարցը հայկական գաղթօջախներ ունեցող երկրների հետ տնտեսական ինտեգրման համար բարենպաստ պայմանների ստեղծումն է: Սփյուռքահայերի դրամագլխի ներդրումները խրախուսող օրենքների ընդունմանը և դրանց պաշտպանվածության ապահովմանը զուգընթաց, երբ կապահովվի սփյուռքահայի սեփականատիրական իրավունքը, այդ թվում և հողի նկատմամբ, կսկսվի տնտեսական լիակատար միասնականացման գործընթացը:

6. Հայրենիքում սփյուռքահայի համար արտոնություններ նախատեսող օրենսդրական որոշակի դաշտի ստեղծումը միասնականացման պայմաններից մեկն է:

7. Հայ ժողովուրդն ունի համազգային քարոզչական կենտրոնացված մարմնի ստեղծման կարիք, որը կկարողանա համակարգել և ուղղություն տալ աշխարհասփյուռ հայության քաղաքական ու հասարակական կազմակերպությունների աշխատանքնե-

րին: Նման կենտրոնի ստեղծման նախաձեռնությունը պետք է ստանձնի պետությունը:

8. Պետք է էլ ավելի աշխուժացնել Հայաստանի և Սփյուռքի միջև մշակութային համագործակցության, երաժշտական, թատերական խմբերի հյուրախաղերի, նկարչական ցուցահանդեսների փոխանակման, մարզական միջոցառումների կազմակերպման գործը:

9. Հարկ է ընդլայնել Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում սփյուռքահայ ուսանողների ուսումնառության հնարավորությունները, նոր թափ հաղորդել սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման պարբերական դասընթացներին:

## ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Միջազգային ներկա իրադրությունը պահանջում է Հայաստանի Հանրապետության շուրջ ստեղծված իրավիճակի, մեր երկրի արտաքին քաղաքականության գերակայությունների և դրա ռեսուրսային հնարավորությունների որոշման ու ապահովման վերահմաստավորում և վերագնահատում:

ՀՀ արտաքին քաղաքականության ուղեգծի առաջնային գերակայությունը պետք է լինի անձի, հասարակության և պետության անվտանգության ու շահերի պաշտպանությունը: Անվտանգություն ասելով՝ պետք է ելնենք այն բանից, թե ինչ իմաստ ենք դնում այդ հասկացության մեջ: Դա, նախևառաջ, ազգային էկոնոմիկայի կայուն գործունեության ապահովումն է, աղքատության հաղթահարումը, միջքաղաքակրթական երկխոսության նախաձեռնումը Ադրբեջանի և Թուրքիայի հետ: Այդ գործընթացների շրջանակներում գլխավոր ջանքերը պետք է ուղղված լինեն հետևյալ հիմնական նպատակների իրագործմանը.

- տարածքային ամբողջականության և երկրի ինքնիշխանության ամրապնդում ու պահպանում,
- սահմանադրական կարգի հիմքերի ամրապնդում, ժողովրդա-

վարական բարեփոխումների հաջող իրագործում, բնակչության կենսամակարդակի բարձրացում, Հայաստանի առաջընթաց զարգացման, տնտեսության վերելքի, մարդու իրավունքների և ազատությունների պահպանման համար արտաքին բարենպաստ պայմանների ստեղծում,

- Հայաստանի Հանրապետությանը հարակից տարածաշրջաններում լարվածության և կոնֆլիկտների պոտենցիալ օջախների առաջացումը կանխելու ու եղածների վերացմանը ցույց տրվող աջակցություն, հայկական սահմանների պարագծով բարիդրացիության գոտու ձևավորում,
- Հայաստանի Հանրապետության ազգային գերակայությունները որոշելիս արտասահմանյան երկրների ու միջպետական միավորումների հետ խնդիրների լուծման գործառույթներում համաձայնության և ընդհանուր շահերի որոնում,
- Հայաստանի քաղաքացիների և Սփյուռքի մեր հայրենակիցների իրավունքների ու շահերի համակողմանի պաշտպանություն:

Հայաստանի Հանրապետության շահերը շաղկապված են նաև այլ գործոնների հետ, այդ թվում՝

- համաշխարհային տնտեսության գլոբալացում, ընդսմին, մարդկային փոխառնչությունների ընդլայնման, սոցիալ-տնտեսական առաջընթացի լրացուցիչ հնարավորությունների հետ կապված գլոբալիզացումը միաժամանակ բերում է և նոր վտանգներ հատկապես տնտեսապես թույլ պետությունների համար,
- համաշխարհային էկոնոմիկայում և քաղաքականության մեջ միջազգային ինստիտուտների դերի ու կիրառվող մեխանիզմների ուժեղացում, որը պայմանավորված է երկրների փոխկապվածության բնականոն աճով, միջազգային համակարգի կառավարելիության ապահովման անհրաժեշտությամբ,
- տարածաշրջանային պետությունների ռազմաքաղաքական մրցակցություն (Հարավային Կովկասի տարածաշրջան):

Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման գործընթացը վտանգավոր փակուղուց դուրս բերելու կարևորագույն նախապայման եմ համարում նախագահական առաջիկա ընտրությունների ազատ, արդար, ժողովրդավարական պահանջներին հարիր անցկացումը: Վերստին հաստատում եմ հիմնահարցի խաղաղ կարգավորմանն ուղղված բանակցությունների հիմքում դրված անժխտելի հետևյալ իրողությունների ընդունումը.

- Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորումը պետք է կայանա ազգերի ինքնորոշման, մարդու իրավունքների պահպանման գերակայության ճանաչման շրջանակներում,
- հիմնահարցի խաղաղ կարգավորման հիմքում պետք է դրվեն միջազգային իրավունքի բոլոր սկզբունքներն ու նորմերը,
- հիմնահարցի խաղաղ կարգավորման, Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի որոշման և ոչ մի պայմանավորվածություն չի կարող լեգիտիմ համարվել առանց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրինական ընտրությունների արդյունքում ձևավորված իշխանությունների լիարժեք մասնակցության և հավանության,
- փոխզիջումների հիմքում պետք է դրվեն հակամարտող կողմերի՝ Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի իշխանությունների պայմանավորվածությունները,
- Հայաստանն ու Ադրբեջանը միմյանց նկատմամբ չունեն տարածքային պահանջներ,
- Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորող բանակցային գործընթացի ընդունելի համակարգող է շարունակում մնալ ԵԱՀԿ Մինսկի խումբը:

Վերը շարադրված սկզբունքների և իրողությունների ընդունումը, կարծում եմ, կարագացնի Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման ողջ գործընթացը՝ նպաստելով Հարավային Կովկասում կայուն խաղաղության հաստատմանը:

Համոզված եմ, որ հակամարտող կողմերից յուրաքանչյուրի անվ-

տանգությունն ու զարգացումը պետք է մեծապես ամրապնդվի ոչ թե ի հաշիվ մյուս կողմի թուլացման, այլ ընդհակառակը՝ այդ կողմի անվտանգության զուգահեռ ամրապնդման ու զարգացման:

Տարածաշրջանում անվտանգության ապահովման հիմնարար սկզբունք պետք է դառնա՝ յուրաքանչյուր երկրի անվտանգությունը բոլորի անվտանգությունն է կարգախոսը, իսկ դրա հիմքում էլ պետք է դրվի՝ Ֆրանկլին Դելանո Ռուզվելտի հայտնի արտահայտությունը. «Որտեղ էլ որ խախտվի խաղաղությունը, աշխարհն ամենուր է վտանգված դառնում»: Հարավային Կովկասի երկրների անվտանգությունը ներառում է ոչ միայն պաշտպանությունը արտաքին վտանգներից, այլ նաև անհրաժեշտ է դարձնում տարածաշրջանի քաղաքական, տնտեսական և հումանիտար զարգացումը:

Վերջին տարիներին ակնհայտ է հարևան երկրների (Թուրքիա և Ադրբեջան) կողմից վարվող քաղաքականության ուղղվածությունը, որի առանցքն է Հայաստանի Հանրապետության դուրսմղումը հարավկովկասյան տարածաշրջանում իրականացվող տնտեսական խոշորածավալ ծրագրերից: Խոսքը Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի, Բաքու-Թբիլիսի-Էրզերում գազամուղի և Կարս-Ախալքալաք-Թբիլիսի-Բաքու երկաթգծի կառուցման ու շահագործման մասին է: Դրան զուգահեռ արդեն իսկ ակնհայտ է, որ Թուրքիա-Ադրբեջան-Վրաստան տնտեսական ինտեգրումը վերափոխվում է ռազմավարական նշանակության ռազմաքաղաքական դաշինքի: Ստեղծված այս նոր իրավիճակում մեր պետության հնարավորությունները հարևան երկրների հետ բարիդրացիական հարաբերություններ ստեղծելու գործում օբյեկտիվորեն սահմանափակվում են: Դա էլ իր հերթին հրամայական է դարձնում Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ գերակայությունների հստակեցումը: Առաջնությունը պետք է տրվի հայ-ռուսական հարաբերությունների զարգացմանը և հարստացմանը՝ ռազմավարական գործընկերության սկզբունքով՝ Կոլեկտիվ Անվտանգության Պայմանագիր Կազմակերպության շրջանակներում: Այս գործում կարևոր կռվան է երկու երկրների տնտեսական ինտեգրացիան և միասնական տնտեսական գոտի ստեղծելու հա-

մար անհրաժեշտ նախադրյալների ապահովումը, որը ենթադրում է հարկային ու մաքսային օրենսդրության փոխհամապատասխանեցում: Դրա հետ մեկտեղ, չի կարող կասկածի ենթակա լինել այն փաստը, որ համակովկասյան կայունացման առանցքը պետք է լինեն միայն և բացառապես Ռուսաստանը, Հայաստանը, Ադրբեջանն ու Վրաստանը: Մյուս շահագրգիռ պետությունները կարող են ներգրավվել Կովկասում առկա վիճահարույց հարցերի կառուցողական, խաղաղ կարգավորման պրոցեսի մեջ՝ չհավակնելով, սակայն, թելադրել իրենց կամքը: Այս հիմքի վրա կարելի է և պետք է էլ ավելի խորացնել փոխշահավետ տնտեսական համագործակցությունը Իրանի հետ, ինչպես նաև երկխոսություն վարել Թուրքիայի հետ՝ առանց նախապայմանների:

Հարավային Կովկասի տարածաշրջանում կոլեկտիվ անվտանգությամբ շահագրգռված ԱՄՆ-ը և Եվրամիությունը կարող են մեծապես նպաստել համագործակցության և շահավետ փոխգործողությունների, տնտեսական բարեփոխումների անցկացմանը, ժողովրդավարության զարգացման և ժողովրդավարական արժեքների ընդհանուր սկզբունքների հաստատմանը: Այդ գործում նրանց դերը և տեղը դժվար է գերագնահատել:

Առանձնահատուկ նշանակություն կտրվի այն երկրներին, որտեղ կան հայկական գաղթօջախներ՝ սփյուռքահայության իրավունքների պաշտպանությունը համարելով հայոց պետականության արտաքին քաղաքական առաջնահերթ խնդիրներից մեկը:

Արտաքին քաղաքականության մեջ լրջագույն քայլեր պետք է կատարել հատկապես ԱՊՀ երկրների հետ տնտեսական կապերի, հումքի և սպառման շուկաների վերականգնման ուղղությամբ: Կարևորում ենք նաև Հայաստանի ներգրավումը տարածաշրջանում միջազգային տնտեսական նոր ծրագրերի մշակման գործում՝ այդ նպատակով լիարժեք օգտագործելով Հայաստանի տնտեսության մեջ ներգրավված ռուսական կապիտալի ներկայությունը՝ ի դեմս «Գազպրոմ»-ի, «ՌԱՕ-ԵԷՍ»-ի և «Վիմպելկոմի»:

Հարավային Կովկասում ստեղծված արտաքին քաղաքական

բարդ իրադրության պայմաններում հայկական պետության համար խիստ անհրաժեշտություն է դառնում պատմության տված դասերի արագ յուրացումը, ի հաստատումն այն բանի, որ ազգային ինքնիշխանությունը պետք է գնահատել որպես ժողովրդի համար բարձրագույն նվաճում, աշխարհաքաղաքական խաղաղ միջավայրի հաստատմանն աջակցում՝ որպես մեզ համար կենսականորեն կարևոր ազգային շահ, ինչպես նաև բոլոր պետությունների հետ կապերի հաստատում և զարգացում՝ որպես ազգային անվտանգությանը նպաստող առավել արդյունավետ միջոց:

Կարևորում եմ նաև եվրոպական կառույցներին ինտեգրման ոլորտում խոսքից գործի անցնելը, ԱՄՆ-ի հետ թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական հարաբերությունների խորացումն ու զարգացումը, Մերձավոր արևելքում և Ասիայում փոխշահավետ կապերի աշխուժացումը:

Միաժամանակ կարևոր է, որ Հայաստանը, Թուրքիան և Ադրբեջանը բարյացակամության մթնոլորտում սկսեն իրենց տարածայնությունների կարգավորման գործընթացը՝ ելնելով առկա իրողություններից: Հայաստանի քաղաքացիները պետք է սթափ գիտակցեն, որ Հայ դատի արդարացի լուծումը պետք է ընթանա խաղաղ միջոցներով՝ հենվելով պատմական իրողությունների և համընդհանուր ճանաչում գտած միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների վրա: Ներկայումս հրատապ է դառնում վերոնշյալ երկրների միջև հարաբերությունների կարգավորման գործընթացի իրագործումը, որը բաժանվում է բազմաթիվ բաղադրատարրերի և ուղղված է համընդհանուր ձևով լուծելու այնպիսի պրոբլեմներ, ինչպիսիք են՝ Ցեղասպանության ժառանգությունը, Լեռնային Ղարաբաղի անկախության միջազգային ճանաչումը և տարածաշրջանային կոլեկտիվ անվտանգության միացյալ համակարգի ստեղծումն ու դրա գործունեությանը կողմերի հնարավոր մասնակցությունը: Նշված երկրների փոխադարձ անվտանգության ապահովման համար պայմանավորվածությունների ձեռքբերման լավագույն կռվան պետք է լինեն վիճահարույց հարցերի համալիր լուծման վրա հիմնված գործընկերային

դիվանագիտական հարաբերությունների հաստատումը, այլ ոչ թե դեկլարատիվ հայտարարությունները դրանք կարգավորելու վերաբերյալ:

Համոզված եմ, որ ահա այսպիսին պետք է լինի Հայաստանի և հայ ժողովրդի ռազմավարական ընտրությունն առաջիկա տարիներին:

Նման ընտրությունը կախված կլինի գավառամիտ մտածելակերպի հրաժարումից և իշխանության ինստիտուտների նկատմամբ հասարակության մեջ տիրող անվստահության մթնոլորտի հաղթահարումից, պետության մեջ ազնվության, պատասխանատվության մթնոլորտի հաստատումից ու ներքին համաձայնությունից՝ ազգի մարդկային բոլոր ռեսուրսները ժամանակակից շրջափուլում միաբանելու նպատակով: Դա հայ ժողովրդի միակ հնարավորությունն է իր կենսունակությունն ապացուցելու, երկար սպասված և ամբողջական անկախությունը ձեռք բերելու, ապագա զարգացման ամուր հիմքերը դնելու համար:

## ԱՄՓՈՓՈՒՄ

«Արարման ծրագիրը» կյանքում իրագործելիս առաջնորդվելու եմ «Ազատություն, Արդարություն, Համերաշխություն» կարգախոսով: Իմ ըմբռնմամբ Ազատություն նշանակում է ազատ լինել պարտադրված կախվածությունից, որը մարդուն, հասարակությանը, երկիրը զրկում է ստեղծարար ուղիներ, կենսակերպ ընտրելու հնարավորությունից, ոտնահարում է անձնական և ազգային արժանապատվությունը:

Ձգտելու եմ, որպեսզի Հայաստանում Ազատությունը հասարակական իրողություն դառնա, երբ հանրապետության բոլոր քաղաքացիներին կընձեռվեն տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային ազատ զարգացման փաստացի հնարավորություններ:

Ձգտելու եմ Արդարության, որը օրենքի ուժով ամեն մի քաղաքացու

հասարակության մեջ կերաշխավորի հավասար իրավունքներ և կենսագործունեության ոլորտում համարժեք հնարավորություններ՝ անկախ նրա զորությունից, իշխանությունից, դիրքից:

Ձգտելու եմ հասարակության մեջ հաստատել Համերաշխության սկզբունքը, որին հետևելով՝ դարեր ի վեր պետականությունից զրկված հայ ժողովուրդը կարողացել է տոկալ ու գոյատևել: Գլոբալիզացման մարտահրավերների պայմաններում հասարակության անդամները կարող են մարդավայել ապրել, համագործակցել միայն այն դեպքում, երբ պատասխանատվություն կզգան իրենց և այլոց համար ու կօգնեն միմյանց:

Համերաշխությունը, իբրև այդպիսին, ապահովվում է այն դեպքում, երբ այդ սկզբունքը գործում է նաև ուժով անհավասարների, հակառակ շահեր հետապնդող մրցակիցների միջև: Բնավ չնշանակելով նահանջ հայացքներից ու սկզբունքներից, նման հայեցակարգը պարտադրում է ուժեղին՝ սատարել թույլերին, իսկ ամենքիս՝ համատեղ ջանքեր գործադրել՝ ի շահ յուրաքանչյուր մարդու, ի շահ ազգի, ի շահ Հայրենիքի:

* * *

Ի մի բերենք ներկայացված Ծրագրի հիմնական դրույթները.

Ծրագրի նշանաբանն է «Հանուն ազգային միաբանության», իսկ նպատակն է համազգային համաձայնության կայացումը, կենսականորեն անհրաժեշտ այն հարցերի արձանագրումը, որոնք հուզում են համայն հայությանը, Հայաստանի Հանրապետության ամեն մի քաղաքացու, հասարակության բոլոր խավերին: Փորձ է արվել պարզ ու հստակ ներկայացնել, թե ինչպիսի տագնապահարույց վիճակում է հայտնվել երկիրը, գլոբալ ինչպիսի մարտահրավերներ են ծառացած Հայաստանի առջև մեր օրերում: Ծրագրում առաջարկվում են հայոց պետականության հիմքերը ճարակած ճգնաժամից դուրս գալու կոնկրետ, համակարգված ուղիներ:

Մեզ հարկավոր է կենսունակ և հզոր Հայաստան, որն ի զորու կլինի դիմակայել մարտահրավերներին, այլ ոչ թե տկար ու հիվանդոտ հասարակական մի մարմին: Սեփական պատասխանատվության գիտակցումով հայ ժողովրդի և Հայաստանի ապագայի համար՝ ի լուր ամենքի հայտարարում եմ, որ հանուն համազգային առաջընթացի պատրաստ եմ համագործակցել ազգային շահերը պաշտպանող բոլոր ուժերի հետ՝ հասարակության համախմբման նպատակով՝ Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի համար պատմականորեն բախտորոշ ներկա փուլն այսուհետ անկորուստ անցնելու, XXI դարի քաղաքակիրթ ազգերի շարքում իր արժանի տեղն ապահովելու համար:

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԱՌԱՋԻԿԱ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԻ ՈՐՊԵՍ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

2007 թ. նոյեմբերի 27-ին տեղի է ունեցել «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահության նիստը: Օրակարգում դրված էր մեկ հարց. 2008 թ. ՀՀ նախագահական ընտրություններում Արտաշես Գեղամյանի որպես նախագահի թեկնածու առաջադրելու հարցը: Հետաքրքրական է, որ դեռ սեպտեմբեր ամսին կայացած «Ազգային Միաբանություն կուսակցության» հոբելյանական կոնֆերանսի ժամանակ Արտաշես Գեղամյանն ուղղակի ասել էր, որ նախագահական գալիք ընտրությունները չի համարում սպորտային միջոցառում՝ վազքի մրցում, իր բառերով ասած՝ «ոմանք կարևորում են ոչ թե ֆինիշին հասնելը, այլ վազքի ժամանակ տաքանալու մոտեցումը»: Պրն Գեղամյանը դիմել էր գործընկերներին իր անձը առաջադրելու համար տալ այդ որոշման հիմնավորումները, և տեղի ունեցած կուսակցության նախագահության նիստում բերվեցին սպառիչ փաստարկներ Ա.Գեղամյանի առաջադրման օգտին:

Սիրելի՛ ընթերցող, Ձեզ ենք ներկայացնում նախագահության նիստին հաջորդած մամուլի ասուլիսի ժամանակ հնչած այդ ելույթները*:

---

»168 ժամ«, 29-30. XI. 2007:

## ԱԼԵՔՍԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Վերջերս ՀՀՇ առաջնորդ Տեր-Պետրոսյանը և նրան սպասարկող որոշ գործիչներ ու լրատվամիջոցներ իրենց կոռեկտ չեն պահում «Ազգային Միաբանություն կուսակցության», Արտաշես Գեղամյանի և, ամենակարևորը, մեր ժողովրդի նկատմամբ: Նրանց ծավալած գործողություններ-ը և մամուլում առկա հրապարակումները ստիպում են, որ Հայաստանում ընթացող քաղաքական ներկայիս զարգացումների մասին ողջ ճշմարտությունը՝ իր բոլոր ծանր կողմերով, ներկայացնենք ժողովրդին և նախազգուշացնենք դրանց վտանգավորության մասին: Կրկնում եմ, մեր հորդորներն այն մասին, որ անհրաժեշտ է երկրի համար այս պատասխանատու օրերին դրսևորել կոռեկտություն՝ մնացին անարձագանք: Մեր զուսպ կեցվածքը կուսակցության և Գեղամյանի հասցեին ուղղված զազրախոսությունները հեղինակների նկատմամբ բանից պարզվում է վերջիններիս քաջալերեցին: Ուստի, հարկադրված եմ նշել, որ եթե մենք խոսում ենք Լևոն Տեր-Պետրոսյանի և նրա թիմի մասին, ապա իրականում նկատի ունենք ընդհատակյա գանձագող-բիզնեսմեններին և պոպուլիստ-ռևանշիստներին: Անշուշտ, լևոնապաշտների գաղափարախոսությունը և շահերը ժողովրդի իղձերի հետ ընդհանուր ոչինչ չունեն, նրանց փափագած նպատակը երկիրը ցնցումների ու շանտաժի ենթարկելով՝ «ով մեզ հետ չէ, մեր թշնամին է» կարգախոսով, իրենց կուռքին նորից պետության գլուխ կանգնած տեսնելն է:

Անհրաժեշտ է նշել, որ, այո, Տեր-Պետրոսյանն անձամբ ինքն է աճեցրել այսօրվա բյուրոկրատիայի և օլիգարխիայի կարկառուն բազմաթիվ դեմքերին ու նրա վրա է ծանրացած քաղաքական «աղետների» պատասխանատվությունը՝ ՀՀ քաղաքացիների նկատմամբ կազմակերպված սպանությունների և բռնությունների, ցուրտ

ու մութ տարիների, ժողովրդի տոտալ աղքատացման և ալան-թալանի դրսևորումները: Նկատենք, որ Տեր-Պետրոսյանը և նրա մերձավորները ցինիկորեն խոսում են բարոյականությունից ու դավաճանությունից, բարբաջում են ծախվածությունից, երբ հենց իրենց ներկայիս գործողությունները ոչ այլ ինչ են, քան բարոյազրկության և ծախվածության դասական օրինակներ: Եթե նրանք իրենց բարոյական են համարում, ապա այսօր ինչո՞ւ են սպարապետ Վազգեն Սարգսյանի ընտրած ճանապարհը խարխլում: Ի՞նչ, չլինի, թե մոռացել ենք, որ դեռ 1998թ. իշխանափոխության հիմնական դերակատարներից մեկը, եթե ոչ ամենագլխավորը, Վազգեն Սարգսյանն էր: Մարդ, ով գիտակցել և ֆիքսել էր, թե Տեր-Պետրոսյանի իշխանավարության ամեն մի լրացուցիչ օրը ինչ անդառնալի կորուստներ ու մեծ վտանգ էր սպառնում հայոց պետականության և Լեռնային Ղարաբաղի հարցի հայանպաստ լուծման գործին:

Հիմա ո՞վ է ում ծախվել և ո՞վ է ում հիշատակը պղծում. մե՞նք, որ դեռ 1997թ. հոկտեմբերի 17-ին ժողովրդին ուղղված հայտնի կոչի մեջ տվել էինք Տեր-Պետրոսյանի և նրա վարչախմբի սկզբունքային խիստ գնահատականը: Գնահատական, որտեղ հիմնավորված ներկայացրել էինք երկրում իրականացվող ազգակործան քաղաքականությունը և պահանջել Տեր-Պետրոսյանի հրաժարականը: Եվ հիմա էլ նույնն ենք ասում և՛ նախկին իշխանությունների և՛ ներկա իշխանավորների գործունեության մասին: Ի՞նչ, պետք է Տեր-Պետրոսյանի թիմակիցների նման կերպարանափոխվեի՞նք կամ ծախվեի՞նք: Ի դեպ, մեր ժողովուրդը լավ գիտի, որ գործող իշխանություններին մեր կուսակցությունը Արտաշես Գեղամյանի գլխավորությամբ շատ ավելի խիստ գնահատականներ է տվել: Այնպես որ հին ու նոր իշխանությունների գնահատման առումով մեր խիղճը առավել քան հանգիստ է:

Ուստի, մենք գտնում ենք, որ կրկնակի ծախված և դավաճան են նրանք, ովքեր այսօր Տեր-Պետրոսյանին, իսկ երեկ գործող իշխանություններին էին սատարում: Իմիջիայլոց, վերջիններս դեռ 1998թ. հանրահայտ առնետավազքի ճանաչված չեմպիոններն էին, հիմա էլ

սուրբ են ձևանում: Տնաշենները գոնե թասիբ ունենան և դավաճանելուց առաջ գնան Եռաբլուր ու նահատակների շիրիմներից քավություն աղերսեն:

Ամփոփելով խոսքս նշեմ, որ, ցավոք, Տեր-Պետրոսյանն այսօր էլ հույսը դրել է նախկինում իրենից փախած, Վազգեն Սարգսյանին ուրացած, ներկա իշխանությունների օրոք պաշտոնավարած, նրանց էլ հետո դավաճանած բոլոր ժամանակների առնետավազքի ակտիվ մասնակիցների վրա: Վերջ տվեք ձեր քաղաքական քյանդրբազությունններին. սա է մեր կոչը ձեզ: Իսկ ամենազավեշտալին այն է, որ Լևոն Տեր-Պետրոսյանն իր բնութագրմամբ «ավազակապետությունը», այս թիմով, փաստորեն, ցանկանում է փոխարինել «առնետապետությամբ»: Չի ստացվի, ժողովուրդը չի թողնի:

Ուստի, այս իրավիճակում մենք իրավունք չունենք դիտորդի կարգավիճակում լինել:

Ահա այս վտանգների գիտակցումն է, որ մենք այսօր որոշում կայացրեցինք նախագահական առաջիկա ընտրություններում անպայման առաջադրել Արտաշես Գեղամյանի թեկնածությունը և նրա հետ միասին, ժողովրդի լայն աջակցությամբ պայքարել հայոց պետության լուսավոր ապագան կերտելու համար:

*Ալեքսան Կարապետյան*
*«Ազգային Միաբանություն կուսակցության»*
*փոխնախագահ*

## ԿՈՐՅՈՒՆ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԽՈՍՔԸ

2007 թ. մայիսի 12-ի Ազգային ժողովի անօրինական ընտրություններից հետո մենք փորձում էինք նախևառաջ սեփական պատասխանատվության բաժինը գտնել այն ամենում, ինչը տեղի էր ունեցել: Փորձում էինք կենտրոնանալ ու վերլուծել, թե երկիրը ներքին և արտաքին ինչ մարտահրավերների առաջ է կանգնած, և որոնք են «Ազգային Միաբանություն կուսակցության» անելիքները մեր երկրի համար խիստ պատասխանատու այս ժամանակաշրջանում: Եզրակացությունը, որին մենք հանգեցինք, մեկն էր. հայոց պետականության բարձրագույն շահը պահանջում է ազգը միաբանելու խնդիրը դարձնել արդի ժամանակաշրջանի կարևորագույն գործոնը: Հաշվի առնելով այդ ամենը՝ «Ազգային Միաբանություն կուսակցությունը» սեպտեմբերի 7-ին հանդես եկավ հայտարարությամբ, որով քաղաքական բոլոր ուժերին կոչ էր անում համախմբվել ազգը միաբանելու գաղափարի շուրջ՝ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման կոնսենսուսային, փոխհամաձայնեցված դիրքորոշում որդեգրելու նպատակով: Մեր նման սկզբունքային դիրքորոշման շրջանակներում են տեղի ունեցել Արտաշես Գեղամյանի հանդիպումները Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ղեկավարներ Վահան Հովհաննիսյանի և Արմեն Ռուստամյանի, ՀՀՇ-ի առաջնորդ Լևոն Տեր-Պետրոսյանի, Արարատ Զուրաբյանի, ԱԻՄ անփոփոխ ղեկավար Պարույր Հայրիկյանի, ԱԺԿ նախագահ Շավարշ Քոչարյանի, ՕԵԿ նախագահ Արթուր Բաղդասարյանի, Դեմոկրատական կուսակցության ղեկավար Արամ Սարգսյանի, Հնչակյան կուսակցության ղեկավար Լյուդմիլա Սարգսյանի և այլոց, ինչպես նաև հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի, հանրապետության վարչապետ Սերժ Սարգս-

յանի հետ: Մենք մեզանից կախվածը արեցինք և մեզ հասանելիք ճանապարհն անցանք: Գոհունակությամբ նշեմ, որ հիշատակված բոլոր հանդիպումների ժամանակ կարևորվել է հանրապետությունում և նրա շուրջ ստեղծված իրավիճակում ուժերը մեկտեղելու, միաբանվելու գաղափարը: Ավելին, ձեռք է բերվել պայմանավորվածություն քաղաքական առաջիկա գործընթացներում պահպանել փոխադարձ կոռեկտություն: Ավա՜ղ, Լևոն Տեր-Պետրոսյանի և նրա թիմակիցների նյարդերը տեղի տվեցին: Սեփական անձը ինքնահռչակելով որպես միակ և եզակի ընդդիմադիր բևեռ, նախկին իշխանությունների շահերը սպասարկող մամուլը վերջին շրջանում սկսեց շանտաժի աննախադեպ քարոզարշավ՝ ուղղված քաղաքական այն բոլոր ուժերի դեմ, ովքեր բնավ չէին կարող, չդավաճանելով սեփական սկզբունքներին, սատարել Լևոն Տեր-Պետրոսյանին: Հիշեցնենք այդ մարդկանց, որ «Ազգային Միաբանություն կուսակցության» հիմնադրումից ամիսներ անց, 1997թ. հոկտեմբերի 17-ին մենք հանդես էինք եկել կոչով՝ ուղղված հայ ժողովրդին, որում տրված էր նախորդ իշխանությունների գործունեության քաղաքական գնահատականը: Մեր կոչին միացել էին ակադեմիկոսներ Սիլվա Կապուտիկյանը, Լենդրուշ Խուրշուդյանը, Վլադիմիր Խոջաբեկյանը, Ռաֆայել Ղազարյանը, Լենսեր Աղալովյանը, գրականության և մշակույթի անվանի գործիչներ Սոս Սարգսյանը, Ռազմիկ Դավոյանը, Ռուբեն Հովսեփյանը, Արմեն Հովհաննիսյանը և ուրիշներ: Ասեմ միայն, որ ժամանակը ցույց տվեց մեր գնահատականների արդարացիությունը, գնահատականներ, որոնց արդիականությունն ու հրատապությունը մենք զգում ենք և այս օրերին: Արտաշես Գեղամյանի հեղինակած «Հակաճգնաժամային ծրագրում» գիտականորեն հիմնավորված վերլուծությամբ տրված են ներկայիս իշխանությունների վարած քաղաքականության արատավոր բոլոր կողմերի ամենասուր գնահատականները: Մատնանշվել են կաշառակերության, կոռուպցիայի վտանգավոր չափերի հասնող դրսևորումները և դրանց հասցեատերերը, ինչպես նաև՝ այդ արատները հաղթահարելու ուղիները:

Հաշվի առնելով ներկայիս գործող Սահմանադրության այն դրույթները, համաձայն որոնց երկրի կառավարության կազմը և վարչապետը առաջադրվում և հաստատվում են Ազգային ժողովում մեծամասնություն ունեցող քաղաքական ուժերի կողմից, իսկ մենք գիտենք, որ այնտեղ մեծամասնություն են կազմում Հայաստանի Հանրապետական կուսակցությունը, «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը և նրանց հետ համագործակցող Հայ Հեղափոխական Դաշնակցությունը, ուստի երկրում իրականացվող բարեփոխումներ կատարելու եզակի հնարավորությունը պայմանավորված է այլընտրանքային երրորդ բևեռից հանրապետության նախագահի ընտրությամբ: Ահա այս ճշմարտության և քաղաքական իրողության գիտակցումից ելնելով, ինչպես նաև հաշվի առնելով մեր կուսակցության ղեկավար Արտաշես Գեղամյանի բացառիկ գիտելիքների պաշարը, նրա մեծ փորձառությունը, թե՛ ներքին և թե՛ արտաքին ոլորտներում նրա հմտությունները, պահի լրջությունն անառարկելի են դարձնում նրան որպես ՀՀ նախագահի թեկնածու առաջադրելու հրամայականը: Մենք մերժում ենք թե՛ նախկին, թե՛ ներկա իշխանությունների վարած արատավոր քաղաքականությունը: Այստեղ ասեմ նաև, որ եթե գործող վարչակազմը իրավամբ գիտակցում է, որ պետք է վերջ դնել կաշառակերության, կոռուպցիայի, անպատժելիության մթնոլորտի դրսևորումներին և եթե իրենք անկեղծ են այս ամենի դեմ պայքար մղելու սեփական հայտարարություններում, ապա նրանք առաջին հերթին պետք է շահագրգռված լինեն, որ երկրի ապագա նախագահը կաշկանդված չլինի հին ու ներկա իշխանությունների արատավոր կապանքներից:

Ահա այս գիտակցումով այսօր «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահությունը միաձայն որոշում կայացրեց Արտաշես Գեղամյանին առաջադրել ՀՀ նախագահի թեկնածու:

*Կորյուն Առաքելյան*
*«Ազգային Միաբանություն կուսակցության»*
*փոխնախագահ*

## ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴԽԱՆՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Արտաշես Գեղամյանի առաջադրումը Հայաստանի Հանրապետության նախագահի առաջիկա ընտրություններին «Ազգային Միաբանություն կուսակցության» Երևանի տարածքային կազմակերպություններում դիտվում է որպես հրամայական պահանջ: Ձեզ ներկայացնեմ այս դիրքորոշման առիթով տեղերում բերված հիմնավորումները: Նշեմ, որ դրանք շատ են և արվել են որպես ճշմարիտ փաստերի տրամաբանական մեկնաբանություն, որպես Գեղամյանի ելույթների, նրա ծրագրերի ու առաջ քաշած գաղափարների խիստ կարևորության և օգտակարության գնահատում: Բերված փաստարկներն արվել են որպես Արտաշես Գեղամյան փորձառու և բանիմաց քաղաքական գործչի կատարած քայլերին ու ձեռնարկումներին ցուցաբերած միահամուռ հավանության վկայություն:

Գեղամյանի առաջադրման հիմնավորումների մեջ առանձնանում է նրա հայրենասիրական դրսևորումների թեման, ինչը գիտական և դիվանագիտական բարձր ու նախադեպը չունեցող մակարդակով արտահայտվել է Եվրախորհրդում և ԵԱՀԿ-ում ծավալած իր հայանպաստ գործունեությամբ: Որպես հիմնավորում շատերն են նշում այն իրողությունը, որ Գեղամյանը ոչ միայն կանխանշել է ներքաղաքական և Հայաստանի շուրջ ընթացող աշխարհաքաղաքական զարգացումներն ու դրանց հետևանքները, այլև առաջ է քաշել գործողությունների հստակ մոտեցումներ, որոնք զերծ կպահեն Հայաստանը հնարավոր սպառնալիքներից:

Մեր կուսակցականները միարժեքորեն դեմ են այսօրվա իշխանությունների վարած քաղաքականությանը: Նրանք դեմ են նաև նախկին վարչախմբի վերադարձին: Միևնույն ժամանակ քաջ գիտակցում են, որ հին ու գործող իշխանությունների միջև գնալով սրվող պայքարը

արդեն իսկ վերածվում է առճակատման և կարող է առաջացնել ցնցումներ, վերաճել բախումների, արյունահեղության: Կուսակից մեր գործընկերները կոչ են անում կուսակցության նախագահությանը՝ ամեն ինչ անել ժողովրդին ընդհարումներից զերծ պահելու համար: Մենք գտնում ենք, որ ժողովուրդն իր մաշկի վրա է զգացել թե՛ նախկին և թե՛ այսօրվա իշխանությունների անընդունելի գործունեության հետևանքները: Ուստի, ակնկալելով լուրջ փոփոխություններ նախագահական առաջիկա ընտրություններում, մեր հասարակությունը, ընտրողները աջակցելու են հին ու այսօրվա իշխանություններին այլընտրանք հանդիսացող ուժի: Այդ ուժը Արտաշես Գեղամյանն է:

Իմ կողմից, ասել եմ ու նորից կրկնեմ. Հայաստանի քաղաքական դաշտում ցույց տվեք մեկ այլ գործչի, ով այդչափ խորությամբ տիրապետում է շուկայական տնտեսությանը ներհատուկ զարգացումների առանձնահատկություններին, ով այդ աստիճան գիտականորեն հիմնավորված վերլուծություններ կարող է անել դրամավարկային քաղաքականության նրբությունների շուրջ, իսկ դոլար-դրամ վայրիվերումների առիթով Գեղամյանի բազմիցս արած ճշմարիտ մեկնաբանությունները մինչև այժմ անզոր են եղել հերքել իշխանությունը ներկայացնող և ո՛չ մի տնտեսագետ, ֆինանսիստ կամ քաղաքագետ: Եվ, վերջապես, ցույց տվեք քաղաքական որևէ մեկ այլ գործչի, ով այդքան բանիմաց կարող է վերլուծել համաշխարհային քաղաքական գործընթացները, տարածաշրջանում ձևավորվող ու տարվող քաղաքականությունը, և, որ կարևորն է, այդ խառնաշփոթի մեջ հիմնավորված ուրվագծել Հայաստանի անվտանգության ապահովման ուղիները: Ո՞վ կարող է: Միայն Արտաշես Գեղամյանը:

Իսկ ամենահիմնավոր փաստարկը հոգուտ Գեղամյանի առաջադրմանը, նրա անսահման սերն է մեր ժողովրդի և հայրենիքի հանդեպ:

*Սարգիս Մուրադխանյան*
*«Ազգային Միաբանություն կուսակցության»*
*փոխնախագահ*

## ԳԱԳԻԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԽՈՍՔԸ

2007թ. մայիսի 12-ի Ազգային ժողովի խայտառակ ընտրություններից հետո, երբ անգամ իսկ իշխանությունների կողմից պատվիրված սոցիոլոգիական տարաբնույթ հարցումներով «Ազգային Միաբանություն կուսակցությունը» նորընտիր խորհրդարանում պետք է ներկայացված լիներ նվազագույնը 15-ից 20 պատգամավորով, արդյունքում, սակայն, մենք չհաղթահարեցինք անգամ իսկ 5 տոկոսի սահմանը: Թվում էր՝ «Ազգային Միաբանությունը» խնդիր պետք է դներ, չխորշելով միջոցներից, ամեն կերպ ազատվել այս իշխանություններից, քանզի բոլորի համար էլ ակնհայտ էր, որ իրականացվել է բռնություն ազատ կամաարտահայտության սահմանադրական իրավունքի վրա: Համաձայնեք, այդ գայթակղությունը մեզանում կարող էր գերիշխող դառնալ: Կարծում եմ, համարձակության, անձնազոհության գնալու մեր պատրաստակամության մեջ և ոչ ոք կասկած չպետք է ունենա: Առհավատչյան դեռ 1990 թ. մայիսի 27-ի ՀՀՇ-ական պարագլուխների կողմից սանձազերծված սադրիչ գործողություններին դիմակայելն է, 2004 թ. ապրիլի 5-ին և 12-ին իշխանությունների կողմից իրականացված բռնություններին դիմակայելու Գեղամյանի, Կարապետյանի, Կոստանդյանի և մեր մյուս գործընկերների դրսևորած բացառիկ վարքագիծն է: Սակայն մենք հավատարիմ մնացինք մեր արժեքային համակարգին, որդեգրած սկզբունքներին, որոնք են՝ պատասխանատվության, բարոյականության, կանխատեսելիության և պրոֆեսիոնալիզմի սկզբունքը:

Արդի փուլում մենք ականատեսն ենք, երբ «Ազգային Միաբանություն կուսակցության» ղեկավարների տարիներ շարունակ ամենաբարձր ամբիոններից հնչեցրած քննադատական սուր խոսքն ուղղված գործող իշխանությունների վարած տնտեսական մերժելի քաղաքականության, չարդարացված դրամավարկային քաղաքականու-

թյան, որը դարձել է ոչ այլ ինչ, քան մեր ժողովրդին կողոպտելու գործիք, մի խումբ օլիգարխների հարստացման միջոց, օլիգարխներ, որոնք մենաշնորհային դիրքեր ունեն արտաքին առևտրում: Մեր քննադատությունը՝ լինի դա Ազգային ժողովի, թե կուսակցության համագումարների, կոնֆերանսների ամբիոններից, եղել է թե՛ հասցեագրված և թե՛ առարկայական, այն էլ տարիներ շարունակ: Մինչդեռ անցած տարիներին ընդդիմադիր համարվող ՀՀՇ-ական մամուլը մեր քննադատական խոսքը, մեր մեղադրանքները չեն դարձրել հասարակության սեփականությունը՝ գերված ռուս պարտիզանի նման պահպանելով քար լռություն: Եվ հիմա հանդես է գալիս նրանց առաջնորդ Լևոն Տեր-Պետրոսյանը, կրկնում մեր մտքերը՝ իր կողմից ավելացնելով մեզ համար մերժելի երկու նոր տերմին՝ «կազմաքանդել» և «ավազակապետություն» ու սա ներկայացվում է հասարակությանն իբրև ի հայտ եկած նոր մարգարեի վերջին ատյանի ճշմարտություն: Ազնվությունից ու բարոյականությունից  եք խոսում, գոնե շնորհակալություն հայտնեք Արտաշես Գեղամյանին և մեր մյուս գործընկերներին, որոնք շատ ավելի սկզբունքային դիրքերից ու հիմնավորված են խոսել գործող իշխանությունների վարած արատավոր քաղաքականության մասին: Կրկնում եմ, այդ ամենի մասին նրանք բազմիցս բարձրաձայնել են Ազգային ժողովի ամբիոնից հայտարարությունների ժամին և իրենց ելույթներում: Անհարմար է զբաղվել գրագողությամբ, բարեկիթ եղեք, գոնե սկզբնաղբյուրը նշեք:

Թերևս միայն այս երևույթը բավական կլիներ, որ մեր կուսակցությունը նախագահական առաջիկա ընտրություններին հանդես գար իր թեկնածուով: Մենք ականատեսն ենք  հին ու գործող իշխանությունների կատաղի անհաշտ պայքարին, որը հղի է քաղաքացիական բախումներով, ինչը կհանգեցնի պետության ապակայունացմանը, էլ ավելի կխորացնի հասարակության պառակտվածությունը: Ուստի, հանուն ազգային միաբանության և համերաշխության, առաջիկա ընտրություններին մենք հանդես ենք գալիս կուսակցության մեր թեկնածուով:

Այդ եզրահանգմանը մենք եկանք՝ տեսնելով, թե այս շրջանում

ինչ մարտավարություն են նախընտրում նախկին իշխանությունները, քանզի իշխանափոխության նպատակը չի կարող արդարացնել նրանց կողմից գործի դրված միջոցները: Մեր որոշման օգտին է խոսում նաև այն, որ երբեք ու երբեք լավ նպատակների չի կարելի հասնել կեղտոտ ճանապարհով, անբարո միջոցներով: Ամբողջովին թաղված լինելով զանազան հանցանքների ու հանցագործությունների պարտակման մեջ, որոնք կատարվել են ՀՀՇ իշխանության տարիներին, դեռ փորձ են անում խրատական դասեր տալ մեզ: Չհամարձակվեք շանտաժի ենթարկել մեր կուսակցությանը, առավել ևս մեր ղեկավարին: Ձեր գործողությունները հիշեցնում են մի հայտնի իրավիճակ, երբ գողը բղավում է՝ բռնեք գողին: Հիմա չստացվի, որ թուրք-ազերիներին ծախվածության մեջ կասկածվողները, իրենց մամուլով սեփական անձերից ժողովրդի ուշադրությունը շեղելով, փորձում են մեղադրել ազգի արժանավոր զավակներին: Չի հաջողվի, մենք թույլ չենք տա, որ մեր երկիրը, ժողովուրդը, ժողովրդական լեզվով ասած՝ «Մրից դուրս գա, ընկնի մրջուրը»:

Գործող իշխանություններին էլ հորդորեմ. եթե ձեր նախորդներին մեղադրում եք անբարո գործողությունների մեջ, ապա վերջիններիս ջանքերով Գեղամյանի անձի դեմ ուղղված ՀՀՇ-ական լրատվամիջոցների հերյուրանքներով լեցուն հոդվածները ձեր կողմից վերահսկվող հեռուստատեսությամբ մի մասսայականացրեք, այլապես դուք ոչնչով չեք տարբերվի նախորդներից:

Մեր պատասխանատվությունը ներառում է պատասխանատվություն և՛ այսօրվա և՛ ապագայի համար: Մենք հաստատակամ ենք ու հավատարիմ ազգը միաբանելու մեր առաքելությանը: Այդ հաստատակամությունն է, որ հիմք ծառայեց «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահության համար նախագահական առաջիկա ընտրություններին առաջադրել Արտաշես Գեղամյանի թեկնածությունը:

*Գագիկ Թադևոսյան*
*«Ազգային Միաբանություն կուսակցության»*
*փոխնախագահ*

## ՎԻԼԵՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Սկիզբ առնող նախագահական առաջիկա ընտրությունների կամպանիայի ընթացքը չի կարող չանհանգստացնել բոլոր նրանց, ովքեր, իսկապես, մտահոգ են երկրի ապագայով: Մի կողմից իշխանությունները, մյուս կողմից ընդդիմադիր որոշ ուժեր, հիմնականում նախկին իշխանությունների ներկայացուցիչներ, որդեգրել են ծայրահեղ անհանդուրժողական կեցվածք. երկրին նետված ներքին ու արտաքին մարտահրավերների պայմաններում, երբ դրանց դիմակայելու համար անհրաժեշտ է ողջ ազգի միաբանությունը, նրանք քաղաքական դաշտը բաժանել են սևի և սպիտակի: Որպես կարգախոս էլ ընտրել են՝ «Ով մեզ հետ չէ, նա դավաճան է» անընդունելի ձևակերպումը: Սա խորապես սխալ և վտանգավոր դիրքորոշում է: Քաղաքական դաշտը սևի ու սպիտակի բաժանելը մենք համարում ենք արկածախնդրություն և մերժում ենք: Ակնհայտ է, որ նման դրսևորումները լարվածություն են մտցնում, էլ ավելի են խորացնում մեր հասարակության թե՛ հուսահատությունը, թե՛ պառակտվածությունը: Իսկ եթե երևույթներն անվանենք իրենց բուն անունով, ապա մենք գործ ունենք պարզունակ շանտաժի դրսևորման հետ: Այսօր էլ մենք նշում ենք թե՛ նախորդ, թե՛ ներկա իշխանությունների կատարած դրական և բացասական գործերը: Իմ սերնդակիցները չեն կարող մոռանալ 1990-ական թվականների սավաններով գիշերային թաղումները, մեր հազարավոր հայրենակիցների արտագաղթը, մեկ միլիոն մարդուց ավելի խաբված ավանդատուների ծանր ապրումները, սակայն մենք չենք մոռանում նաև Արցախյան հերոսամարտի հաղթանակները, ինչպեսև չենք մոռանում Հայաստանով մեկ զինակոչիկների «որսը»: Եվ ինչպիսի բացատրություն էլ տրվեն այս ամենի կապակցությամբ, միամտություն կլինի կարծել, թե ժողովուրդը կմոռանա սե-

փական իսկ կենսագրությունը և իր ձայնը կտա այն մարդկանց օգտին ում ղեկավարության օրոք է կատարվել այս ամենը:

Միաժամանակ չի կարելի չնշել նաև ներկա իշխանությունների բացթողումներն ու սխալները. տարբեր ոլորտներում արտոնյալ իրավունքներից օգտվող մոնոպոլիաների ստեղծում և ազատ ու հավասար մրցակցային դաշտի բացակայություն, որպես դրա հետևանք գների անընդհատ և անվերահսկելի աճ, ամենաթողության ու անպատժելիության մթնոլորտի ստեղծում, արտարժույթի փոխարժեքի անբացատրելի տատանումներ, որոնք դարձել են ազգաբնակչության լայն զանգվածների կողոպուտի մի նոր դրսևորում:

Բնավ չենք կարող մոռանալ 2003 թ. նախագահական անարդար ընտրությունները, երբ բոլորի համար ակնհայտ էր, որ Արտաշես Գեղամյանն անցել էր երկրորդ փուլ, սակայն դավադրության արդյունքում այն չբոյկոտվեց: Չենք կարող մոռանալ 2004 թ. ապրիլի 5-ին և 12-ին իշխանության կողմից հրահանգված խաղաղ ցուցարարների ջարդը, և, վերջապես, չենք կարող մոռանալ 2007թ. մայիսի 12-ին կայացած ԱԺ խայտառակ ընտրությունները: Այս ամենով հանդերձ՝ մեր սիրտն ու գիտակցությունը, սակայն, լցված չեն վրեժխնդրությամբ, մենք պարզապես արդարության ենք ծարավ:

Եվ այս պայմաններում հրամայական անհրաժեշտություն է դառնում քաղաքական մի այնպիսի բևեռի ձևավորումը, որը կարողանա ոչ թե պառակտել, այլ միավորել ազգը: Իշխանության պետք է գան այն մարդիկ, ովքեր իրենց անխախտ հեղինակությամբ և անբասիր վարքագծով կարողանան վստահություն ներշնչել մեր հուսահատված ու հուսախաբված ժողովրդին: Երկրի նախագահի պաշտոնը պետք է զբաղեցնի քաղաքական այնպիսի գործիչ, որն իր անձնական արժանիքներով, գիտելիքներով, ժողովրդի մեջ վայելող հեղինակությամբ կարողանա Հայաստանը դուրս բերել տագնապահարույց այն վիճակից, որի մեջ հայտնվել է:

Մենք պետք է առաջադրենք այնպիսի գործչի թեկնածությունը, որի ղեկավարությամբ երկիրը կարողանա դիմակայել արտաքին և ներքին այն աննախադեպ ծանր փորձություններին, որոնք սպառ-

նում են մեզ: Ուստի, մենք անհրաժեշտ ենք համարում ՀՀ նախագահի պաշտոնում առաջադրել «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Մամիկոնի Գեղամյանի թեկնածությունը, որն իր անցած ուղիով, անբասիր կենսագրությամբ, ժողովրդին անմնացորդ նվիրումով նվաճել է ժողովրդական ամենալայն զանգվածների հարգանքն ու սերը: Անցած տարիներին պարոն Գեղամյանի ողջ գործունեությունը, ընթացիկ ժամանակաշրջանի մասին նրա խորը վերլուծությունները, ապագայի մասին կանխատեսումները, որոնք հետագայում ամբողջությամբ հաստատվում են, վկայում են, որ հենց նա է քաղաքական այն գործիչը, որի շուրջն այսօր պետք է համախմբվի մեր ժողովուրդը:

*Վիլեն Արևշատյան*
*«Ազգային Միաբանություն կուսակցության»*
*երիտասարդական կազմակերպության նախագահ*

## ԱՐԱ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Այսօր մեր երկրին ու հասարակությանը փորձում են կանգնեցնել երկընտրանքի առաջ. կամ ներկա իշխանությունների շարունակություն, կամ նախկին իշխանության ռեստավրացիա: Ամենևին հիացած չլինելով ներկա իշխանության կողմից վարվող տնտեսական քաղաքականությամբ, ուզում ենք բոլորին հիշեցնել նախկինում տնտեսության ղեկին կանգնած «վայ-լիբերալների» կատարած ավերածությունների մասին, երբ «որձ կովերի» մասնագետները երկրի տնտեսությունը հասցրին կոլապսի: Երբ ոչնչացվեց գյուղատնտեսությունը ու երբ հայ գյուղացուց հրաժարվում էին գնել և մթերել խաղողը, պատճառաբանելով, թե փոխարենը Իրանից կգնեն բազուկի էժան սպիրտ, կարծես թե այդ տարիների իշխանավորներն Իրանի ղեկավարներն էին, և ոչ թե Հայաստանի: Էլ չենք խոսում վաուչերային պրիվատիզացիայի, շոկային թերապիայի, Հայաստանի տնտեսության ավանդական ճյուղերի ոչնչացման մասին, որոնց վերականգնումը անասելի միջոցներ էր պահանջելու, բնակչության միջոցների փոշիացման մասին: Մի՞թե այսօրվա իշխանության այլընտրանքը նախկին վայրի լիբերալիզմն է լինելու:

Ուստի մենք առաջվա պես հաստատակամ ենք մեր ժողովրդին առաջարկելու զարգացման այն ուղին, որը նրան կբերի մաքսիմալ բարեկեցություն՝ հանդես գալով երրորդ ուժի դիրքերից: Իսկ այդպիսի ուժ մենք տեսնում ենք «Ազգային Միաբանություն կուսակցությանը» ու նրա նախագահ Արտաշես Գեղամյանին, որին էլ առաջադրում ենք որպես ՀՀ նախագահի թեկնածու:

*Արա Սիմոնյան*
*«Ազգային Միաբանություն կուսակցության»*
*նախագահության անդամ*

## ՏԻԳՐԱՆ ՊՈՇՆԱԿՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Պետք է խոստովանեմ, որ ես ձեռներեց եմ, քաղաքական գործիչ չեմ, Երևանում ծնված, մեծացած մարդ եմ, իմ սիրտը չի կարող չցավալ երկրիս դառնություն պատճառող ցանկացած միջադեպի համար: Այսօր էլ ես անընդունելի եմ համարում, երբ մի կողմից նախկին իշխանությունները ձեններ-ը մեկ արած կանգնում ասում են՝ բոլորս միանանք էս ղարաբաղցիներին քշենք, մյուս կողմից՝ գործող իշխանությունները, լինեն երևանցի, թե ղարաբաղցի, ապարանցի, թե կոտայքցի, ոչ պակաս վճռականությամբ կոչ են անում՝ համախմբվենք, թույլ չտանք, որ ռևանշիստները հաղթեն:

Իմ կողմից ասեմ. լավ գործ անող ցանկացած մարդ, լինի դա երևանցի, լինի դա ղարաբաղցի, թե համզաչիմանցի, իմ ընկերն է, ես իրա կյանքին ղուրբան: Հիմա իմ խոսքով դիմում եմ հին ու նոր իշխանություններին. ո՞նց չեք գիտակցում, որ այսօր, մի բուռ հայաստանցիներով, երկիրը պաշարված, թշնամիներով շրջապատված ամրոց է: Ես ուզում եմ ինձ տան տեր զգալ Հայաստանի ու Արցախի ամենահեռավոր գյուղերում, ես ուզում եմ, որ էդ գյուղերի մարդիկ էլ, սփյուռքահայերն էլ մեր օրեցօր սիրունացող Երևանում իրենց տան տեր զգան: Եվ պատահական չէ, որ հավատում եմ հե՛նց «Ազգային Միաբանություն կուսակցությանը», հե՛նց Արտաշես Գեղամյանին, որովհետև նրանց գաղափարը ազգը միաբանելն է, ազգի միջից թշնամանքը հանելն է, հե՛նց դրա համար էլ Գեղամյանը պետք է դնի իր թեկնածությունը նախագահական առաջիկա ընտրություններում: Մենք էլ պետք է պաշտպանենք նրան, օգնենք նրա հաղթանակին, որ էս մեր խեղճ ժողովրդին էլ չբզկտեն, որ էս թույնը, ատելությունը իրար նկատմամբ չշարունակեն սերմանել:

Իմ հասկացածով՝ խորհուրդ կտամ նախկին իշխանություններին

թարգել Գեղամյանի հասցեին շառուշուռ անելը, գործող իշխանություններին էլ հուշեմ. նախկինների շառուշուռը տելեվիզրով չտարածեն: Մեր ժողովուրդը շատ էլ լավ գիտի, թե Գեղամյանը ով ա, ով էլ որ մոռացել է հիշեցնեմ. նա Սովետաշենում և Կայարանում 1990 թ. մայիսի 27-ին սովետական տանկերի դեմ գնացող Երևանի դուխով քաղաքապետն էր, երկրիս թասիբը պահող, թուրքերի դեմ Ստրասբուրգում և Վիեննայում կռիվ տվող մարդն է: Գեղամյանի մասին ասելու բան շատ կա, բայց, կարծում եմ, ասածիցս էլ կհասկանան, իսկ ով էլ գիտակցաբար իրան անհասկացողի տեղ է դրել, ցավում եմ նրա համար:

*Տիգրան Պոշնակյան*
*«Ազգային Միաբանություն կուսակցության»*
*անդամ*

# ԱՆՀՐԱԺԵՇՏ Է, ՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԻՄԱՆԱ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

*Վերջին շրջանում ընդդիմադիր բևեռ ինքնահռչակված ուժերին սպասարկող լրատվամիջոցները զրպարտության, ապատեղեկատվության քարոզարշավ են սկսել նախագահական առաջիկա ընտրություններին մասնակցության մասին հայտարարած գրեթե բոլոր թեկնածուների դեմ: Առավել ջանադրաբար են մրոտում «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ, ՀՀ նախագահի թեկնածու առաջադրված Արտաշես Գեղամյանին: Նրա հասցեին ուղղված «մեղադրանքներին» ու թղթակցի տված հարցերին պատասխանում է հենց ինքը՝ պարոն Գեղամյանը:*

*– Պարոն Գեղամյան, ինչո՞վ եք բացատրում այն հանգամանքը, որ վերջին շրջանում ՀՀՇ-ական մամուլն առանձնակի կատաղությամբ է հարձակվում թե՛ Ձեր, թե՛ «Ազգային Միաբանություն կուսակցության» ընտրանու վրա: Մասնավորապես, Ձեզ մեղադրում են, որ դեռ 1998 թ. նախագահական ընտրությունների 2-րդ փուլում Դուք չպաշտպանեցիք Կարեն Դեմիրճյանին, իսկ 2003թ. նախագահական ընտրությունների 2-րդ փուլում նրա որդուն՝ Ստեփան Դեմիրճյանին: Հիմա էլ չեք սատարում Լևոն Տեր-Պետրոսյանին:*

– Ձեր դիտարկումը միանգամայն տեղին է, ուստի հերթով անդրադառնամ վերը նշված հարցերին: Դեռ 1997 թ. հոկտեմբերի 17-ին «Ազգային Միաբանություն կուսակցությունը» հանդես եկավ համայն հայությանն ուղղված՝ կոչ ընդունելու նախաձեռնությամբ, որտեղ, մասնավորապես, տրված էր Լևոն Տեր-Պետրոսյանի վարչակազմի գործունեության սկզբունքային և խիստ գնահատականը: Մեր այդ նախաձեռնությունը պաշտպանեցին, ավելին, արժեքավոր առաջարկություններ, լրացումներ կատարեցին հանրապետության, բառիս իսկական առումով, խիղճը հանդիսացող այնպիսի մեծություններ, ինչպիսիք են՝ ակադեմիկոսներ Սիլվա Կապուտիկյանը, Լենդրուշ Խուրշուդյանը, Սերգեյ Աբրահամյանը, Վլադիմիր Խոջաբեկյանը,

Լենսեր Աղալովյանը, Ռաֆայել Ղազարյանը, Դավիթ Սեդրակյանը, ԽՍՀՄ ժողովրդական դերասան Սոս Սարգսյանը, ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ Սարգիս Մուրադյանը, վաստակաշատ արձակագիրներ Պերճ Զեյթունցյանը, Անահիտ Սահինյանը, Ալվարդ Պետրոսյանը, նշանավոր բանաստեղծ Ռազմիկ Դավոյանը, արձակագիր և կինոդրամատուրգ Ռուբեն Հովսեփյանը, հրապարակախոս Արմեն Հովհաննիսյանը… Բոլորին չթվարկեմ, մարդիկ, ովքեր իրենց ողջ կյանքով ապացուցել են սեփական ժողովրդին, հայրենիքին անբասիր ծառայելու և անմնացորդ նվիրված լինելու փաստը: Կոչում տրված գնահատականները մեկնաբանելու փոխարեն, ես այդ ընդունված փաստաթղթից մեջբերումներ ներկայացնեմ ընթերցողներին, որպեսզի ժողովուրդը մեկ անգամ ևս ծանոթանա ուղերձում տրված գնահատականներին, որոնք հիմնավոր և ոչ մի փաստարկված նյութերով չհերքվեցին: Ձեր ուշադրությանն եմ ներկայացնում 1997թ. հոկտեմբերի 18-ին «Գոլոս Արմենիի» թերթում հրապարակված կոչի տեքստը (կրճատումներով).

*«ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԱԶԳԱՅԻՆ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ*
*Կոչ համայն հայությանը*

*Հայրենակիցնե՛ր, մեր Հայրենիքը կանգնած է աղետի եզրին, ինչը օբյեկտիվ իրողություն է դարձել Հայաստանի Հանրապետության ղեկավարության հանցավոր գործունեության հետևանքով: Մի խումբ ամբոխավարներ, որոնք իրենց տվել են հավակնոտ «Հայոց համազգային շարժում» անունը, բռնազավթելով Արցախը Հայաստանի հետ միավորելու հայ ժողովրդի փայփայած նվիրական երազանքը և այդ ալիքի վրա գալով իշխանության, կարճ ժամանակ անց դեն նետեցին ազգային-ազատագրական գաղափարները, ի չիք դարձրին համայն հայության սրբազան սպասումները, ի վիճակի չեղան մշակել ու իրականացնել, իրոք, համազգային ծրագրեր:*

*Ավելին, ՀՀՇ-ական ղեկավարների և նրանց կցված նախկին ռեժիմի շողոքորթ ու անտաղանդ պաշտոնամոլների 6-ամյա կառավարումը երկրին բերեց անդառնալի կորուստներ: Կենսագործունեության բոլոր ոլորտնե-*

*ռում փոշիացված է նախորդ սերունդների ջանքերով կուտակված մեր վիթխարի ժառանգությունը: Շուկայական հարաբերությունների անցման քողի տակ քարուքանդ արվեց և թալանվեց մեր հզոր արդյունաբերությունը: Դեռևս պահպանված արտադրական և գիտատեխնիկական ներուժին սպառնում է վերջնական կործանում: Արտասահմանյան տարբեր աղբյուրների կողմից տրամադրված միջոցները հիմնականում վատնված և թալանված են: Երկիրը դատապարտված է դառնալ էժան աշխատուժ մատակարարող կիսագաղութային կցորդ, ստացված վարկերը նյութական և հոգեբանական ծանր բեռ են դարձել ներկա ու ապագա սերունդների համար:*

*Քաղաքական շահարկումների զոհ է դարձել գյուղատնտեսությունը: Հողի սեփականաշնորհման արդար և հուսադրող գաղափարը փոխարինվել է արկածախնդրությամբ: Արդյունքում՝ խոշոր ապրանքային տնտեսությունը վերածվեց բնատնտեսության, թալանվել և վերացվել են հիմնական ֆոնդերը: Գյուղացին զրկվել է արտադրության միջոցներից: Վերացվել են բարձրապրանքային տնտեսությունները, ավերվում են խաղողի և պտղատու այգիների հսկայական զանգվածներ: Գյուղատնտեսական շրջանառությունից դուրս է մնացել հողային մակերևույթների հսկայական քանակություն:*

*Քայքայման են հասցված կրթության և առողջապահության համակարգերը, մշակույթի օջախները, երբեմնի համաշխարհային հռչակ ունեցող մեր գիտությունը: Սրընթացորեն փոխվում է հանրապետության ժողովրդագրական տեսքը: Մեր երկիրը դատարկվում է՝ ի ուրախություն թշնամու, որը հենց այդ նպատակն է հետապնդում: Բնակչության գրեթե 1/3-րդը ժամանակավոր կամ վերջնականապես հեռացել է երկրից՝ արտասահմանում ենթարկվելով բարոյական և հոգեկան աննկարագրելի նվաստացումների: Սկսվել է գիտատեխնիկական ընտրանու արտահոսքը: Այդպես էլ չեն բուժվել աղետի գոտու վերքերը:*

*Բնակչությունը հայտնվել է սոցիալական ծանր պայմաններում: Աննախադեպ բևեռացումը ակնհայտ փաստ է. ՄԱԿ-ի «1996 թ. ընթացքում մարդու զարգացման մասին» զեկույցի համաձայն՝ Հայաստանի բնակչության շուրջ 85%-ը ապրում է աղքատության մեջ կամ աղքատության սահմանից ցածր: Ազգային հարստության 75%-ը կուտակված է 7-8% ճարպիկների՝ հիմնականում հանրապետության ղեկավարների, բարձրաստիճան պաշ-*

*տոնյաների, նրանց բարեկամների և մերձավորների ձեռքում:*

*Մի բևեռում ծայրահեղ աղքատություն է, մուրացկանություն և գործազրկություն, մյուսում՝ հարստության անօրինական կուտակում, անբարոյականություն, անամոթություն: Բացահայտ մեծամտությամբ արհամարհելով հասարակական կարծիքը, իշխանավորները զբաղված են թալանով, գանձագողությամբ, շքեղ առանձնատների կառուցմամբ, հասարակական նշանակության շենքերի, նույնիսկ՝ ուսումնական հաստատությունների զավթումով: Կաշառակերությունն աներևակայելի չափերի է հասել: Հանրապետությունը հայտնվել է իշխանության հետ սերտաճած մաֆիոզ տնտեսական կլանների աքցաններում, ինչը ձախողում է իրական շուկայական հարաբերությունների և ազատ ձեռներեցության արմատավորումը:*

*Ղեկավարության անհանդուրժողականությունը, ջղաձիգ ձգտումը միանձնյա և հավերժ իշխանության՝ ծայրահեղորեն սրել է քաղաքական հակամարտությունը, գործը հասցնելով անթաքույց թշնամանքի: Փոխանակ ապահովեն ժողովրդի բոլոր ուժերի միասնականությունը, ինչը հրամայական պահանջ է մեր փոխվող հայրենիքի պետականության կայացման և կայունության գործում, Արցախի հիմնախնդրի արդարացի լուծման պայքարում, իշխանություններն ընտրել են քայքայման, ազգային ուժերին իրար հակադրելու քաղաքականություն, հրաժարվել են «Մեկ ազգ, մեկ հայրենիք» նվիրական գաղափարից, օտարելով սփյուռքը՝ զրկել են նրան ողջ հայ ազգի ճակատագրի համատեղ կերտմանը մասնակցելու առաքելությունից: Նախաձեռնվում են վտանգավոր փորձեր՝ անդունդ բացել Արցախի և Հայաստանի հայության միջև: Պատվիրված քաղաքական դատական պրոցեսները, չբացահայտված հանելուկային սպանությունները, գործող վարչակարգի ամեն մի լուրջ քննադատության պարագայում՝ պատերազմի ուրվականի մշտական շահարկումը ուժեղացնում են վախի, սոցիալական անելանելիության զգացումը ժողովրդի գիտակցության մեջ, որն առանց այն էլ ապրում է ծանր կյանքով:*

*Խոր մտահոգություն են առաջացնում զինված գաղտնի խմբավորումների կողմից սանձազերծված ինքնակամ գործողությունները, որոնք ոչ միայն չեն պատժվում, այլ նաև հովանավորվում են իշխանությունների կողմից:*

*Ժողովրդավարության, մարդու իրավունքների խախտման խայտառակ*

*օրինակ էր բիրտ ուժի կիրառումը 1996 թ. սեպտեմբերին կայացած ընտրությունների կեղծումից վրդովված ժողովրդական բազմահազարանոց զանգվածի հանդեպ՝ օգտագործելով բանակի, ինչպես նաև Արցախում կռված երկրապահ ջոկատների ուժերը: Դա անթաքույց սադրանք էր, որի իրական հեղինակը վաղ թե ուշ կկանգնի ժողովրդի և պատմության դատաստանի առջև:*

*Մենք խորապես ցավում ենք, որ իշխանությունների բաժանարար քաղաքականության արդյունքում մեզանում այդպես էլ չձևավորվեց քաղաքական լուրջ ընդդիմություն: Իսկ ներկայիս ընդդիմության որոշ ղեկավարներ ժողովրդի կողմից արդարացիորեն ընկալվում են որպես մարդիկ, ովքեր ծառայել են ՀՀՇ-ի գաղափարախոսությանը և սերվել են նրա տարբեր խմբավորումներից, որոնց ժամանակ և որոնց անմիջական մասնակցությամբ սկիզբ է դրվել այսօրվա բացասական երևույթներին ու դրանց հետևանքներին:*

*Սեպտեմբերյան մամլո ասուլիսում հանրապետության նախագահի հայտարարությունները վերջնականապես բացահայտեցին երկրի ղեկավարության անճարակությունը նաև արտաքին քաղաքականության բնագավառում: Տապալված է դիվանագիտական ճանապարհով Արցախի անկախության ճանաչման գործի պաշտպանության փորձը: Սեփական ժողովրդին սպառնալ արտաքին ռազմական միջամտությամբ, թշնամու առջև բացել բոլոր խաղաքարտերը բանակցություններից առաջ, ակնհայտորեն ցուցադրել մեր դիրքորոշման հնարավոր ուժեղ և թույլ կողմերը՝ այս ամբողջը աննախադեպ բան է ցանկացած պետության ղեկավարի համար: Դա հավասարազոր է հանձնվելուն՝ առանց նախապայմանների: Դա անհարգալից վերաբերմունք է հազարավոր հայ հերոսների հիշատակի հանդեպ, ովքեր պատերազմի դաշտում զոհաբերած իրենց կյանքի գնով ապահովեցին Արցախի հաղթանակը:*

*Հանրապետության տխուր իրավիճակը բացատրել միայն Արցախի հիմնախնդրով և Հայաստանի շրջափակումով, ավելին՝ սպառնալ, որ այս իրավիճակը շարունակվելու է, եթե ժողովուրդը շարունակի մնալ «ոչ իրատես», ինչպես արեց հանրապետության նախագահը, դա փորձ է սեփական վարչակազմը հեռացնել համընդհանուր աղետի պատասխանատվությունից:*

*Լևոն Տեր-Պետրոսյանը և նրա կամակատարներն այդպես էլ չստեղծեցին ճգնաժամից դուրս գալու իրական ծրագիր: Մարդ, որն ունի փոփոխական հայացքներ և պարտվողական ոգի, երբեք ու երբեք չի կարող լինել ժողովրդի մեծամասնության երազանքների ու վճռականության արտահայտողը: Նրա մամլո ասուլիսը ևս մեկ փորձ է դուր գալ վերջին շրջանում իրենից երես թեքած Արևմուտքին՝ հույս ունենալով շարունակել պահպանել սեփական՝ սվիններով միջոցով պահպանվող աթոռը:*

*Նախագահի պարտվողական կոչերն էլ ավելի են բարոյազրկում բնակչությանը, նրա մեջ սերմանում հուսահատություն և զրկում ժողովրդին լավատեսությունից ու ազգային հեռանկարից:*

*Այսուհետ ակնհայտ է, որ իշխանությունները վերածվել են հակաազգային ուժի, և վարչակազմի գոյատևման յուրաքանչյուր օրը սպառնում է երկրի անվտանգությանը ու կարող է կործանարար լինել մեր անկախ պետականության ապագայի համար:*

*Հայաստանում մենք ունենք կաթվածահար եղած գործադիր իշխանություն, խամաճիկային Ազգային ժողով և ցուցադրական Սահմանադրական դատարան, որոնք ի վիճակի չեն ղեկավարել ազգային կյանքը ...»:*

Սիրելի՛ ընթերցող, ծանոթանալով մեր գնահատականների հետ, ի՞նչ եք կարծում, ինչպե՞ս կարող էի ես 1998թ. նախագահական ընտրությունների 2-րդ փուլում պաշտպանել, այո, իմ կողմից շատ հարգված Կարեն Սերոբի Դեմիրճյանի թեկնածությունը: Գործիչ, որը, անտարակույս, մեծագույն ծառայություններ ունենալով մեր ժողովրդի նորագույն պատմության մեջ, 1996թ. նախագահական խայտառակ ընտրությունների ժամանակ սատարել էր Լևոն Տեր-Պետրոսյանին: Ոչ միայն սատարել էր, այլև ընտրություններից 3-4 օր առաջ գրավոր հանդես էր եկել «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթի սեպտեմբերի 21-ի համարում՝ «Ղարաբաղի հարցը՝ գլխավորն է, մնացածը ժամանակի հետ կլուծվի» վերտառությամբ հարցազրույցով: Հարկադրված եմ պարոն Դեմիրճյանի հարցազրույցից՝ ի սատարումն Լևոն Տեր-Պետրոսյանի, առանց մեկնաբանությունների մեջբերումներ անել: Եվ, այսպես, լրագրողի այն հարցին՝ «Պարոն Դեմիրճյան, առաջիկա նախագահական ընտրու-

թյուններում ինչպե՞ս եք գնահատում Լևոն Տեր-Պետրոսյանի շանսերը», հարցելի Կարեն Սերոբիչը պատասխանել էր. «Բարձր: Նախ, նախագահի ընտրական ծրագիրը իրատեսական է, համապարփակ, և որ շատ կարևոր է, արտացոլում է նախագահի վճռականությունը հանրապետության կենսագործունեության տարբեր ոլորտներում դրությունը բարելավելու, սոցիալական հարցերը հնարավորին չափ արագ լուծելու: Այնուհետև, ինձ թվում է, թե նախագահը, հենվելով կառավարման արդեն իր կուտակած փորձի վրա, արել է ճիշտ եզրահանգումներ, որոնք կերաշխավորեն նրա առավել արդյունավետ գործունեությունը:

Հին համակարգը վերացնելու համախոհների ժամանակն անցել է, այժմ ստեղծագործ աշխատանքի ժամանակն է: Առհասարակ, ինչպես ցույց է տալիս կյանքը, յուրաքանչյուր ղեկավար իր կառավարման հաջորդ փուլում առավել արդյունավետ է գործում:

Ես լիովին համաձայն եմ նախագահի այն արտահայտության հետ, թե ազատ և արդար ընտրությունների ապահովումն արդեն իսկ իր հաղթանակն է»:

Սրանից հետո, եթե 1998 թ. ես, անգամ իսկ որպես անձ սատարեի Կարեն Դեմիրճյանի թեկնածությունը, ապա մի ամբողջ կուսակցություն և «Ազգային Միաբանության» համակիրները, ինչո՞ւ չէ, ցանկացած ազնիվ մարդ տրամաբանական հարց կուղղեր ինձ. այդ ինչպե՞ս է պատահում, որ 1997թ. հոկտեմբերից մինչև 1998թ. փետրվար՝ 4 ամիսների ընթացքում, Արտաշես Գեղամյանն արմատապես փոխեց իր դիրքորոշումը և հիմա էլ պաշտպանում է Լևոն Տեր-Պետրոսյանի, թերևս, ամենահեղինակավոր սատարողին: Մինչդեռ անգամ այս պարագայում, մեծագույն պարտավորվածություն զգալով սեփական գործողություններիս համար, 1998թ. նախագահական ընտրությունների երկրորդ փուլից առաջ Հանրային հեռուստատեսությամբ դիմեցի 2-րդ փուլ անցած ՀՀ նախագահի 2 թեկնածուներին՝ պարոններ Դեմիրճյանին և Քոչարյանին, հրապարակավ հայտարարելով, որ և՛ իմ և՛ մեր կուսակցության համակրանքը կլինեն այն թեկնածուի օգտին, ով պաշտոնապես ոչ միայն կընդունի հա-

մայն հայությանն ուղղված կոչում բերված մեր գնահատականները, այլ նաև պատրաստակամություն կհայտնի մեր երկրում ստեղծված տնտեսական, բարոյահոգեբանական, սահմանադրական խորը ճգնաժամի մեղավորներին պատժելու: Դրա հետ մեկտեղ ակնարկ եղավ, որ Լևոն Տեր-Պետրոսյանին հեռացնելով նախագահի պաշտոնից Ռոբերտ Քոչարյանն այդ առումով փոքր-ինչ հույս է ներշնչում: Ահա այսպիսին են եղել 1998թ. նախագահական ընտրությունների 2-րդ փուլի նախաշեմին «Ազգային Միաբանություն կուսակցության» կողմից տրված գնահատականները:

Ինչ վերաբերում է 2003թ. նախագահական ընտրությունների 2-րդ փուլում Ստեփան Դեմիրճյանին չմիանալուն, ապա դա ևս ունի խորը հիմնավորումներ, որոնք անհերքելի են: Մեկ անգամ ևս հիշեցնեմ ընթերցողին, իսկ ավելի շատ ՀՀՇ-ական այն պարագլուխներին, ովքեր արդեն իսկ 10 տարի է շարունակ շահարկում են այդ թեմաները: Ես նկատի ունեմ 1998 թ. և 2003թ. նախագահական ընտրությունները:

Եվ այսպես, ընտրությունների օրը՝ 2003 թ. փետրվարի 19-ին ժամը $17^{00}$-ին, այն է՝ դեռ մինչև ընտրությունների ավարտը, երբ կար 3 ժամ, ըստ որում, հիշեցնեմ, որ ընտրությունները փակ և գաղտնի էին, նախագահի թեկնածուներից 6-ը (Արտաշես Գեղամյան, Վազգեն Մանուկյան, Ստեփան Դեմիրճյան, Գառնիկ Մարգարյան, Արամ Կարապետյան, Արամ Գ.Սարգսյան) ՀԺԿ գրասենյակում ստորագրել էին հայտարարություն: Հարկ եմ համարում մեր կողմից ընդունված հայտարարության տեքստը նույնպես ներկայացնել ձեր ուշադրությանը.

*«ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

*Հանրապետության նախագահի ընտրությունների ընթացքը ցույց է տալիս, որ պետական մեքենայի բոլոր լծակները նպատակաուղղված օգտագործվում են ընտրությունների արդյունքները կեղծիքների միջոցով կանխորոշելու նպատակով:*

*Գործող վարչակազմը՝ կանխավ համաձայնության գալով առանձին քաղաքական ուժերի, թաղային հեղինակությունների և օլիգարխների*

*հետ, ընտրությունները վերածեց նախօրոք ծրագրված շինծու արդյունքների վավերացման խայտառակ գործընթացի: Ընտրական տեղամասերում կատարվող ահաբեկումները, ընտրողների նկատմամբ իրականացվող շանտաժը, սպառնալիքները, բաժանվող ընտրակաշառքը, հանցագործ խմբերի կողմից անօրինական քվեարկված իրենց թերթիկները բռնի ուժով քվեարկղերը լցնելը, ընտրակառուսելը և մյուս աղաղակող անօրինականությունները կատարվում են անարգել՝ գործող իշխանությունների և նրանց աջակցող քաղաքական ուժերի կողմից նշանակված հանձնաժողովի անդամների, պետական մարմինների ներկայացուցիչների թողտվությամբ ու մասնակցությամբ:*

*Այս ամենը ցույց է տալիս, որ ընտրությունների ընթացքը միտումնավոր խեղաթյուրվել է և նրա արդյունքները չեն կարող ճանաչվել օրինական»:*

Նույն օրը ժամը 18$^{00}$-ին այդ փաստաթուղթը հանձնվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողով: Ընտրությունների ավարտից մեկ ժամ առաջ հանկարծ մեզ տեղեկացնում են, որ նախագահի թեկնածուներից ոմանք հրաժարվել են իրենց ստորագրությունից: Երբ մենք հարց ուղղեցինք վերջիններիս, արդյո՞ք այս 2-3 ժամերի ընթացքում ինչ-որ դրական տեղաշարժեր են նկատվել ընտրական գործընթացներում, ի՞նչ, չլինի թե ընտրական օրենսգրքի կոպիտ խախտումներ այլևս թույլ չեն տրվում, ընտրակեղծիք կատարող որևէ մեկը չլինի՞ թե պատասխանատվության ենթարկվեց, բնականաբար, մեր գործընկերները նման փաստեր չբերեցին: Այդ դեպքում հարց էր ծագում. այդ ի՞նչ կատարվեց 2-3 ժամերի ընթացքում, կրկնում եմ, երբ դեռ ընտրություններն ավարտված չէին և դեռ բացարձակապես ոչ ոք չգիտեր, թե ընտրությունների արդյունքում ինչպիսի պատկեր է լինելու, որ մարդիկ հրաժարվեցին իրենց ստորագրությունից:

Սրան հետևեց «Ազգային Միաբանություն կուսակցության» հայտարարությունը, որտեղ մենք հիմնավորում էինք 2-րդ փուլին մասնակցելու անթույլատրելիությունը: Մեր փաստարկը թե շատ հասկանալի էր, թե տրամաբանական և թե բարոյականության ցայտուն

վկայություն էր: Մասնակցելով 2-րդ փուլին, մեր գործընկերները, ըստ էության, վավերացրեցին ընտրակեղծիքներով, ընտրական օրենսգրքի բազմաթիվ բացահայտ խախտումներով, սկզբից մինչև վերջ անօրեն անցկացված 1-ին փուլի արդյունքները: Դա մի վառ օրինակ էր, որ մարդիկ պետության համար այդ ճակատագրական պահին մեկ-երկու ժամերի ընթացքում կարող են դրժել սեփական սկզբունքները, անգամ իսկ գրավոր հաստատված պայմանավորվածությունները: Եվ վերջին հաշվով կար տարրական բարոյականության խնդիր. մի՞թե այն ժամանակ սոցիոլոգիական ցանկացած հարցումով, ինչպես նաև ժողովրդական ամենալայն շրջաններում իշխող տրամադրություններով ակնհայտ չէր, որ եթե անգամ իսկ 2-րդ փուլ պետք է լիներ, ապա 2-րդ փուլի մասնակիցներից մեկը, անտարակույս, պետք է լիներ «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանը: Հիմա այս ամենից հետո, ով է ո՞ւմ դավաճանել, իսկ ո՞վ է մնացել իր սկզբունքներին հավատարիմ, թող դատի ընթերցողը: Պարզապես մարդիկ, երբ սեփական մեղավորությունը ակնհայտորեն գիտակցում են, օգտվում են դիմացի կողմի խոհեմ վերաբերմունքից, որը զսպվածություն էր դրսևորել նախագահական ընտրությունների առաջին փուլից հետո՝ խնդիր ունենալով անգամ իսկ գործընկերների կողմից դավաճանության զոհ լինելու պայմաններում չասել ողջ ճշմարտությունը, որպեսզի ժողովրդին չհիասթափեցնի: Չբարձրաձայնել, որ ընդդիմության շարքերում դավեր են նյութվում և այդ դավերի արդյունքն ընտրությունների անփառունակ 2-րդ փուլին մասնակցելն էր:

«Ազգային Միաբանությանը» այսօր էլ հանդիմանում են՝ ինչո՞ւ չմիացաք առաջին փուլից հետո լայն թափ ստացող համաժողովրդական շարժմանը: Չէ՞ որ եթե «Ազգային Միաբանությունը» միանար՝ իշխանափոխությունն ակնհայտ էր: Դա նույնպես միտումնավոր տարածվող մոլորություն է: Պարզապես 2003 թ. նախագահական ընտրությունների ժամանակ մեզ համար ակնհայտ դարձավ, որ ընդդիմադիր դաշտի որոշակի թեկնածուն ուղղորդվում էր ՀՀՇ-ի կողմից, ինչն իր հերթին արդեն իսկ կողմնորոշել էր մեր հետագա

անելիքները: Այդ անգամ էլ նրանք զրկվեցին ռևանշ անելու հնարավորությունից և հիմա փորձում են կրկին գնալ նույն ճանապարհով: Արդյունքում, Հայաստանը նորից կհայտնվի 1990-ական թվականների թշվառ վիճակում: Եթե 2003 թ. փետրվար-մարտին նրանք համոզված էին սեփական պայքարի ճշմարտացիության մեջ, ապա ո՞վ էր նրանց բռնել, ո՞վ էր համոզում, որ չդիմեցին ավելի վճռական գործողությունների, չգնացին, ինչպես հիմա են վանկարկում, «մինչև վերջ»՝ իշխանափոխության: Չէ՞ որ 2004 թ. ապրիլի 12-ի հայտնի դեպքերի ժամանակ հրապարակում 2-3 անգամ ավելի պակաս ժողովուրդ կար, սակայն մենք գնացինք, այդ ժողովրդին առաջնորդեցինք… գնացինք նախագահի նստավայր՝ խնդիր ունենալով, այո, ստիպել իշխանություններին հրաժարական տալ: Ինչո՞ւ դա չարվեց 2003 թ.: Չէ՞ որ «Ազգային Միաբանություն կուսակցությունը» նրանց բացարձակապես չէր խոչընդոտում: Միակ բանը, ինչ այն օրերին ասել ենք, այն էր, որ չպետք է ճանաչել 1-ին փուլի արդյունքները, չպետք է գնալ 2-րդ փուլ: Անցած տարիները անգամ իսկ ծույլերին համոզեցին մեր որդեգրած մոտեցումների եզակի ճշմարիտ լինելը:

Ինչ վերաբերում է Լևոն Տեր-Պետրոսյանին միանալ-չմիանալու հարցին. նշեմ, որ այդ առաջարկը, ի սկզբանե, կոռեկտ չէ: Ինչո՞ւ քաղաքական ծանրակշիռ ուժ ներկայացնող գործիչը, որը կուսակցության առաջնորդ է, և որն երկու անգամ անընդմեջ, հաղթահարելով իշխանությունների բիրտ ճնշումները, ընտրվել է Ազգային ժողով և ոչ միայն ընտրվել է, այլ նաև մեծ դերակատարություն է ունեցել Հայաստանի Հանրապետության թե՛ ներքին, և թե՛ արտաքին կյանքում, որի հետևանքով էլ 2007 թ. մայիսի 12-ի ընտրությունների ժամանակ օտարվել է Ազգային ժողովում մասնակցություն ունենալու հնարավորությունից, պետք է սատարի մեկ այլ ուժի, այն էլ ժամանակին ձախողված և հասարակության կողմից մերժված: Եթե մենք հանկարծ ենթադրեինք, որ 2008 թ. կայանալիք նախագահական ընտրությունների ինչ-որ փուլում կարող ենք սատարել Լևոն Տեր-Պետրոսյանին, ապա մենք ի՞նչ բացատրություն պետք է տայինք մեր կուսակցության տասնյակ հազարավոր անդամներին, թե ինչո՞ւ

փոխվեց մեր դիրքորոշումը: Եվ այս օրերին մենք վերստին համոզվում ենք, որ, ի դեմս նախկին իշխանությունների, ունենք վրեժխնդրությամբ լցված մարդկանց: Մարդկանց, ովքեր խոսքով ժողովրդավարություն են քարոզում, իսկ գործով անում են ճիշտ հակառակ գործողություններ: Ինչո՞վ բացատրել, որ ՀՀՇ-ն, խոսելով արդարության, ընտրությունները ժողովրդավարական մթնոլորտում անցկացնելու մասին, դեռ մինչև պաշտոնական քարոզարշավի մեկնարկը, սկսել է լրատվական սանձարձակ շանտաժ: Բոլոր այն քաղաքական գործիչներին, ովքեր չեն բաժանում Լևոն Տեր-Պետրոսյանի տեսակետները, շտապում են պիտակավորել, դավաճանության մեջ մեղադրել: Եվ, վերջապես, խոսք է գնում ծախվածության մասին: ՀՀՇական պարագլուխների տրամաբանության համաձայն՝ քաղաքական այն գործիչը, ով շարունակաբար և՛ բանավոր, և՛ գրավոր պնդում է իր սկզբունքային տեսակետները, չգիտես ինչու, նրանց կողմից հանկարծ ճանաչվում է ծախված: Եվ դա հասարակությանը հրամցվում է այն դեպքում, երբ այսօր Լևոնին սատարող քաղաքական գործիչներից շատերն անցած տարիների ընթացքում 2-3 անգամ ճամբարափոխության մեջ են նկատվել ու ոչ միայն ճամբարափոխության, այլ նաև տրամագծորեն իրարամերժ կարծիքներ են հայտնել թե՛ գործող իշխանությունների, թե՛ նախորդների հասցեին: Մեկ էլ տեսնում ես, որ ՀՀՇ-ական մամուլի էջերում սրանք հանկարծ դառնում են նվիրված ու հավատարիմ, իսկ մյուսները՝ ծախված: Եվ վերջապես. մարդ պետք է տարրական բարոյականություն ունենա, երբ հարևան Թուրքիայի մամուլը հեղեղված է հոդվածներով, ուր ուղղակիորեն գրվում է Լևոն Տեր-Պետրոսյանի ընտրարշավը ֆինանսավորելու նպատակահարմարության մասին ու դա արվում է անթաքույց, լկտիություն ունենա և ասի՝ ծախվածը «Ազգային Միաբանությունն» է: Եվ այս հարցում, ի՞նչ եք կարծում, ո՞վ է առավել աչքի ընկնում. հայ-թուրքական հաշտեցման տխրահռչակ հանձնաժողովի հայկական կողմի համանախագահ Ալիկ Արզումանյանը: Բա եղա՞վ, Ալիկ, վերջ տուր չարաճճիությանդ, քո սիրած թուրքերի խոսքով ասած՝ քյալագյոզությանդ: Ծախվածության թեման բարձրաց-

նողներին ասեմ. այդ գործում ձեր փեշերը վաղուց են այրված, և երիցս տեղին ու ճիշտ է հայտնի ասացվածքը, երբ գողը բղավում է, բռնի՛ր գողին:

*– Ձեր հանդիպումները հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի, վարչապետ Սերժ Սարգսյանի հետ և հետագայում Ձեր առաջադրումը ՀՀ նախագահի պաշտոնում ՀՀՇ-ական քարոզչամեքենան որակեց որպես «ծախվածության դրսևորում»: Ինչպե՞ս կարձագանքեք այդ «մեղադրանքներին»:*

– Հենց նոր ես հպանցիկ անդրադարձա այդ հարցին, այժմ տամ հիմնավոր պարզաբանում: Այս տարվա սեպտեմբերի 7-ին «Ազգային Միաբանություն կուսակցությունը» հանդես էր եկել հայտարարությամբ, որտեղ, կարևորելով Հայաստանի Հանրապետության առջև ծառացած թե՛ ներքին և թե՛ արտաքին մարտահրավերները, նաև խնդիր ունենալով բացառել արտաքին ուժերի միջամտությունը նախագահական առաջիկա ընտրությունների ժամանակ, նպատակահարմար էր գտել նախաձեռնել հանդիպումներ քաղաքական ազդեցիկ բոլոր ուժերի հետ: Այդ հայտարարության ոգուն հարազատ մնալով՝ ես հանդիպումներ եմ ունեցել ՀՀՇ-ականներ Լևոն Տեր-Պետրոսյանի, Արարատ Զուրաբյանի, ԱԻՄ-ի անփոփոխ նախագահ Պարույր Հայրիկյանի, ինչպես և Շավարշ Քոչարյանի, Արթուր Բաղդասարյանի ու այլոց հետ: Մեր կոչում նշված էր, որ անհրաժեշտ է այդ հանդիպումներին մասնակից դարձնել հանրապետության իշխանական թևի քաղաքական ուժերի ներկայացուցիչներին: Դրա շրջանակում հանդիպել եմ նաև ՀՅԴ ներկայացուցիչներ Վահան Հովհաննիսյանի, Արմեն Ռուստամյանի, Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի հետ: Ըստ որում, հետաքրքրականն այն է, որ այդ հանդիպումների ժամանակ բոլոր մասնակիցներն արձանագրել են երկրում ծավալվող գործընթացների կարևորությունը և դրանց վտանգավորությունը՝ անհրաժեշտ համարելով ձեռնարկել ամենը, ինչը զերծ կպահի հանրապետությունը անցանկալի զարգացումներից:

«Ազգային Միաբանություն կուսակցությունը», մանրամասն վերլուծելով Հայաստանի քաղաքական դաշտում ծավալվող զարգա-

ցումները, եկել է այն եզրահանգման, որ հին ու գործող իշխանությունների առճակատումը գնալով ահագնացող բնույթ է կրում և հղի է հետագայում քաղաքացիական բախումների վերածելու վտանգով: Դա անթույլատրելի է Հայաստանի Հանրապետության շուրջ ստեղծված իրավիճակում, դա անթույլատրելի է Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման տեսանկյունից: Այս ամենը նկատի ունենալով, մենք արձանագրել ենք. երբ կուսակցությունը մերժում և դատապարտում է թե՛ նախորդ իշխանություններին և թե՛ գործողներին, ապա միայն և միայն երկու կողմերին մերժելով, սակայն սեփական ճանապարհը, սեփական մոտեցումները չհրապարակելով, քաղաքական ուժը դադարում է կուսակցություն կոչվելու իրավունքից: Կուսակցությունը կայացած է համարվում, երբ տվյալ երկրի հատկապես շրջադարձային փուլերում հանդես է գալիս հստակ ձևակերպումներով և ժողովրդին առաջարկում է քաղաքական իր գիծը: Ահա այս ամենը հաշվի առնելով, հաշվի առնելով դեռ 1997թ. հոկտեմբերի 17-ին նախորդ իշխանություններին տված գնահատականները, հաշվի առնելով իմ «Հակաճգնաժամային ծրագրում» տեղ գտած գնահատականները գործող իշխանություններին, ինչպես նաև այն փաստարկները, որոնք բերվեցին մեր կուսակցության նախագահության վերջին նիստի ժամանակ, ինձ համոզեցին, որ ստեղծված իրավիճակում եզակի ճշմարիտ ճանապարհն է հանդես գալ ինքնուրույն թեկնածությամբ: Հանդես գալ ինքնուրույն ծրագրով և փորձել այդ ծրագրի մասնակիցն ու սեփականատերը դարձնել մեր ժողովրդին:

Հետաքրքրականն այն էր, որ, մինչև կուսակցության նախագահության կողմից այդ որոշման ընդունումը, մենք քանիցս զգուշացրել ենք ՀՀՇ-ական պարագլուխներին, որ մամուլի միջոցով քաղաքական գործիչներին շանտաժի ենթարկելու իրենց որդեգրած քաղաքականությունը մերժում ենք: Մինչդեռ Տեր-Պետրոսյանին սպասարկող լրատվամիջոցները թիրախ են դարձնում բոլոր այն քաղաքական գործիչներին, ովքեր իրենց սեփական ծրագրերն ունեն և սեփական թեկնածությամբ են հանդես գալու նախագահական

առաջիկա ընտրություններին: Լևոնականների քարոզչության հիմքում դրված է պիտակավորումը, անձնական վիրավորանքներ հասցնելը:

Այսօր էլ մենք մեր ժողովրդին հին ու գործող իշխանությունների մասին ասելիք շատ ունենք, փաստարկված և հիմնավոր շատ գնահատականներ կարող ենք տալ նրանց, սակայն մենք կրկին կոռեկտություն պահպանելու կոչ ենք անում: Մենք կրկին կոչ ենք անում, որ քաղաքական պայքարն ընթանա Հայաստանի ապագայի տեսլականի քննարկումների տիրույթում: Այո, քաղաքական պայքարը ծավալվի քաղաքական տարբեր մոտեցումների վերլուծությունների շրջանակում և գնահատվի, թե դրա արդյունքում հաղթող տեսակետի կենսագործումն որքան բարիք է բերելու և որքան բարիք է խոստանում մեր ժողովրդին, և, վերջին հաշվով, ազգային միաբանության հասնելու ճանապարհին որքանով են ծառայելու ազգային անվտանգության խնդիրների լուծմանը:

Կրկնում եմ, ստեղծված իրավիճակի անկողմնակալ ու սթափ վերլուծությունը և բերված հիմնավոր փաստարկները հանգեցրին մեր հայտնի որոշմանը: Եվ նման պարագայում խոսել «ծախվածության» մասին, կնշանակի մեր դեմ վարել սուտ և ստոր քարոզչություն, ինչը, ի սկզբանե, դատապարտված է...

*– Այնուամենայնիվ, որո՞նք էին այն գլխավոր դրդապատճառները, որ համոզեցին Ձեզ տալ համաձայնություն նախագահական առաջիկա ընտրություններում առաջադրվելու որպես նախագահի թեկնածու:*

– Երբ ուշադրությամբ հետևում ես Հայաստանի Հանրապետությունում ծավալվող գործընթացներին, ինչպես նաև վերլուծության ես ենթարկում Հայաստանի շուրջ ընթացող զարգացումները, ապա տեսնում ես այն վտանգները, որոնք դարանակալել են հայոց պետականության առջև: Հարցեր, որոնց ես առիթ ունեցել եմ անդրադառնալու: Սակայն այսօր Հայաստանի Հանրապետությունում ընդդիմադիր ինքնուրույն բևեռ ինքնահռչակվածները իրենց ողջ քաղաքականությունը նպատակաուղղել են երկիրը ապակայունացնելու

գործին: Իշխանություններն էլ իրենց հերթին ամենն անում են, որ ինքնահռչակ ընդդիմադիր բևեռին հակադրեն բիրտ ուժ: Դրանով իսկ հուժկու հարված է հասցվում մարդկանց գիտակցությանը, հարված, որն էլ ավելի է հիասթափեցնում ժողովրդին, որն էլ ավելի է հուսահատեցնում հասարակությանը: Ի դեմս գործող իշխանությունների և ինքնահռչակ ընդդիմադիր բևեռի՝ ժողովուրդը տեսնում է, որ ազգի ճակատագիրը հավակնում են տնօրինել այնպիսի ուժեր, որոնք իրենց գործողություններով Հայաստանի Հանրապետությանը, ժողովրդին չեն խոստանում խաղաղություն, որոնք մեր երկրին զարգացում չեն խոստանում: Այդ ուժերը ազգին զրկում են ապագայի տեսլականից, ապագայի նկատմամբ վստահության զգացումից: Սակայն, ինքնին հասկանալի է, որ դրա տեսլականի առկայությունը հնարավոր կդարձնի Հայաստանը լքած հարյուր հազարավոր մարդկանց հետդարձը հայրենիք: Հնարավոր կդարձնի առնվազն մինչև 2015-2020 թթ. մեր երկրի ապագայի, արարման ճանապարհները տեսնել: Իսկ դրանց բացակայությունը, բնականաբար, կարող է բերել համազգային ապատիայի, անտարբերության, անհաղորդության, ապատիայի գիրկը նետված ժողովուրդն էլ չի կարող ազգային և ոչ մի լուրջ խնդիր լուծել: Չի կարող դիմակայել մարտահրավերներին, որոնք ծառացած են երկրի, պետականության առաջ, իսկ, որն ամենավտանգավորն է, չի կարող հաղթական ավարտի հասցնել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի հայանպաստ լուծումը: Ահա, երբ այս իրավիճակում ճիգեր են գործադրվում, որ քաղաքական ամբողջ ներկապնակը բաժանվի սև ու սպիտակ գույների, երբ կարգախոս են ընտրել՝ «Ով մեզ հետ չէ, նա դավաճան է», ապա այստեղ է, որ կորչում է հայ մարդը, հայ քաղաքացին: Տպավորություն է ստեղծվում, որ նա այլևս ոչ մեկին չի հետաքրքրում և ոչ մի գործչի ծրագրերում, որպես որոշիչ գործոն, դեր չի խաղում:

Ստեղծված պայմաններում, գիտակցելով սեփական պատասխանատվությունը մեր ժողովրդի, մեր նորանկախ պետականության և պատմության առաջ, մենք չէինք կարող մնալ դիտորդի կարգավիճակում և դա էր, թերևս, որպես նախագահի թեկնածու իմ առաջադր-

ման ամենագլխավոր դրդապատճառներից մեկը: Արդեն 11-րդ տարին է, ինչ «Ազգային Միաբանություն կուսակցությունը», լինելով ընդգծված ընդդիմադիր քաղաքական ուժ, երբեք չի խուսափել պատասխանատվության իր բաժնից: Մենք երբեք չենք առաջնորդվել այն սկզբունքով, որ եթե իշխանության մեջ չենք, ապա պետք է ամեն ինչ անենք, որ մեր քաղաքական հակառակորդները պարտադիր տապալվեն, թեկուզ և պետության կործանման գնով: Իսկ մենք էլ այդ ողբերգական զարգացումների արդյունքում սեփական դիրքորոշումների ճշմարիտ լինելը հաստատած լինենք: Ինչ խոսք, դա մեզ համար անընդունելի է: Ամեն մի կորուստ, որը կրում է մեր պետականությունը, մենք վերագրում ենք նաև մեզ, որ չենք կարողացել հավուր պատշաճի ներազդել իշխանությունների վրա, որ նրանք կարողանային երկիրը զերծ պահել կորուստներից:

Դարձյալ կրկնում եմ՝ թվարկված վերոհիշյալ դրդապատճառներից ելնելով, նաև երկրում տեսնելով տագնապահարույց բազում այլ խնդիրների առկայությունը՝ «Ազգային Միաբանություն կուսակցությունը» նպատակահարմար գտավ նախագահական առաջիկա ընտրություններում հանդես գալ սեփական թեկնածուով:

*– Ինչպիսի՞ն եք տեսնում Հայաստանը 2008 թ. նախագահական ընտրություններից հետո: Ո՞րն է լինելու ապագայում Ձեր և «Ազգային Միաբանություն կուսակցության» անելիքը:*

– «Ազգային Միաբանություն կուսակցությունն» այսօր իր հիմնական խնդիրներից մեկը համարում է մեր ժողովրդին բացատրել և ապացուցել, որ Հայաստանի Հանրապետության քաղաքական դաշտում արդեն իսկ գործում է քաղաքական երրորդ ուժը, ձևավորվել է քաղաքական երրորդ բևեռը, որը մերժում է առճակատմամբ հղի այն զարգացումները, որոնք դրվել են թե՛ գործող և՛ թե նախորդ իշխանությունների գործունեության հիմքում: «Ազգային Միաբանությունը» ամենն անելու է, որ մեր կողմից առաջարկվող «Արարման ծրագրում» ժողովուրդը տեսնի սեփական դերակատարությունը, որ գիտակցի՝ իշխանության բերելով «Ազգային Միաբանություն կուսակցության» թեկնածուին, նա ինքն է գալիս իշխանության, նա ինքն

է գալիս կերտելու սեփական ճակատագիրը: Նա ինքն է գալիս ասելու ո՛չ կլանային, օլիգարխիկ այն համակարգին, որը ձևավորվել է դեռ նախորդ իշխանությունների ժամանակ և, ավա՜ղ, շարունակում է գործել ներկա իշխանությունների պարագայում: Որ ժողովուրդը հասկանա ու գիտակցի, որ դրական իմաստով այն փոփոխությունները, ինչն արձանագրվել է գործող իշխանությունների կողմից առաջարկվող 2008 թ. բյուջեում, անշրջելի կլինեն միայն և միայն այն պայմաններում, երբ հզորանա ուժի երրորդ բևեռը, ուժի երրորդ կենտրոնը: Բևեռ, որը թույլ չի տա այդ նույն կլաններին, օլիգարխներին, ովքեր տարիներ շարունակ թալանել են բյուջեն, հանկարծ խոչընդոտեն 2008 թ. բյուջեի կատարմանը: «Ազգային Միաբանություն կուսակցությունը» ազատ է հակակոռուպցիոն ցանկացած գործողություններ իրականացնելու հարցում, քանզի մենք անկախ ենք թե՛ նախորդ իշխանություններից, թե՛ գործող իշխանություններից և թե՛ նրանց հովանավորությունը վայելող կլաններից: «Ազգային Միաբանություն կուսակցությունը» պատրաստ է սատարել երկրի ներսում ծավալվող ցանկացած դրական գործընթացին, ում կողմից էլ, որ դա նախաձեռնվի: Կա մի պարզ ճշմարտություն. եթե դու իսկապես երկրիդ պատրիոտն ես, եթե դու, իրոք, ապրում ես ժողովրդիդ հոգսերով, ապա քո կողմից թեկուզև չընդունված քաղաքական ուժը եթե դրական որևէ գործ է կատարում, դու պարտավոր ես հանուն քո երկրի ապագայի համագործակցել այդ ուժի հետ: Համագործակցել, բնականաբար, միայն և միայն հայրենիքումդ իրականացվող դրական փոփոխությունների տիրույթում: Եվ եթե դրա գիտակցումը դարձնենք մեր ժողովրդի սեփականությունը, անտարակույս, 2008 թ. նախագահական ընտրություններին մենք կունենանք մեծագույն հաջողություն: Եվ, կարծում եմ, այս տեսանկյունից եթե գնահատելու լինենք մեր գործերը, ապա մեր հաջողությունը կլինի, այո, ինչու չէ, նաև իշխանության ղեկը ստանձնած կուսակցությունների հաջողությունը: Որովհետև ես չեմ ուզում հավատալ, թե բոլոր իշխանավորներն էլ առաջնորդվում են գեթ մեկ գաղափարով, այն է՝ օրինականացնել սեփական անօրինական գործողությունների արդյուն-

քում կուտակված հարստությունը կամ էլ՝ շարունակել կեղեքել բյուջեն, այսինքն՝ շարունակել գործել ստվերում: Համոզված եմ, որ այս ամենի առաջն ի զորու է առնել քաղաքական այն ուժը, որը բացարձակապես և ոչ մի կապանքով շղթայված չէ այս իշխանությունների ստվերային հատվածը կազմող մարդկանց հետ:

*– Ձեր ընդդիմախոսներն ասես թե նպատակ են դրել Արտաշես Գեղամյան – Սերժ Սարգսյան մինչև մեկ տարի առաջ շարունակվող հեռակա բանավեճը վերակենդանացնել և տեղափոխել միմյանց անձնական վիրավորանքներ հասցնելու ոլորտ. ինչպե՞ս դա կմեկնաբանեք:*

– Դա երկու բացատրություն ունի: Առաջին բացատրությունը, թերևս, այն է, որ «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահության նոյեմբերի 27-ին կայացած նիստի ժամանակ իմ գործընկերների, նաև իմ կողմից անողոք գնահատականներ տրվեցին նախորդ իշխանությունների, ինչու չէ նաև գործող իշխանությունների հասցեին: Այդ ամենը տպագրվեց հայաստանյան 3 լրատվամիջոցներում՝ թե՛ հայերեն լեզվով և թե՛ ռուսերեն լեզվով: Հետաքրքրվողներն այդ նյութերին կարող են ծանոթանալ, մասնավորապես, «Փակագիծ», «168 ժամ» և «ԹՏՍՏՐ ԸՐՎՎՈՌ» թերթերում: Այնտեղ սևը սպիտակի վրա տրված են գնահատականներ, կրկնում եմ, թե՛ նախորդ իշխանությունների գործունեությանը և թե՛ գործող իշխանություններին: Անցած օրերի ընթացքում բացարձակապես և ոչ մի փաստարկ չգտնելով մեր կողմից բերված հիմնավորումները հերքելու օգտին, նախորդ իշխանությունները կրկին գործի դրեցին ընդդիմախոսներին շանտաժի ենթարկելու իրենց ներհատուկ ծրագրերը, ուր պիտակավորում էին թե՛ կուսակցությանը և թե՛ անձիս: Անպտուղ փորձ կատարվեց լարվածություն ստեղծել կուսակցության տարածքային կազմակերպությունների ղեկավարների շրջանում: Փորձ կատարվեց նաև նեղացածության մթնոլորտ ձևավորել «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահության կազմում: Սև PR-ի ՀՀՇ-ական մասնագետները գործընկերներիս անաչառ և սկզբունքային ելույթները փորձեցին վերագրել ինձ՝ սին հույսեր տածելով, որ մերոնք դրանից կնեղվեն: Բնականաբար,

նրանց նկրտումները ձախողվեցին: Բայց փոխարենը նրանք պետք է ինչ-որ կերպ արձագանքեին մեր սուր քննադատությանը և մեղադրանքներին: Սեփական զինանոցում չունենալով և ոչ մի հակափաստարկ՝ մեր միջև իրենց նախաձեռնությամբ ծավալված բանավեճը տեղափոխեցին անձնական հարաբերությունների ոլորտ: Ըստ որում, այստեղ տեղին է նշել գործող իշխանությունների կողմից դրսևորած մի հետաքրքիր փաստ. ՀՀՇ-ական մամուլում իմ հասցեին ուղղված ողջ սուտը, զրպարտությունները, մեղադրանքները մեկ էլ հանկարծ այս կամ այն «պատասխանատու» հեռուստաալիքների կողմից մամուլի տեսության հաղորդման ժամանակ լսեցնել էին տալիս ժողովրդին, էլ չեմ խոսում «Ազատություն» ռադիոկայանի առանձին թղթակիցների մեկնաբանությունների մասին: Երբ նրանցից ոմանց հարցազրույց էիր տալիս, քեզ թվում էր, որ հարցազրույց վարողը ՀՀՇ-ական «Հայք» պաշտոնաթերթի թղթակից է և ոչ թե «Ազատություն» ռադիոկայանի: Ահա, տեսնելով, որ այս հնարքները իրենց ազդեցությունը բացարձակապես չեն թողնում «Ազգային Միաբանություն կուսակցության» հետևողական դիրքորոշումների վրա, տղերքը բանավեճը տեղափոխեցին անձնական հարաբերությունների դաշտ: Որպես դասականի՝ մեծագույն հրճվանքով և հաճույքով սկսեցին ցիտել Սերժ Սարգսյանին՝ ակնկալելով իմ անհապաղ պատասխանը: Ժողովրդական լեզվով ասած՝ տղերքը շիրա էին տալիս: Այդ մարդկանց հիասթափեցնեմ. Սերժ Սարգսյանի հետ ես անձնական խնդիրներ չունեմ: Վերջինիս կողմից իմ հասցեին ասված քաղաքական գնահատականների մասին ուզում եմ հիշեցնել «Ազգային Միաբանության» ընդդիմախոսներին, մասնավորապես՝ ՀՀՇ-ականներին: Այսպես, 2004 թ. դեկտեմբերի վերջին տասնօրյակում էր, երբ Ազգային ժողովի փակ նիստում քննարկվում էր Հայաստանի Հանրապետությունից Իրաք հայ զինվորականներ գործուղելու հարցը: Այդ օրը ձեր խոնարհ ծառա Արտաշես Գեղամյանը ԱԺ-ում երկու ելույթ ունեցավ: Ըստ որում, գործող իշխանություններին սատարողները, ասես թե, պապանձվել կամ լռում էին, կամ էլ պետության շահին հակառակ մոտեցումներով էին հանդես

գալիս: Իմ այդ երկու ելույթներից հետո Ազգային ժողովում հարցը ներկայացնող այն ժամանակվա պաշտպանության նախարար, ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Սերժ Սարգսյանը խորհրդարանի ամբիոնից հայտարարեց, որ Արտաշես Գեղամյանի փաստարկված ելույթներից հետո այլևս կարելի էր դադարեցնել քննարկումները, քանի որ բոլոր հարցերի համոզիչ պատասխանները տրված էին և դժվար թե գտնվեր որևէ մեկը, որը կարողանար հակափաստարկներ բերել: Ես չեմ կարծում, որ Սերժ Սարգսյանը, որը հրապարակավ, այն էլ Ազգային ժողովի ամբիոնից նման գնահատականի է արժանացրել ինձ՝ Արտաշես Գեղամյանիս (ինչն ամենևին ինձ ոչ ոգևորում է, ոչ էլ տխրեցնում է. ես պարզապես փաստն եմ արձանագրում), հանկարծ ինքն իրեն հակասեր քաղաքական մեկ այլ գնահատական տալով անձիս: Քաղաքական ուրիշ գնահատական, կրկնում եմ, քաղաքական գնահատական, ես նրանից չեմ լսել: Իսկ արտահայտած անձնական կարծիքներին արձագանքելն անիմաստ եմ համարել և համարում: Հակառակ դեպքում դա, բնականաբար, չէր խոսի թե Ս.Սարգսյանի և թե իմ օգտին: Այնպես որ, այս մարդկանց հիասթափեցնեմ. պատմության մեջ մնում են միայն քաղաքական գնահատականները, իսկ քաղաքական գնահատականները, որոնք տրվել են Գեղամյան քաղաքական գործչին, թող անհամեստություն չհնչի, արձանագրված են ԵԽԽՎ-ի, ինչպես նաև ԵԱՀԿ-ի Խորհրդարանական վեհաժողովներում իմ ունեցած 21 ելույթների արձագանքներում, ելույթներ, որոնք արձանագրված են այդ կազմակերպությունների պաշտոնական փաստաթղթերում և այլևս դարձել են եվրոպական նորագույն պատմության սեփականությունը: Այստեղ ես մտածելու խնդիր չունեմ: Սակայն ակնհայտ է, որ խնդիր ունեն ընդդիմախոսներս: Դրանց ամբողջ քարոզչական մեքենան հայտնվել է ողորմելի վիճակում: Այդ ի՞նչ օրն եք ընկել պարոնայք ՀՀՇ-ականներ, որ ձեր քաղաքական հակառակորդին վարկաբեկելու նպատակով մեջբերումներ, ցիտատներ եք անում, ձեր իսկ բնորոշմամբ, ձեր մյուս քաղաքական հակառակորդ Սերժ Սարգսյանից: Կարծում եմ, այս հարցում մեկ-

նաբանություններն այլևս ավելորդ են:

Եթե ուշադրությամբ վերլուծում ես ընթացող զարգացումները, ապա չես կարող չգալ մի եզրակացության: Ո՞րն է դա: Իմ համոզմամբ Լևոն Տեր-Պետրոսյանն ամենևին էլ խնդիր չունի հանրապետության նախագահ դառնալ: Հանրապետության նախագահի թեկնածուն, այն էլ այս բախտորոշ շրջանում, կարծում եմ, իրենից կախված ամենը պետք է աներ ազգը կոնսոլիդացնելու, ազգը միաբանելու ուղղությամբ, երկրի առաջ ծառացած լրջագույն խնդիրների լուծման համար, այլ ոչ թե սկսեր վնասակար աշխատանք՝ ազգը բաժանելով իմի ու քոնի: Տպավորություն է ստեղծվում, որ հերթական անգամ փորձ է կատարվում ամայացնել ընդդիմադիր դաշտը: ՀՀՇ-ական մամուլն այսօր ավելի շատ քննադատության է ենթարկում ընդդիմադիր գործիչներին, քան իշխանություններին: Նրանք փորձում են ամլացնել ընդդիմադիր դաշտը՝ խնդիր ունենալով դրսի ուժերին, այո, ես չսխալվեցի, դրսի ուժերին ապացուցել, որ կա գործող իշխանություն և կա միայն ու միայն նրանց հակազդող քաղաքական մի ուժ՝ ի դեմս Լևոն Տեր-Պետրոսյանի: Եվ նպատակ է դրված ոչ թե երկրի վիճակը բարելավել, այլ խնդիր է դրված երկիրն ապակայունացնել: Այլապես չի կարելի քաղաքական այնպիսի հայտարարություններով հանդես գալ, որոնք ակնհայտորեն ուղղված են երկիրն ապակայունացնելու գործին: Մի՞թե չգիտեն, որ գործող Սահմանադրության պայմաններում Ազգային ժողովում մեծամասնություն ունեցող քաղաքական ուժերն են ձևավորում կառավարություն և առաջարկում վարչապետի թեկնածությունը: Եվ այդ պարագայում մի՞թե արկածախնդրություն չէ այն հայտարարությունը, որ երկրի նախագահ դառնալով՝ Լևոնը կփոխի վարչապետին: Ի՞նչ ճանապարհով, ի՞նչ գնով: Միգուցե ուզում են կրկնել այն, ինչ տեղի ունեցավ 1998 թ., երբ գրեթե մի գիշերվա ընթացքում ներսից պայթեցվեց այն ժամանակ մեծամասնություն կազմող խորհրդարանական դաշինքը: Միգուցե խնդիր է դրված, որ 2008 թ. Հայաստանի իշխանությունները պետք է ձևավորվեն առնետավազքի արդյունքում առաջացած քաղաքական ուժերո՞վ: Եթե նման հեռանկար է խոստանում Լևոն Տեր-Պետրոսյանական բևեռը, մենք

դա կտրականապես մերժում ենք: Բնականաբար, մերժում ենք նաև գործող իշխանությունների՝ նախկինների դեմ վարվող, սակայն ուշացած քաղաքականությունը:

Եվ, վերջապես, մի կարևոր հանգամանք. ինչպե՞ս կարելի է դեռ քարոզարշավը չսկսած, քաղաքական բոլոր կուսակցություններին, ովքեր նախագահական առաջիկա ընտրություններին առաջադրել են իրենց թեկնածուներին, սևացնել, վարկաբեկել, զրպարտել միջազգային հանրության առաջ: Մի՞թե չեն գիտակցում այն պարզ ճշմարտությունը, որ երբ ընտրությունների արդյունքում Լևոնից բացի ցանկացած մեկ այլ թեկնածու է ընտրվում երկրի նախագահ, ի սկզբանե, դրսի ուժերի համար դառնում է խոցելի: Չէ՞ որ արդեն իսկ այնքան վիրավորական, այնքան վարկաբեկիչ մեղադրանքներ են հնչեցրել ՀՀՇ-ական, ինչու չէ, նաև իշխանական մամուլով նախագահի բոլոր մյուս թեկնածուների հասցեին, որ միջազգային հանրությունը կասի. տեսեք, թե այսօր հայ ժողովուրդը ո՞ւմ միջև է դատապարտված նախագահի ընտրություն կատարել, ի՞նչպիսի հանցավոր տարրերի միջև: Վերջին հաշվով եկել է այն ժամանակը, որ հարկ է գիտակցել՝ նախագահական ընտրություններն այս կամ այն կուսակցության մենաշնորհը չէ, այլ ազգային արժանապատվության հաստատման գործառույթ է:

Նախագահական ընտրություններն ուղղակիորեն կախված և պայմանավորված են ազգային արժանապատվության հաստատման հետ: Դա ինձ ստիպում է հորդորով դիմել նախագահի բոլոր թեկնածուներին ու նրանց թիկունքում կանգնած քաղաքական ուժերին. ժամանակն է վեր կանգնել կուսակցական, շահադիտական նեղ նկրտումներից և չփորձել սեփական գործողություններով որպես զենք ծառայել միջազգային ուժի կենտրոնների համար, ինչքան էլ վերջիններս հրապուրիչ խոստումներ շռայլեն...

---

«168 ժամ», 15-17. XII. 2007:

# «ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ» ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

«Ազգային Միաբանություն կուսակցության» (ԱՄԿ) նախագահությունը ս/թ նոյեմբերի 27-ին և դեկտեմբերի 13-ին հրավիրած մամուլի ասուլիսների ժամանակ փաստարկված և սկզբունքային գնահատականներ էր տվել Լևոն Տեր-Պետրոսյան-Վանո Սիրադեղյան զույգի իշխանավարության տարիներին (1990թ. հունիս-1998թ. հունվար) Հայաստանի Հանրապետությունում կատարված բազում արյունալի հանցագործություններին: Նաև նշել էր գործող իշխանությունների կողմից դրանց քաղաքական ու իրավական գնահատականներ չտալու վտանգավորությանը: Լևոնի ու Վանոյի կողմից հիմնված վարչախմբի ավազակային էությունը բացահայտելիս ԱՄԿ-ն իր պարտքն էր համարում մեր ժողովրդին մեկ անգամ ևս նախազգուշացնել այն աղետալի զարգացումների մասին, որով հղի է նրանց քաղաքական վերակենդանացումը:

Մեր բերած հիմնավորումներին անզոր լինելով հակադրել որևէ հակափաստարկ, այսօր էլ Վանո Սիրադեղյանի կողմից (հիշեցնենք, որ նա մարդասպանությունների կազմակերպիչ ու պատվիրատու լինելու կասկածանքով հետախուզվում է «Ինտերպոլի» կողմից) վերահսկվող ՀՀՇ-ական մամուլը որդեգրեց իրեն բնորոշ և հոգեհարազատ սև քարոզչություն, այն է՝ «Ազգային Միաբանություն կուսակցության» առաջնորդ Արտաշես Գեղամյանին, նրա հարազատներին զրպարտելու գործելաոճը:

Այս գործում առավել աչքի ընկավ դեռ 1999-2000 թթ. պատկառելի տարբեր մարդկանց, այդ թվում Ա.Գեղամյանի կնոջը զրպարտության, վիրավորանքի համար դատված «Հայկական ժամանակ» թերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Վովայի Փաշինյանը, մարդ, որը չնայած իր երիտասարդ հասակին, հմտացել էր այդ զազրելի գործում: Մեր այս գնահատականը մերկապարանոց չլինելու համար կցում ենք (կրճատումներով) Հայաստանի Հանրապետության Քրեական և Զինվորական գործերով Վերաքննիչ դատարանի վճիռը:

*Գործ Հ. 4-315*
*2000թ.*

*ԴԱՏԱՎՃԻՌ*

*Հանուն Հայաստանի Հանրապետության*

*27 հունվարի 2000թ.* *ք.Երևան*

*Հայաստանի Հանրապետության Քրեական և Քաղաքացիական գործերով Վերաքննիչ դատարանը հետևյալ կազմով*

| | |
|---|---|
| *Նախագահող Դատավոր՝* | *Ս.Ղազարյան* |
| *Դատավորներ՝* | *Ե.Դարբինյան* |
| | *Ռ.Ափինյան* |
| *Քարտուղարությամբ՝* | *Ք.Ասատրյան* |
| *Մասնակցությամբ՝* | |
| *Մեղադրողներ՝* | *Ա.Մկրտչյան,* |
| | *Պ.Տեր-Հարությունյան* |
| *Տուժողներ՝* | *Ա.Սահակյան,* |
| | *Վ.Գալստյան,* |
| | *Ն.Այվազյան,* |
| | *Վ.Այվազյան* |
| | *Ա.Պլուզյան* |
| *Պաշտպաններ՝* | *Տ.Ջանոյան,* |
| | *Ա.Կարախանյան* |

*Դռնբաց դատական նիստում պաշտպանների վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առավ քրեական գործն ըստ մեղադրանքի Նիկոլ Վովայի Փաշինյանի, ծնված 1975թ. հունիսի 1-ին, Իջևան քաղաքում, հայ, ՀՀ քաղաքացի, թերի բարձրագույն կրթությամբ, ամուսնացած, նախկինում չդատված, զինապարտ, ֆիզիկապես առողջ, աշխատում է «Հայկական ժամանակ» օրաթերթում որպես գլխավոր խմբագիր, բնակվում է ք.Երևանում, Չեխովի փողոց 3-րդ շենք, թիվ 50 բնակարանում:*

*Մեղադրվում է ՀՀ քր. օր. 131 հոդվածի 1-ին, 3-րդ մասերով, 132 հոդ-*

*վածի 2-րդ մասով, 208 հոդվածով և 191 հոդվածի 4-րդ մասով:*

*Դատաքննությամբ և գործի փաստական տվյալներով Վերաքննիչ դատարանը*

*Պ Ա Ր Զ Ե Ց*

*«Ա.Գեղամյանի ոսկու կարասը» վերնագրով հոդվածով Արտաշես Գեղամյանի կին Անուշ Պլուզյանին Զրպարտել է ծանր հանցագործության կատարման մաքսանենգության փորձ կատարելու մեջ տարածելով նրան նշավակող ակնհայտ սուտ հերյուրանք:*

*Ամբաստանյալ Նիկոլ Փաշինյանի մեղքը ապացուցվել է իր կողմից տրված մասնակի խոստովանական ցուցմունքներով, իսկ բերված պատճառաբանությունները հերքվել են ձեռք բերված հետևյալ ապացույցներով*

*Ամբաստանյալ Ն.Փաշինյանի մեղքը հիմնավոր ապացույցներ են նաև.*

*ՀՀ Մաքսային վարչությունից ստացած գրությունով այն մասին, որ վարչության արխիվներում կամ հաշվապահական փաստաթղթերում Ա.Պլուզյանի վերաբերյալ որևէ արձանագրություն կամ այլ փաստաթուղթ Չկա:*

*Ա.Պլուզյանի արտասահմանյան անձնագրի մեջ էջ 8-րդում կա նշում, որ նա Հայաստանից մեկնման իրավունք է ունեցել մինչև 1993թ. դեկտեմբերի 31-ը, սակայն այդ թվականին ՀՀ Մաքսային սահմանը անցնելու վերաբերյալ որևէ նշում Չկա:*

*Վերաքննիչ դատարանը ամբաստանյալ Ն.Փաշինյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի առնելով նրա կողմից կատարած արարքների հասարակության համար վտանգավորության աստիճանը, նրա անձի այն, որ նախկինում դատապարտված չի եղել, խնամքին ունի մեկ անձ, ինչպես նաև առանց հասարակությունից մեկուսացնելու հնարավոր է նրա ուղղումն ու վերադաստիարակումը:*

*Վերաքննիչ դատարանը պատիժ նշանակելիս ամբաստանյալի պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող որևէ հանգամանք չի գտել: Այսպիսով առաջին ատյանի դատարանի դատավճիռը պետք է բեկանել և կայացնել նոր դատավճիռ:*

*Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր. 393, 395*

*հոդ. Վերաքննիչ դատարանը*

*Վ Ճ Ռ Ե Ց*

*Բեկանել Երևան քաղաքի Նորք-Մարաշ առաջին ատյանի դատարանի 1999թ. օգոստոսի 31-ի դատավճիռն ըստ մեղադրանքի Նիկոլ Վովայի Փաշինյանի.*

*Նիկոլ Վովայի Փաշինյանին մեղավոր ճանաչել ՀՀ քր. օր. 184 հոդվածով, 208 հոդվածով և 191 հոդվածի 4-րդ մասով.*

*ՀՀ քր. օր.184 հոդվածով դատապարտել ազատազրկման մեկ տարի ժամկետով.*

*ՀՀ քր. օր. 208 հոդվածով դատապարտել տուգանքի նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:*

*ՀՀ քր. օր. 191 հոդվածի 4-րդ մասով դատապարտել տուգանքի նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:*

*ՀՀ քր. օր. 37 հոդվածի կանոններով նվազ խիստ պատիժը ավելի խիստ պատժով կլանելու միջոցով վերջնական պատիժ նշանակել ազատազրկում մեկ տարի ժամկետով:*

*Կիրառել ՀՀ քր. օր. 421 հոդվածը և դատավճռի կատարումը հետաձգել մեկ տարի ժամանակով:*

*Ն.Փաշինյանի վարքի վերահսկողությունը դնել նրա բնակության վայրի Ներքին գործերի բաժնի վրա:*

*Ն.Փաշինյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, թողնել անփոփոխ մինչև սույն դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:*

*Դատավճիռը կարող է բողոքարկվել ՀՀ Վճռաբեկ դատարանի Քրեական և Զինվորական գործերով պալատին այն հրապարակելուց հետո 10 օրյա ժամկետում:*

***

*Նախագահող դատավոր՝ Ս. Ղազարյան*

*դատավորներ՝ ստորագրություններ*

*իսկականի հետ ճիշտ է /կնիք/*

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքին անծա-

նոթ ընթերցողներին պարզաբանելու համար նշենք, որ Ն.Փաշինյանի մասին վերը բերված դատական նյութերի մեջ հիշատակված հոդվածներն են.

Հոդված 131-ի առաջին մաս՝ «Զրպարտությունը, այսինքն՝ ուրիշին նշավակող ակնհայտ սուտ հերյուրանքներ տարածելը»: Նույն հոդվածի երրորդ մաս՝ «Զրպարտությունը տպագիր կամ որևէ այլ եղանակով բազմացրած գրվածքում, անանուն նամակում ...»:

Հոդված 184. «Անփութության, պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնական պարտականություններն անփույթ կամ անբարեխիղճ վերաբերելու հետևանքով դրանց չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որով էական վնաս է հասցվել պետական կամ հասարակական շահերին, կամ քաղաքացիների՝ օրենքով պաշտպանվող իրավունքներին ու շահերին»:

Հոդված 191-ի չորրորդ մաս՝ «Դատավճիռը, վճիռը կամ որոշումը չկատարելը պաշտոնատար անձի կողմից դատարանի դատավճիռը, վճիռը կամ որոշումը դիտավորյալ չկատարելը կամ դրանց կատարմանը խոչընդոտելը»: Անբաստանյալ Ն.Փաշինյանը այս հոդվածով դատապարտվել էր Նորք-Մարաշ առաջին ատյանի դատարանի 1999թ. օգոստոսի 31 դատավճռով մի քանի պատկառելի քաղաքացիների հասցրած վիրավորանքի և զրպարտության համար ներողություն խնդրելու և իր խմբագրած թերթում հերքում տպագրելու առաջին ատյանի դատավճիռը չկատարելու համար:

Տրամաբանական հարց է ծագում՝ ի՞նչ նպատակ են հետապնդում Լևոնի ու Վանոյի կամակատար «Չորրորդ իշխանությունը», «Հայքը» և «Հայկական ժամանակը» կրկին անդրադառնալով Ա.Գեղամյանի ընտանիքին զրպարտելուն, քաջատեղյակ լինելով, որ նույն զրպարտության, վիավորանք հասցնելու համար Ն.Փաշինյանն արդեն իսկ 2000թ. դատապարտվել էր մեկ տարի պայմանական ազատազրկման: Չենք կարծում, որ նրանք խնդիր էին հետապնդում ցույց տալ, որ Ն.Փաշինյանի բնակության վայրի ոստիկանության ներքին գործերի բաժինը թերացել է ՀՀ Վերաքննիչ դատարանի վճիռը կատարել՝ անհրաժեշտ հսկողություն չսահմանելով նրա վարքի

վրա: Ոչ, ՀՀՇ-ական լրատվամիջոցների հաշվարկն այլ է. հերյուրանքներ տարածելով Ա.Գեղամյանի մասին՝ նրանք խնդիր ունեն առաջին հերթին շեղել մարդկանց ուշադրությունը իրենց հովանավորներ՝ Լևոն Տեր-Պետրոսյան-Վանո Սիրադեղյան զույգի իշխանավարության տարիներին կատարված սահմռկեցուցիչ սպանություններից, ավազակություններից:

Երկրորդ. նախագահական առաջիկա ընտրությունների նախաշեմին տերպետրոսյանա-սիրադեղյանական մամուլը ցեխ շպրտելով Արտաշես Գեղամյան քաղաքական, պետական հեղինակավոր գործչի վրա փորձ է կատարում նրա նախագահ դառնալու հնարավորությունները սահմանափակել: Դրանով իսկ նրանք գիտակցաբար և միտումնավոր անգնահատելի ծառայություն են մատուցում գործող իշխանություններին:

Երրորդ. եթե Ա.Գեղամյանը դիմում է դատարան՝ նույն զրպարտության համար հիշատակված թերթերի խմբագիրներին քրեական պատասխանատվության ենթարկելու հայցով, ապա վերջիններս իսկույն կկերպարանափոխվեն, և Լևոն Տեր-Պետրոսյանը կրկին կդիմի ԵԽԽՎ, ԵԱՀԿ, երկրից դուրս հազար ու մեկ այլ տեղ՝ աղաղակելով, որ Հայաստանի Հանրապետությունում ճնշվում է խոսքի ազատությունը:

Եվ, վերջապես, ակներև է դառնում երկու իրողություն: Նախ՝ դեկտեմբերի 8-ի հանրահավաքից հետո պարզ դարձավ, որ ՀՀՇ-ական տղերքը, ժողովրդական խոսքով ասած, գնալով մարում են: Այստեղ է, որ խիստ անհրաժեշտություն առաջացավ գզրոցներից հանել սադրանքի փորձված միջոցները, մասնավորապես, այնպիսին, ինչպիսին էր «անհայտ» մարդկանց կողմից «փութաջանորեն» կազմակերպված «Չորրորդ իշխանություն» խմբագրատան մուտքի մոտ պայթյունը: Առաջիկայում էլ, համոզված ենք, կլինեն սադրիչ նոր գործողություններ:

Այնուհետև. եթե առաջին հանրահավաքի ժամանակ Լևոն Տեր-Պետրոսյանն անվանական խստորեն քննադատեց Ռոբերտ Քոչարյանին ու Սերժ Սարգսյանին, ապա երկրորդ հանրահավաքի իր

ելույթում արդեն իսկ տոնայնությունը փոխեց, սիրտը բարակեց, ջիգրոտեց, սկսեց վերհիշել վերջիններիս բարեմասնությունների մասին: Գտավ, որ իր նախագահության օրոք թե՛ Քոչարյանը, թե՛ Սարգսյանը դրականորեն են գնահատվել: Իսկ երրորդ հանրահավաքի դարակազմիկ իր ելույթում նա արդեն իրեն գցեց իրենց հարազատ թաթար-մոնղոլական խանության բաղերը, ավելի ճիշտ՝ տափաստանները: Կարծում ենք, եզակի ճշմարիտ և հեռատես որոշումը կլինի, եթե նա այնտեղ էլ մնա:

Այս երեք հանրահավաքներից միանգամայն ակնհայտ դարձավ այն, որ Լևոնը սաստիկ վախեցած է, վախը դրոշմված է նրա դեմքին, կարդացվում է նրա աչքերի մեջ, ձեռքերի ջղաձիգ շարժումները նույնպես դա են վկայում: Եվ սա այն դեպքն է, որ ոչ խմիչք ընդունելը նրան կօգնի, ոչ էլ «Չորրորդ իշխանության», «Հայքի» կամ էլ «Հայկական ժամանակի» զրպարտչական հոդվածները նրան կփրկեն: Մարդն ընկել է խորը դեպրեսիայի մեջ, և նման իրավիճակում հայտնված անձին օգնելը դյուրին գործ չէ:

Նշենք, որ, ի տարբերություն ՀՀՇ-ի, ունենք Լևոնի և նրա թիմակիցների դիմակը պատռող ոչ թե շինծու, այլ իրական բազմաթիվ փաստեր, սակայն առայժմ կբավարարվենք այսքանով:

*«Ազգային Միաբանություն կուսակցության»*
*լրատվական ծառայություն*
*17 դեկտեմբերի 2007թ.*

---

«Փակագիծ», 18. XII. 2007:

# ԻՆՉՈՒ Է ՍԵՎ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԳԵՂԱՄՅԱՆԻ ԴԵՄ

*Այն բանից հետո, երբ «Ազգային Միաբանություն կուսակցության» առաջնորդ Արտաշես Գեղամյանն իր վերջին ասուլիսում հայտարարեց, որ նախկին իշխանությունները «1990 թվականից սկսած այդպես էլ չկարողացան որևէ փաստարկված կոմպրոմատ գտնել իմ դեմ», հիշականները անմիջապես «գտան» այդ «կոմպրոմատը», ինչն էլ օրերս հրապարակեցին իրենց թերթերում:*

*Ճիշտ է, այդ «կոմպրոմատը» անմիջականորեն Գեղամյանին չի առնչվում, այլ նրա կնոջը՝ Անուշ Պլուզյանին, սակայն դա կարո՞ղ է որևէ նշանակություն ունենալ Լ.Տեր-Պետրոսյանի թիմակիցների համար, որոնք խնդիր են դրել ամեն գնով վարկաբեկել ԱՄԿ ղեկավարին: Հիշեցնելով 1993թ. իբր արձանագրված դեպքը, հիշական թերթերից մեկը գրում է, որ «թեև մաքսային վարչության աշխատակիցները նրա կնոջը բռնել էին մաքսանենգության փորձ կատարելիս, սակայն նա այդպես էլ չի պատժվել»:*

*Երեկ «Հայոց Աշխարհ»-ի խնդրանքով ոչ միայն սույն «կոմպրոմատի», այլև ընդհանրապես Ա.Գեղամյանի դեմ իրականացվող սև քարոզչության վերաբերյալ իր պարզաբանումներն ու մեկնաբանությունները ներկայացրեց «Ազգային Միաբանություն կուսակցության» փոխնախագահ ԱԼԵՔՍԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ:*

– «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահությունը նոյեմբերի 27-ին և դեկտեմբերի 13-ին հրավիրած մամուլի ասուլիսների ժամանակ փաստարկված և սկզբունքային գնահատականներ տվեց Լևոն Տեր-Պետրոսյան-Վանո Սիրադեղյան զույգի իշխանավարության տարիներին կատարված բազում արյունալի հանցագործություններին: Ինչպես նաև նշվեց գործող իշխանությունների կողմից դրանց իրավական գնահատականներ չտալու վտանգավորությունը: Լևոնի ու Վանոյի հիմնած վարչախմբի ավազակային էությունը բացահայտելիս ԱՄԿ-ն իր պարտքն է համարում մեկ անգամ

ևս նախազգուշացնել մեր ժողովրդին այն աղետալի զարգացումներ-ի մասին, որով հղի է նրանց քաղաքական վերակենդանացումը:

Անզոր լինելով մեր բերած հիմնավորումներին հակադրել որևէ հակափաստարկ՝ այսօր էլ Վանո Սիրադեղյանի կողմից (հիշեցնեմ, որ նա մարդասպանությունների կազմակերպիչ և պատվիրատու լինելու կասկածանքով հետախուզվում է Ինտերպոլի կողմից) վերահսկվող հիշական մամուլը որդեգրեց իրեն բնորոշ և հոգեհարազատ սև քարոզչություն: Այն է՝ ԱՄԿ առաջնորդ Արտաշես Գեղամյանին, նրա հարազատներին զրպարտելու գործելաոճը:

Այս գործում առավել աչքի ընկավ դեռևս 1999-2000թթ. տարբեր մարդկանց, այդ թվում՝ Ա.Գեղամյանի կնոջը զրպարտության, վիրավորանքի համար դատված «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանը: Որպեսզի ասածս մերկապարանոց չհնչի, ներկայացնեմ ՀՀ Քրեական և Քաղաքացիական գործերով Վերաքննիչ դատարանի՝ 2000թ. հունվարի 27-ի կայացրած դատավճռից հատվածներ:

Հիշեցնեմ, որ Նիկոլ Փաշինյանին մեղադրանք էր առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի չորս հոդվածներով: Եվ դատաքննությամբ ու գործի փաստական տվյալներով դատարանը պարզեց, որ «Ա.Գեղամյանի ոսկու կարասը» վերնագրով հոդվածով Արտաշես Գեղամյանի կին Անուշ Պլուզյանին զրպարտել է ծանր հանցագործության կատարման՝ մաքսանենգության փորձ կատարելու մեջ, տարածելով նրան նշավակող ակնհայտ սուտ, հերյուրանք: Ամբաստանյալ Ն.Փաշինյանի մեղքը ապացուցվել է իր կողմից տրված մասնակի խոստովանական ցուցմունքներով, իսկ բերված պատճառաբանությունները հերքվել են ձեռք բերված ապացույցներով:

Ամբաստանյալ Ն.Փաշինյանի մեղքը հիմնավորող ապացույցներ են նաև ՀՀ մաքսային վարչությունից ստացված գրությունն այն մասին, որ վարչության արխիվներում կամ հաշվապահական փաստաթղթերում Ա.Պլուզյանի վերաբերյալ որևէ արձանագրություն կամ փաստաթուղթ չկա: Ա.Պլուզյանի արտասահմանյան անձնագրի մեջ՝ էջ 8-ում, կա նշում, որ նա Հայաստանից մեկնման իրա-

վունք է ունեցել մինչև 1993թ. դեկտեմբերի 31-ը, սակայն այդ թվականին ՀՀ մաքսային սահմանը անցնելու վերաբերյալ որևէ նշում չկա:

Այսպիսով՝ Վերաքննիչ դատարանը Ն.Փաշինյանին մեղավոր ճանաչեց և վերջնական պատիժ նշանակեց՝ ազատազրկում մեկ տարի ժամկետով: Բայց կիրառելով Քր. օր.-ի համապատասխան հոդվածը, դատարանը որոշեց դատավճռի կատարումը հետաձգել մեկ տարի ժամանակով:

*- Ծիծաղելի կլիներ կարծել, թե նախկին ամբաստանյալն ու իր գործընկերները չգիտեին այդ դատավճռի մասին: Այդ դեպքում, կրկին վերաթարմացնելով զրպարտչական այս պատմությունը, ի՞նչ նպատակ են հետապնդում:*

- Այո, տրամաբանական հարց է ծագում, ի՞նչ նպատակ են հետապնդում Լևոնի և Վանոյի կամակատար «Չորրորդ իշխանությունը», «Հայքը» և «Հայկական ժամանակը»՝ կրկին անդրադառնալով Ա.Գեղամյանի ընտանիքը զրպարտելուն: Քաջատեղյակ լինելով, որ նույն զրպարտության, վիրավորանք հասցնելու համար Ն.Փաշինյանն արդեն իսկ 2000թ. դատապարտվել էր մեկ տարի պայմանական ազատազրկման:

Չեմ կարծում, թե նպատակ էին դրել ցույց տալ, որ Ն.Փաշինյանի բնակության վայրի ոստիկանության բաժինը թերացել է կատարել Վերաքննիչ դատարանի վճիռը՝ անհրաժեշտ հսկողություն չսահմանելով նրա վարքի վրա: Ո՛չ: Հիշական լրատվամիջոցների հաշվարկն այլ է. նախ, հերյուրանքներ տարածելով Ա.Գեղամյանի մասին՝ խնդիր ունեն շեղել մարդկանց ուշադրությունը իրենց հովանավորներ՝ Լ.Տեր-Պետրոսյան-Վանո Սիրադեղյան զույգի իշխանավարության տարիներին կատարված սահմռկեցուցիչ սպանություններից, ավազակություններից:

Երկրորդ. նախագահական առաջիկա ընտրությունների շեմին ցեխ շպրտելով Արտաշես Գեղամյան քաղաքական, պետական հեղինակավոր գործչի վրա, փորձում են սահմանափակել ՀՀ նախագահ դառնալու նրա հնարավորությունները: Դրանով իսկ գիտակցա-

բար և միտումնավոր անգնահատելի ծառայություն են մատուցում գործող իշխանություններին:

Երրորդ. հույս են փայփայում, որ Ա.Գեղամյանը դիմելու է դատարան՝ նախկինում դատարանով որպես հանցագործություն որակված և այժմ էլ շարունակվող զրպարտության համար հիշատակված թերթերի խմբագիրներին քրեական պատասխանատվության ենթարկելու հայցով: Պարզ է, որ վերջիններս իսկույն կկերպարանափոխվեն, վրաները գառան մորթի կքաշեն, իսկ Լևոն Տեր-Պետրոսյանն էլ, խասիաթին համաձայն, կրկին կդիմի ԵԽԽՎ, ԵԱՀԿ, երկրից դուրս հազար ու մի տեղ, աղաղակելով, որ Հայաստանի Հանրապետությունում ճնշվում է խոսքի ազատությունը:

Դեկտեմբերի 8-ի հանրահավաքից հետո ակնհայտ դարձավ, որ հիշական տղերքը գնալով մարում են: Եվ սա է պատճառը, որ խիստ անհրաժեշտություն առաջացավ գզրոցներից հանել սադրանքի փորձված միջոցները: Մասնավորապես այնպիսին, ինչպիսին էր «անհայտ» մարդկանց կողմից շուտափույթ կազմակերպված «Չորրորդ իշխանություն» թերթի խմբագրատան մուտքի պայթյունը: Համոզված եմ՝ առաջիկայում էլ կլինեն սադրիչ նոր գործողություններ:

*ԱՄԿ փոխնախագահ*
*Ալեքսան Կարապետյանի հետ*
*հարցազրույցը վարեց*
*Կիմա Եղիազարյանը*

---

«Հայոց Աշխարհ», 18. XII. 2007:

# ԼԵՎՈՆ, ԱՐԻՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑԻՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՎ ՀԱՅՏԱՐԱՐԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆԴ ՄԱՍԻՆ

Ես ամենևին խնդիր չեմ դրել «Ազգային Միաբանություն կուսակցության», առավել ևս նրա ղեկավար Արտաշես Գեղամյանի հասցեին Լևոն Տեր-Պետրոսյան - Վանո Սիրադեղյանական թերթերի ստահոդ զրպարտություններին պատասխանել: Սակայն մեր ժողովրդին որոշ հարցերի մասին իրազեկելը գտնում եմ անհրաժեշտ: Ուշագրավն այն է, որ երբ կարդում ես ՀՀՇ-ական զրպարտությունները, ակամայից գալիս ես այն համոզման, որ այդ բոլոր հրապարակումները դրանց հեղինակների համար ունեն ինքնակենսագրական բնույթ: Ասես թե վերջիններս միտումնավոր Լևոն Տեր-Պետրոսյան - Վանո Սիրադեղյան զույգին ներհատուկ գործելաոճը փորձում են վերագրել Գեղամյանին: Այս դիտարկումը մերկապարանոց չթվալու համար, թարմացնենք լևոնականների հիշողությունը:

Ս/թ մայիսի 12-ի խորհրդարանական ընտրություններից հետո, իրենց իսկ բառապաշարով, եթիմության կարգավիճակը համոզիչ կերպով հաստատվեց վերջին 10 տարիների ընթացքում նույն տիրույթում հայտնված ոչ միայն ՀՀՇ-ի վրա, այլև դրոշմվեց նրա ծնունդը հանդիսացող տարաբնույթ դաշինքների ու շարժումների վրա: Տղերքը, ի ուրախություն գործող իշխանությունների, երկրում տիրող տրամադրությունները, ստեղծված իրավիճակը հաշվի չառնելով, դիմեցին, ի սկզբանե ձախողման դատապարտված մարտավարության: Մարտավարություն, որը վերջնականապես հուսահատեցրեց ու հիասթափեցրեց ժողովրդին: Մայիսի 12-ից հետո Երևանի քուչեքը ընկած նրանք գլխակորույս փորձում էին հայցել ժողովրդի կարեկցանքն ու խղճահարությունը: Մեկ գումարած մեկ, գումարած մեկ հավաքվեցին (1+1+1+ … ), օդը տատանեցին, հետո քոռ ու փոշման իրենց մի քանի մեկերով վերադարձան տները, մեկ անգամ ևս հուսահատեցնելով, հիասթափեցնելով ընդդիմությանը համակրող մարդկանց: Արդյունքի չհասան, որովհետև տարրական թվաբանության իմացությունը պետք է որ նրանց հուշեր, որ անգամ իսկ հա-

զարավոր մեկերի պայմաններում, եթե սկզբից մեկերի գլխին զրո է կանգնած, ապա զրո մեկ տասներորդականից (0.1) ավել թիվ չես հավաքում: Բայց դե նրանք ի՞նչ իմանան, թե թվաբանությունն ինչ բան է: Հենց այդ օրերին էր, որ նրանք «Ազգային Միաբանություն կուսակցությանը» աղերսում էին միանալ նման անմիտ ու անհեռանկար պայքարի միջոցին: Այո, այդ օրերին Նիկոլ Փաշինյանը խնդրում ու աղերսում էր Ա.Գեղամյանին, որ միանա այդ մեկերին: Չթաքցնեմ, ընդդիմադիր հիշատակած ուժի խորը դեպրեսիայում հայտնվելու փաստը քննարկվել էր «Ազգային Միաբանության կուսակցության» նախագահության նիստում: Եվ Արտաշես Գեղամյանը հորդորում էր մեզ, որ միգուցե ձևը գտնենք, օգնենք տղերքին, այլապես նրանք խայտառակ են լինում, հետն էլ խայտառակ են անում ողջ ընդդիմությանը:

Այդ օրերին մեզ համար ակնհայտ էր, որ Նիկոլը և յուր ընկերներն այն աստիճան են մոլորված, հետն էլ վախեցած, որ հարկադրված են մեր կուսակցության դուռը գալ: Ցուցաբերելով մեծահոգություն, ընդունեցինք: Գեղամյանը, ինչպես միշտ, դրսևորեց փայլուն հեռատեսություն, առաջարկելով, որ մենք տեղակալներով նույնպես մասնակցենք այդ հանդիպմանը: Նման առաջարկի պատճառը, թերևս, այն էր, որ գործ ունեինք մի մարդու հետ, ով դեռ 1999-2000 թթ. մարդկանց զրպարտելու, վիրավորելու համար դատապարտվել էր մեկ տարի պայմանական ազատազրկման: Այս օրերին, երբ հետադարձ հայացք ենք գցում անցյալին, Ա.Գեղամյանը, ասես թե, կանխատեսել էր, թե զարգացումներն ինչ հունով են ընթանալու: Մեղք չվերցնենք մեզ վրա ասել, որ «Հայկական ժամանակում» տպագրված հոդվածում Ա.Գեղամյանի հասցեին հնչեցրած զազրախոսությունում ընդհանրապես ոչ մի ճիշտ բան չկար, այդպես չէ: Մի բանում պարոն Փաշինյանը ճիշտ է, որ Գ. Թադևոսյանի ծնունդը շնորհավորելիս, իր իսկ գրավոր խոստովանությամբ, տափակություն դուրս տվեց: Դա էլ մեզ հասկանալի էր, քանի որ նա գործում էր ինքնուրույն և դեռ չէր հասցրել Լևոնի ու Վանոյի հետ խորհրդակցել:

Երբ հասկացան, որ, սեփական իսկ արտահայտությամբ, եթիմի վիճակում հայտնված նախկին իշխանավորներին պապայություն անելու առաքելությունից ԱՄԿ-ն հրաժարվում է, տղերքը գնացին ու ընկան ժամանակին իրենց լքած իրական պապայի՝ Լևոն Տեր-Պետրոսյանի գիրկը: Մարդ, որը տասը տարի շարունակ լինելով խորը դեպրեսիայի մեջ, այդպես էլ վախենում էր դուրս գալ Սև շենքից: Էլ չխոսենք ՀՀՇ-ի մասին, որ 1999թ. սկսած անպտուղ փորձեր էր անում ամեն գնով սողոսկել Ազգային ժողով: Ինչ վերաբերում է ԱԺ ընտրություններից հետո «Ազգային Միաբանության կուսակցության» և, մասնավորապես, Արտաշես Գեղամյանի ու նրա տեղակալների դրսևորած վարքագծին, ապա դրանով կարելի է միայն ու միայն հպարտանալ: Թող թեկուզ հիշեն այդ օրերին լույս տեսած Արտաշես Գեղամյանի՝ երկրում ստեղծված վիճակի համակողմանի վերլուծություն պարունակող ծանրակշիռ հոդվածը «Առավոտ» օրաթերթում:

Գեղամյանի հորդորն էր մեզ ավելի ակտիվ զբաղվել սպորտով, վերականգնել, չթաքցնենք, ընտրապայքարի ժամանակ ծախսած էներգիան: Եվ իր իսկ պահվածքով՝ լավատեսության գեղամյանական համոզմունքով ոգևորում էր բոլորիս: Ինչ վերաբերում է կուսակցության ապարատին, խոշոր տարածքային կազմակերպություններին, հետընտրական օրերին նրանք աշխատում էին նույն ծանրաբեռնվածությամբ, ինչպես միշտ: Երբ ծանոթանում ես Նիկոլ Փաշինյանի մտքի առանձին գոհարների հետ, ապա տողատակում մեր հասցեին թաքնված գովազդ ես տեսնում: Այսպես, ինչ վերաբերում է քարոզարշավին միկրոավտոբուսներով մարզային այցելություններին մարդ տանելուն, ապա, այո, դա եղել է այդպես: Մենք խնդիր ունեինք մարզերում մեր համակիրներին ցույց տալ կուսակցության հզորությունը, ուժը, ուստի հետներս տանում էինք քարոզիչների, որոնք մարզկենտրոններից բաժանվում էին խմբերի և մեկնում գյուղեր՝ Ա.Գեղամյանի հեղինակած «Հակաճգնաժամային ծրագրին» ժողովրդական լայն զանգվածներին ծանոթացնելու նպատակով: Դա, անշուշտ, ոգևորում էր մեր համակիրներին՝ ավելի համարձակ

գործելու համար: էի, կուսակցություններ կային, որ երգիչ-երգչուհիներ էին տանում մարզեր, քեֆեր էին կազմակերպում, մենք էլ մեզ ներհատուկ ոճի քարոզչություն էինք անում: Եվ հենց այդ ավտոբուսներն օգնում էին, որպեսզի գյուղերից էլ ցանկացողները գային մարզկենտրոն՝ Գեղամյանի հետ հանդիպումներին: Իսկ մարզային հանդիպումները, հատուկենտ բացառությամբ, հավաքում էին հազարավոր մարդկանց, ինչը պարբերաբար նկարահանվում և ցուցադրվում էր Հանրային ու այլ հեռուստաալիքներով: Ավա՜ղ, այստեղ էլ խոստովանենք, որ մենք թույլ տվեցինք տակտիկական սխալ. մեր հանդիպումների մարդաշատությունը վախեցրեց իշխանություններին, որոնք էլ ամեն ինչ արեցին դրանք խոչընդոտելու համար և ամեն գնով աշխատեցին մեզ դուրս թողնել Ազգային ժողովից: Մեզ զարմանք է պատճառում այն, որ ՀՀՇ-ական մամուլը համեստորեն լռում է Լևոն Տեր- Պետրոսյանի մարզային հանդիպումներից, երբ 30-40 մեքենաներով Երևանից մեկնում էին մարզեր՝ տեղում 15-20 մարդու հետ հանդիպելու, այն էլ կերուխումի սեղանի շուրջ: Ահա սրա համար է, որ ասում եմ՝ սրանց մամուլում գրածները ոչ թե Գեղամյանի մասին են, այլ ընդգծված ինքնակենսագրական բնույթ ունեն:

Մեզ զարմացրին ու զայրացրին վերջին շրջանում ՀՀՇ-ական մամուլում Կարեն Սերոբի Դեմիրճյանի անվան անպարկեշտ շահարկումները: «Ազգային Միաբանություն կուսակցությունը» և հատկապես նրա ղեկավար կազմը միշտ էլ խորը հարգանքով է հիշում Կարեն Սերոբի Դեմիրճյանին, մարդու, որ Հայաստանի Հանրապետությունը ղեկավարելու 14 տարիների ընթացքում ծաղկեցրեց երկիրը՝ հենվելով կարող, գիտակ, արհեստավարժ ուժերի վրա: Այնպիսի բանիմաց կադրեր դաստիարակեց, որոնք անգամ իսկ վայրիվերումներով լեցուն անցած 20 տարիների ընթացքում ոչ միայն չկոտրվեցին, այլև նրանցից շատերը ժողովրդի կողմից վստահության քվե ստացան, ընտրվեցին Ազգային ժողովի 1-ին, 2-րդ և 3-րդ գումարման պատգամավորներ: Դա էլ ճիշտ այն տարիներին, երբ հանրապետությունում դեռ մոլեգնում էր ՀՀՇ-ական բեսպրեդելը և դրան հաջոր-

դած այն ժամանակաշրջանում, երբ գործող իշխանությունների կողմից լայնորեն կիրառվում էին ընդդիմության նկատմամբ բիրտ ճնշումներ: Մեզ մտահոգում ու բարկացնում է այն, որ Տեր - Պետրոսյանական թիմի դեպրեսիան այն աստիճան է պատել իրենց, որ վերջիններս Ազատության հրապարակում հնչեցրած երկարաշունչ ելույթներում հանդգնում են մի ամբողջ ազգի կողմից տասնամյակների ընթացքում կատարված ստեղծագործ աշխատանքը սևացնել: Աշխատանք, որը գլխավորել են Կարեն Դեմիրճյանը և Սուրեն Հարությունյանը՝ ի փառս Հայրենիքի: Մյուս կողմից փորձում է ստվեր գցել նաև Կարեն Սերոբիչի կադրային քաղաքականության վրա, ըստ էության, մեղադրելով նրան, որ նա մարդկանց պաշտոններ էր վստահում ոչ թե նրանց քաղաքական, կազմակերպական, գիտական և մասնագիտական կարողություններից, այլ անձնական նվիրվածությունից ելնելով: Սա նման է ՀՀՇ-ին և դա ոչ այլ ինչ է, քան ապերախտության ցայտուն դրսևորում իրեն սատարող կրտսեր Դեմիրճյանի նկատմամբ: Ի դեպ, ասեմ, որ խորհրդային տարիներին Ա.Գեղամյանի զբաղեցրած ամենաբարձր պաշտոններից էր Երևանի քաղաքապետի պաշտոնը, որտեղ աշխատելու համար նրան երաշխավորել էր Հայաստանի Կոմկուսի կենտկոմի բյուրոն, երբ ՀԿԿ-ի Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնում էր Սուրեն Գուրգենի Հարությունյանը: Դա էլ իմիջիայլոց:

Ոչ թե տղերքի դեպրեսիայի աստիճանն ենք ուզում ընդգծել, այլ ճշտում անելու նպատակով ցանկանում ենք հիշեցնել, որ Գագիկ Թադևոսյանի ծննդյան օրը հունիսի 29-ին է, որը և մենք նշել ենք «Ազգային Միաբանություն կուսակցության» կենտրոնական գրասենյակում, այլ ոչ թե սեպտեմբեր ամսին՝ աշնանը, ինչի տպավորություն ընթերցողի մոտ կարող էր ստեղծվել՝ կարդալով Նիկոլի դեկտեմբերի 15-ին «ՀԺ»- ում տպագրած անհեթեթությունները: Այս ճշտումը պատահական չէ, որ անում ենք, որովհետև ամառային այդ օրերին Լևոն Տեր-Պետրոսյանի մասին «Ազգային Միաբանություն կուսակցությունում» դեռ ոչ մեկի հետ խոսակցություններ չէր տարվել:

Ինչ վերաբերում է «Առավոտ» օրաթերթի 2007թ. հունիսի 1-ի համարում տպագրված լուրին, որը Գեղամյանի վրա ստվեր գցելու նպատակով հիշատակված է վերը նշված «ՀԺ» թերթում, ապա դա ևս համոզիչ վկայություն է Գեղամյանի տված ճշմարտացի գնահատականների մասին: Մենք էլ մեջբերենք այդ պարբերությունը ամբողջությամբ. «1997թվականի «Պատերա՞զմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը» հոդվածում առկա հարցադրումները, ավա~ղ, այսօր ևս արդիական են մեր իրականության համար, և վերստին մենք ազգովին պետք է կարողանանք խորհել, որ հանկարծ չսխալվենք: Սխալվելու իրավունք Հայաստանի Հանրապետությունն այլևս չունի, դա կլինի պետականության վերջին սխալը»: Կրկնեմ, մենք հիմա էլ ամբողջությամբ հաստատում ենք Ա.Գեղամյանի կողմից մեջբերված Տեր-Պետրոսյանի հայտնի հոդվածում արծարծված այդ մտքի արդիական լինելը: Հենց դա ի նկատի ունենալով էլ՝ ամեն ինչ անում ենք, որ հոդվածի հեղինակ Լևոն Տեր - Պետրոսյանը հրապարակավ հայտնած իր պարտվողական մոտեցումներով, աստված մի արասցե, հանկարծ չգա իշխանության: Այո, ժողովուրդը պետք է վերստին հիշի հոդվածագրի հուսահատեցնող, ազգը պառակտող գնահատականները և իր վճռական ոչն ասի մեկ անգամ ժողովրդին ցրտի, մթի ու սովի մատնած Լևոն Տեր - Պետրոսյանին ու իր թիմակիցներին:

Հիվանդ երևակայության արդյունք է նաև այն, թե հունիսի 29-ին «Ազգային Միաբանություն կուսակցության» գրասենյակում հանդիպման ժամանակ ընդհանրապես հիշատակվել է Լևոն Տեր - Պետրոսյանի անունը որպես ՀՀ նախագահի հնարավոր թեկնածու: Պարզապես խոսքը գնացել է միասնական ընդդիմադիր ճակատ ստեղծելու անհրաժեշտության, այն ձևավորելու սկզբունքների մասին, գաղափար, որն արժանացել է մեր հավանությանը: Ասեմ ավելին, դրա անհրաժեշտությունը գիտակցելով, «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահությունը սեպտեմբերի 7- ին հանդես եկավ հայտնի հայտարարությամբ ու մինչև վերջերս ամենաակտիվ մասնակցությունը բերեց Պարույր Հայրիկյանի կողմից նախաձեռնված ընդդիմադիր ուժերի հանդիպումներին, որոնց մասնակցել են նաև

ՀՀՇ-ի ներկայացուցիչներ Արարատ Զուրաբյանը և Ալեքսանդր Արզումանյանը:

Ինչ վերաբերում է Արտաշես Գեղամյանի համաձայնությանը՝ հանդիպել Լևոն Տեր-Պետրոսյանին, ապա, ինչպես նշել են ՀՀՇ- ի տղերքը, այո, Լևոնի իսկ խնդրանքով էին նրանք դիմել Գեղամյանին: Մեզ հետ խորհրդակցելուց հետո միայն մեկ շաբաթ անց, այնուամենայնիվ, նրանց հանդիպումը կայացավ (Ա.Գեղամյանի զբաղվածության պատճառով): Լևոն Տեր-Պետրոսյանից Ա.Գեղամյանի՝ թերթում հիշատակված, իբր, ակնկալիքների մասով էլ ասեմ. տղերքի դեպրեսիան ինչ աստիճանի խորը պետք է լիներ, որ նման անհեթեթ բաներ ենթադրեին: Դա էլ այն պարագայում, երբ Արտաշես Գեղամյանն ու Ալեքսան Կարապետյանը եղել են 1997թ. հոկտեմբերի 17-ի համայն հայությանն ուղղված կոչի նախաձեռնողը: Կոչ, որը դեկտեմբերի 15-ին վերատպագրվեց մամուլում («Առավոտ» օրաթերթ, «Գոլոս Արմենիի», «168 ժամ»): Այդ կոչը վերատպագրելիս մենք առաջնորդվում էինք այն գիտակցությամբ, որ փաստաթուղթն այսօր էլ չի կորցրել իր արդիականությունը: Արդարության առաջ չմեղանչելու համար նշեմ, որ հանդիպումից հետո Գեղամյանը մեզ կարծիք հայտնեց, որ Լևոն Տեր-Պետրոսյանը, այնուամենայնիվ, ողջամտություն կունենա և ՀՀ նախագահի առաջիկա ընտրություններում չի առաջադրի իր թեկնածությունը: Այնպես որ, եթե Գեղամյան - Տեր-Պետրոսյան հանդիպման արդյունքում ակնկալիք եք փնտրում, ապա ես դրա մասին վերն ասացի:

Ավարտելով խոսքս՝ խորհուրդ տամ Լևոն Տեր-Պետրոսյանին. արիություն ունեցիր և հրապարակավ հայտարարիր սեփական քաղաքական վերջնական սնանկությանդ մասին: Թարգիր թաքնվել մամուլի հրապարակումների հետևում: Շուտ ես մոռացել, որ դեռ 1999-2000թթ. քո և Վանոյի թելադրանքով գրված ու տպագրված զրպարտչական հոդվածի հետևանքով՝ պատճառը և հիմնական մեղավորը դարձաք 25-ամյա երիտասարդին զրպարտության ու վիրավորանք հասցնելու մեղադրանքով մեկ տարի պայմանական ազատազրկման դատապարտելու համար:

*Հետգրության փոխարեն:* Պարոններ Տեր-Պետրոսյան և Վանո Սիրադեղյան՝ հուշեք ձեր գրչակներին, որ զերծ մնան Արտաշես Գեղամյանին վերագրելու այն, ինչ ներհատուկ է ձեզ. վախի զգացումով առաջնորդվելով՝ գործել թիկունքից: Արտաշես Գեղամյանին կարելի է, թերևս, կշտամբել մարդկային փոխհարաբերությունների մեջ չափից ավելի ազնիվ լինելու համար, ձեռք բերված պայմանավորվածություններին, անգամ իսկ սեփական անձին վնաս հասցնելու գնով, հավատարիմ մնալու համար, մարդկանց վստահելու և հավատալու համար: Երբևէ չհամարձակվեք Գեղամյանին վերագրել վախի զգացում. ձեր հիշողությունը թարմացնելու նպատակով կարող ենք ուղարկել Երևան քաղաքի երկաթուղային կայարանում ու Էրեբունի-Սովետաշեն մայրուղու վրա 1990 թ. մայիսի 27- ին ձեր սադրանքի արդյունքում տեղի ունեցած արյունահեղությունը կանխող Ա. Գեղամյանի բացառիկ համարձակ քայլերը պատկերող փաստագրական կադրերը:

*Կորյուն Առաքելյան*
*«Ազգային Միաբանություն կուսակցության»*
*փոխնախագահ*

---

«Փակագիծ», 19. XII. 2007:

# ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Երիցս հեռատես ու խորաթափանց էր «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահությունը, երբ սեպտեմբերի 7-ին կոչով դիմեց քաղաքական դաշտի ազդեցիկ ուժերին՝ թե՛ դիմությանը, թե՛ ընդդիմությանը, առաջարկելով երկրի առաջ ծառացած բարդ և վտանգավոր մարտահրավերները դիմակայելու համար կլոր սեղանի շուրջ կազմակերպել համատեղ քննարկումներ: Նման քաղաքականություն որդեգրելիս մենք նպատակ էինք հետապնդում նախագահական ընտրություններին ընդառաջ հանրապետությունում ձևավորել բարոյահոգեբանական այնպիսի մթնոլորտ, որը կբերեր սուր մրցակցության ծավալմանը ՀՀ նախագահի թեկնածուների կողմից առաջարկված ծրագրերի տիրույթում: Եվ պատահական չէր, որ մեր կուսակցությունն այս ուղղությամբ իրեն հասանելիք ճանապարհը պատվով անցավ:

Պարույր Հայրիկյանի նախաձեռնությամբ և մեր անմիջական մասնակցությամբ անցկացվեցին հանդիպումներ քաղաքական ազդեցիկ գրեթե բոլոր ուժերի լիդերների հետ: Հավատարիմ մնալով կուսակցության որդեգրած սկզբունքներին՝ Արտաշես Գեղամյանը հարգելով իր հետևողական դիրքորոշումը ՀՀՇ-ին և Լևոն Տեր-Պետրոսյանին քաղաքականապես չընդունելու առումով, այնուհանդերձ, համաձայնվեց նրանց առաջարկին՝ հանդիպել Լևոնի հետ: Քաղաքական խորհրդատվություններ տեղի ունեցան նաև ընդդիմադիր դաշտի մի շարք այլ կուսակցությունների ղեկավարների, ինչպեսև հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի և Հայաստանի Հանրապետական կուսակցության նախագահ, վարչապետ Սերժ Սարգսյանի հետ: Թվում էր, թե այս ամենը նպաստելու է երկրում քաղաքակիրթ ընտրապայքար ծավալելու գործին, սակայն այդ տպավորությունը, ավա՜ղ, խաբուսիկ էր: Ինչպես ցույց տվեցին հետագա զարգացումները, տեր-պետրոսյանական թիմը պարզապես չէր ան-

ցել սև քարոզչության միայն այն պատճառով, որովհետև դեռ սին պատրանքներ ուներ դառնալու Հայաստանի ընդդիմադիր դաշտի ՀՀ նախագահի միասնական թեկնածու: Հիրավի, պետք էր բուռն երևակայություն ունենալ ենթադրելու համար, որ քաղաքական բազմափորձ և, թերևս, ամենասկզբունքային դիրքորոշումները երբեք չդրժած գործիչ Արտաշես Գեղամյանը կարող է հանկարծ հրաժարվել դեռևս 1997թ. հոկտեմբերի 17-ին տեր-պետրոսյանական վարչախմբին սեփական նախաձեռնությամբ և անվանի մտավորականների ստորագրությամբ տված գնահատականներից:

Երբ Լևոնի թիմակիցների երազանքներն այս հարցում հօդս ցնդեցին, հենց այդ պահից էլ սկսվեցին մոլագար հարձակումները «Ազգային Միաբանություն կուսակցության» և հատկապես Արտաշես Գեղամյանի վրա: ՀՀՇ-ականների նենգությունն այս հարցում այն աստիճանի հասավ, որ բացահայտ սուտը, հերյուրանքը և զրպարտությունը կրկին գործի դրվեցին Գեղամյանի դեմ մղվող կատաղի պայքարի նրանց զինանոցում: Հիշում եք, դեռ 1999-2000 թթ. դրանց հեղինակին, Վանո Սիրադեղյանի կամակատարին՝ «Հայկական ժամանակ» թերթի խմբագրին, ՀՀ Վերաքննիչ դատարանը դատապարտել էր մեկ տարի պայմանական ազատազրկման: Ինքնին հասկանալի է, որ զրպարտանքի թիրախ դարձնելով Ա.Գեղամյանին, լևոնականները գիտակցաբար ջուր են լցնում իշխանությունների ջրաղացին, հետն էլ շեղում են «Ազգային Միաբանություն կուսակցության» սուր քննադատության սլաքը Ռոբերտ Քոչարյան-Սերժ Սարգսյան վարչախմբից: Սա ամենևին էլ պատահականություն չէ, այլ տեղավորվում է օրըստօրե ավելի համառորեն շրջող այն լուրերի համատեքստում, ըստ որոնց արդեն իսկ տեր-պետրոսյանական թիմի որոշակի երևելիներ պարբերաբար գաղտնի հանդիպումների մեջ են նկատվել իշխանությունների հետ: Ու ոչ միայն հանդիպումներ են ունենում, այլ նաև ձեռք են բերում որոշակի պայմանավորվածություններ նրանց հետ: Մենք խիստ բնական էինք համարում և մեզ համար անակնկալ չէին նման զարգացումները, որովհետև պարզից էլ պարզ է, որ թե՛ գործող, թե՛ նախկին իշխանությունների համար ամենաան-

խոցելի, կնշանակի և ամենաանցանկալի քաղաքական ուժը, անկասկած, «Ազգային Միաբանություն կուսակցությունն» է և հատկապես նրա առաջնորդ Արտաշես Գեղամյանը: Քաղաքական գործիչ, որին արդեն իսկ 17 տարի շարունակ փորձում են արատավորել հին ու գործող իշխանությունները, սակայն նրանց կողմից իրականացվող ցանկացած ձեռնարկ ունենում է բումերանգի էֆեկտ՝ հարվածելով հեղինակներին: Հետաքրքրական է նաև այն, որ Տեր-Պետրոսյանի հանրահավաքային ելույթներում ողջամտություն պարունակող քննադատական հատվածները փոքր-ինչ ուշադիր ուսումնասիրելու դեպքում ակնհայտ է դառնում, որ դրանք պատճենահանված են Արտաշես Գեղամյանի հեղինակած «Հոդվածներ, հարցազրույցներ, ելույթներ» ստվարածավալ, 1022 էջանոց, 2006թ. հրապարակած գրքից: Ինչու չէ, նաև Ազգային ժողովի ամբիոնից հնչեցված մեր կուսակցության պատգամավորներ Ալեքսան Կարապետյանի, Կորյուն Առաքելյանի, Գագիկ Կոստանդյանի և Արտաշես Գեղամյանի ելույթներից:

Ստեղծված իրավիճակում աչքի է զարնում մի ուշագրավ փաստ ևս. տեր-պետրոսյանական մամուլի զրպարտչական հրապարակումներին, որոնք վերջին ամիսներին գրվել են ՀՀ նախագահի թեկնածուների հասցեին, թերևս, սկզբունքային դիրքերից համարժեք հակահարված են ստացել միայն «Ազգային Միաբանություն կուսակցության» կողմից: Այս մասին խոսելիս ես ամենևին հակված չեմ, որ մեր ընդդիմադիր գործընկերներն առաջնորդվեն փողոցային կռիվներին ներհատուկ կարգախոսով՝ դու ինձ խփե՞ս, ես քո … Խնդիրն ավելի խորն է. երբ անարձագանք են մնում անբարոյականության, կեղծարարության, երեսպաշտության, ընտանեպղծության, ծախվածության անվերջանալի մեղադրանքները, մենք բարոյական իրավունք չունենք դրանց հեղինակներին չմերկացնել և փաստարկված չդատապարտել: Այլապես, վաղ թե ուշ, կհայտնվենք գործող իշխանությունների կարգավիճակում, որոնք ժամանակին այդպես էլ թե՛ քաղաքական և թե՛ իրավական գնահատական չտվեցին ՀՀՇ-ական հանցավոր վարչակարգին: Դրա բացակայությունն էր, որ հան-

գեցրեց Լևոն Տեր-Պետրոսյանին հրապարակային քաղաքականություն վերադառնալուն, և ինչի դառը պտուղները ներկա փուլում ճաշակում ենք ազգովի: Դրա հետ մեկտեղ ակամայից մտածում ես. մի կողմից ինչքան չարություն, մաղձ է ամբարված այդ մարդկանց մեջ, որ թույլ են տալիս իրենց նախկին կուսակցին, անգամ իսկ Շենգավիթի ՀՀՇ տարածքային կազմակերպության երբեմնի փոխնախագահին՝ Արթուր Բաղդասարյանին, դարձնել սև քարոզչության թիրախ: Մարդու, որը Լևոնի մասին մշտապես դրական արտահայտվող, քաղաքական դիմանկար-կոթողի հրատարակողն է եղել, սակայն այսօր դարձել է մեղավոր, որովհետև նախագահական առաջիկա ընտրություններում հանդես է գալիս որպես Լևոն Տեր-Պետրոսյանի մրցակից: Կամ էլ՝ բարոյականության ինչպիսի չափանիշներով են առաջնորդվում նրանք, երբ լրատվամիջոցների հարցազրույցներին միտումնավոր հնչեցնում են Արտաշես Գեղամյանին վարկաբեկող երանգներ ունեցող հարց-մեկնաբանություններ: Իսկ նման սարքովի հարցերին պատասխանելիս էլ, մեծահոգություն, պատրանք են ստեղծում, թե, իբր, հրաժարվում են անվանական քննադատությունից: Մինչդեռ իրենց ցանկացածը մեկն է՝ հնչեցնել Գեղամյանին նշավակող հարցեր:

Եվ եթե մենք ուշադիր դիտարկենք, թե վերջին հաշվով ովքեր են ցեխ շպրտում «Ազգային Միաբանություն կուսակցության», իմ և իմ գործընկերների, հատկապես Արտաշես Գեղամյանի վրա, ապա շատ հեշտ կգանք հետևյալ եզրակացության: Դրանք այն մարդիկ են, ովքեր վերջին տարիների ընթացքում նվազագույնը երկու անգամ աչքի են ընկել ճամբարափոխության մեջ: Ժամանակին նրանք Լևոն Տեր-Պետրոսյանի ճամբարից փախել են Ռոբերտ Քոչարյան-Վազգեն Սարգսյան-Սերժ Սարգսյան ճամբարը, զբաղեցրել բարձր պաշտոններ: Հետագայում սույն գործիչները ձախողվել են՝ պրոֆեսիոնալ անպիտանելիության հետևանքով: Մեր քննադատների հաջորդ կատեգորիան, դա իշխանությունների կողմից չգնահատված սազանդարներն են, ովքեր սազները ձեռքներին ձոներ են նվիրել Քոչարյան-Սարգսյան տանդեմին՝ ակնկալելով, որ քաղաքացիական

կամ ուժային կառույցներում կվերականգնվեն նախկինում՝ Լևոնի օրոք, ունեցած բարձր պաշտոններում կամ էլ կստանձնեն նոր պաշտոններ՝ դրսևորած գուսանական հմտությունների համար: Հուսախաբ լինելով, այն է՝ չստանալով երազած պաշտոնները, կրկին ճամբարափոխ են եղել, վերադարձել են ի շրջանս յուր, այն է՝ Լևոնի գիրկը: Մի խոսքով՝ նրանք հիշեցնում են օպերային հայտնի հերոսի մեներգի հետևյալ բառերը. Ֆիգարոն այստեղ է, Ֆիգարոն այնտեղ է: Մեծի հաշվով՝ մեզ քննադատողները դատարկ մարդիկ են, և, ինչպես հայտնի առակն է ասում, շները կշարունակեն հաչալ, քամին կշարունակի փչել, իսկ քարավանը կշարունակի հանդարտ ընթանալ:

Վերստին ուզում եմ հաստատած լինել, որ «Ազգային Միաբանություն կուսակցությունը», հիմնավորելով 2008 թ. ՀՀ նախագահի ընտրություններին սեփական թեկնածուով հանդես գալու առաջարկը, հետապնդել է մեկ խնդիր. մեր ժողովրդին ցույց տալ, որ երկրի զարգացման եզակի նախապայման է ազգի միաբանության ապահովումը: Եվ դա ի զորու է երաշխավորել ու կյանքի կոչել միայն և միայն Արտաշես Գեղամյանը, որն առաջնորդում է քաղաքական այն ուժին, որը սկզբունքորեն մերժում է թե՛ նախորդ և թե՛ գործող իշխանություններին: Մարդ, որը, ժողովրդական լեզվով ասած, թասիբ, պատվախնդրություն է ունեցել պաշտպանելու մեր երկրի շահերը եվրոպական և միջազգային ամենահեղինակավոր կազմակերպությունների ամբիոններից: Ով թասիբ է ունեցել, կյանքը մեծապես վտանգելով, 1990 թ. մայիսի 27-ին կանխելու ՀՀՇ-ի սադրանքում սկիզբ առած մեծ արյունահեղությունը (Երևանի երկաթուղային կայարանում և Էրեբունի-Սովետաշեն մայրուղու վրա): Համարձակության բացառիկ դրսևորում, որը, ի հեճուկս այդ սադրանքը կազմակերպողների, վավերացված է տեսահոլովակի վրա, ուր ցայտուն երևում է, թե ով ով է: Ավա՜ղ, անգամ իսկ այս դեպքում ինչ-որ անհայտ գնդապետ հովիկ ազոյաններ, միգուցե վախենալով սեփական ոչ նախանձելի վարքագիծը ի հայտ բերելու վտանգից, փորձում են կասկածի տակ դնել քանիցս Հանրային հեռուստատեսությամբ ցու-

ցադրված և հարյուր հազարավոր մարդկանց սեփականությունը դարձած փաստավավերագրական կադրերը:

… Մոտենում են ամանօրյա տոները և ես շատ կուզենայի, որ բոլորս, այո, բոլորս երկրի համար այս պատասխանատու ու շրջադարձային փուլում թողնեինք 2007 թ. ոչ մեր նախաձեռնությամբ ծավալված ՀՀ նախագահի թեկնածուների թիմակիցների միջև ընթացող բացահայտ, քողարկված ու միջնորդավորված պայքարը, այլ առաջնորդվեինք «Ազգային Միաբանություն կուսակցության» կողմից մշտապես որդեգրված մի պարզ ճշմարտության գործնական հաստատումով. քաղաքական պայքարն արդարացված և իմաստավորված է այն ժամանակ, երբ դրա արդյունքում հաղթող է դուրս գալիս հայ ժողովուրդը, հայոց պետականությունը:

*Գագիկ Թադևոսյան*
*«Ազգային Միաբանություն կուսակցության»*
*փոխնախագահ*

---

«168 ժամ», 20-21. XII. 2007:

# ՀԱՆՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Վերջին երեք ամիսներին Հայաստանի քաղաքական դաշտում Լևոն Տեր-Պետրոսյանի հայտնվելուց հետո պարզ դարձավ, որ ՀՀՇ-ական վերնախավի ջանքերով փորձ է արվում ոչ միայն պառակտել ժողովրդին, այլև տանել նրան առճակատման, հրահրել բախումներ: Այս իրողությունները, պետք է որ լրջորեն անհանգստացնեին Հայաստանի ներկայով ու ապագայով մտահոգված յուրաքանչյուր քաղաքական գործչի, ամեն մի ազնիվ հայ մարդու և պարտավորեցնեին ձեռնարկել գործնական քայլեր՝ խնդիր ունենալով կանխել նման վտանգավոր զարգացումները: Մտահոգիչ է, որ այս պայմաններում առանձին գործիչներ խուսափում են անգամ իսկ տալ սկզբունքային գնահատական՝ երկրում սկիզբ առած ու լավ բան չխոստացող այս երևույթներին: Ոմանք պարզապես լռությամբ և զգուշավորությամբ ուղղակի հետևում են պետականությանը ու երկրի ապագային սպառնացող այս իրողություններին: Սեփական վախվորածությունը փորձում են հմտորեն քողարկել արդարացումով՝ թե, իբր, մերժում են սև քարոզչությունը: Ինքնին հասկանալի է, որ խոսքն ամենևին սև PR-ի մասին չէ:

Վերստին «Ազգային Միաբանություն կուսակցությունն» իր պարտքն է համարում զգուշացնել, որ նման վարքագծի հետևանքները կլինեն ճիշտ այնպիսին, ինչպիսին եղան գործող իշխանությունների «մեծահոգի» քաղաքականության արդյունքները, երբ նրանք գնահատական չտվեցին նախորդ հանցավոր վարչախմբին:

Նոյեմբերի 27 - ին «Ազգային Միաբանություն կուսակցության» մամուլի ասուլիսում իմ գնահատականը տվել եմ նորից Հայաստանի քաղաքական դաշտում հայտնված Լևոն Տեր-Պետրոսյանին, նրան բնութագրելով որպես ական՝ տեղադրված ոչ միայն Հայաստանի ընդդիմության շարքերում, այլև ական՝ տեղադրված Հայաստանի պետականության հիմքերում: Թերևս նորից չանդրադառնայի այս թեմային, եթե վերջին օրերին նրա կողմից ուղղորդվող լրատվա-

միջոցների էջերում չհայտնվեին հոդվածներ, որոնցում կեղծ, ստոր և շինծու մեղադրանքներ ու անձը վիրավորող հերյուրանքներ չտպագրվեին Լևոն Տեր-Պետրոսյանին չմիացած կամ նրան չսատարող քաղաքական գործիչների հասցեին, մասնավորապես մեր կուսակցության նախագահ՝ Արտաշես Գեղամյանի հասցեին: Կարծում եմ, զսպվածությունն ու համբերատարությունն այն նորմերը չեն, որ այստեղ պետք է որոշիչ դեր խաղան ու առաջնորդեն: Եթե չես պատասխանում, տպավորություն է ստեղծվում, որ իրենք ճիշտ են, դրա համար էլ լռում ես: Իսկ երբ պատասխանում ես, երբ Գեղամյանը կոնկրետ փաստերով քննադատում, մեզ զրպարտողների դիմակները պատռում ու երևան է հանում նրանց ով լինելը, այստեղ արդեն, չկարողանալով ոչինչ հերքել, թեման փոխում են. անմիջապես բոլոր միջոցներով ապատեղեկատվություն են տարածում, թե «Ազգային Միաբանությունն» ու նրա ղեկավար Արտաշես Գեղամյանն իշխանությունների հետ համաձայնության են եկել, դադարել են իշխանություններին քննադատելուց՝ քննադատության սլաքն ուղղելով ինքն իրեն ընդդիմադիր հռչակած Լևոն Տեր-Պետրոսյանի վրա:

Ասել է, թե՝ մի հարցնող լինի, այդ ո՞ր օրվանից է Լևոն Տեր-Պետրոսյանն ընդդիմադիր: Արդյո՞ք այն բանից հետո, երբ 1996թ. սեպտեմբերի 25-ին նախագահական ընտրություններից հետո սեփական ժողովրդի վրա տանկեր դուրս բերեց և ինքնաձիգներից կրակահերթ բաց արեց: Իսկ միգուցե ընդդիմադիր է այն բանից հետո կամ այն բանի համար, որ «մեծահոգություն» ունեցավ ու Հայաստանը մինչև վերջ չավիրեց, «գթություն» ունեցավ՝ ոչ բոլոր հայերին արտաքսել հայրենիքից: Այնպես որ ժողովրդին միամիտի տեղ մի դրեք ու ձեր գելին գառ մի ներկայացրեք, պարոնայք լևոնականներ: Այո, եթե նա մի բանում ընդդիմանում է գործող իշխանություններին, ապա միայն նրանում, թե ասել կուզի՝ բավական է կերակրատաշտից ինձ հեռու պահեք, հիմա եկել է իմ ու իմ շրջապատի հերթը: Իսկ այսօրվա իշխանություններն էլ, կարծես, դեմ չեն «էստաֆետը» հետ հանձնելուն: Տպավորություն կարող է ստեղծվել, որ նրանց միջև պայմանավորվածություն կա մեր երկիրը, ֆուտբոլի գնդակի տեղ

դրած, իրար փոխանցել ու այդպես շարունակ: Սակայն նրանք թող քաջ գիտակցեն, որ ժողովուրդ անունով դատավոր կա, ով 2008թ. փետրվարի 19-ին երկուսին էլ «կարմիր քարտ» է ցույց տալու:

Գործող իշխանություններին «Ազգային Միաբանություն կուսակցությունը», կուսակցության նախագահ Արտաշես Գեղամյանը, նրա գործընկերներ Ալեքսան Կարապետյանը, Կորյուն Առաքելյանը, Գագիկ Թադևոսյանը, Գագիկ Կոստանդյանը, ինչպես և ես, միշտ էլ անողոք քննադատել ենք ու դեռ քննադատելու ենք այնքան ժամանակ, մինչև նրանց գործունեությունն ամբողջությամբ կծառայեցվի ժողովրդի բարեկեցությանը, Հայաստանի տնտեսության անշեղ զարգացմանը ու պետականության ամրապնդմանը: Իսկ որ այս ամենն անշրջելի լինի, մենք լի ենք վճռականությամբ՝ հաղթելու նախագահական առաջիկա ընտրություններին:

Սակայն դրա հետ մեկտեղ, այսօր ինձ առավել մտահոգում է այն, թե 1990 – 98 թթ. արդեն Հայաստանը ղեկավարած և այդ տարիներին երկիրը քաոսի վերածած ու անդունդի եզրին հասցրած, բնակչության կյանքն ու կենցաղը խաթարած, տասնյակ հազարավոր հայ ընտանիքներ դժբախտացրած մարդը՝ Լևոն Տեր-Պետրոսյանը, տաս տարի լռելուց հետո ինչո՞ւ է նորից վերադառնում քաղաքականություն, ինչո՞ւ է նորից ձգտում դառնալ Հայաստանի Հանրապետության նախագահ, ո՞ւմ է դա հարկավոր, ո՞վ է դրդում նրան այդ քայլին և որոնք են այդ քայլի բուն նպատակները: Ուշադիր վերլուծելով նրա գործելակերպը, կոչերն ու արտահայտած մտքերը վերջին ամիսներին, ինչպես նաև ծանոթ լինելով նրա արտաքին քաղաքական կողմնորոշումներին, եկել եմ այն եզրակացության, որ Լևոն Տեր-Պետրոսյանը, այո, ո՛չ երկրի, ո՛չ մեր ժողովրդի, այլ օտարի օգտին է գործում: Նա իր կոչերով ժողովրդին միտումնավոր բաժանում է երկու մասի, նրանց, ովքեր իր հետ չեն, որակում է որպես թշնամիներ, անգամ հայրենիքի դավաճաններ, իր սպասավորների հետ իրենց ելույթներում ու հոդվածներում մարդկանց սպառնում են, դրդում են բախումների և ընդհարումների, իսկ դրանք, հայտնի բան է, առանց արյուն թափելու չեն ընթանում:

Դեպքերի նման զարգացումը, ինչ խոսք, արդեն իսկ քաղաքացիական պատերազմի սկիզբ է նշանակում: Նախ նշեմ, որ այլակարծության համար մարդկանց հայրենիքի թշնամի ու դավաճան անվանելն ու սպառնալն արդեն իսկ խոսում է Լևոն Տեր-Պետրոսյանի ու նրա շրջապատի առանձին մարդկանց բռնակալական խառնվածքի ու ժողովրդավարության վերաբերյալ նրանց ունեցած, մեղմ ասած, խիստ սահմանափակ պատկերացումների մասին: Հիմա էլ տեսնենք, թե Լևոն Տեր-Պետրոսյանի կողմից հրահրվող հայաստանյան ներքաղաքական պառակտող այս գործընթացն ո՞ւմ է ձեռնտու և որքանով է այն համահունչ հայոց պետականության անվտանգության գաղափարի հետ ու ազգային նպատակներին:

Անխոս, ձեռնտու է նախևառաջ հակահայկական անթաքույց տրամադրվածություն և քաղաքական գործունեության ուղղվածություն ունեցող Թուրքիայի ղեկավարող շրջաններին, որոնք Հայաստանում ներքաղաքական իրավիճակի ապակայունացմամբ ու սրումով, և սրանցից բխող քաղաքացիական բախումներով միայն ոգևորություն կապրեն (ի՞նչ խոսք, նաև կօժանդակեն այդպիսի իրավիճակի առաջացմանը), քանի որ դրանից ակնկալիքներ ունեն: Այսպես, Հայաստանում քաղաքացիական բախումների հետևանքով թուլանում և աստիճանաբար վերանում է պետականությունը կամ իշխանության է գալիս ազգային նկարագիր չունեցող, կոսմոպոլիտ Լևոն Տեր-Պետրոսյանը, ով դրժում է հայոց ցեղասպանության հարցի պետականորեն արծարծումը միջազգային ատյաններում և երկրի արտաքին քաղաքականությունում, ասես թե դրանով իր առաջ խնդիր է դրել ցանկացած գնով սիրաշահել թուրք - ադրբեջանական իշխանություններին: Այնուհետև նա զիջում է Լեռնային Ղարաբաղում արյան գնով ազատագրված տարածքները, ըստ էության, հրապարակավ ճանաչելով Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Ակնհայտ է նրա կողմից որդեգրված քաղաքականությունը՝ ապակայունացնել վիճակը մեր երկրի ներսում, դրանով իսկ պայմաններ ստեղծել Ադրբեջանի կողմից պատերազմ սանձազերծելու և դրսից մեր ներքին գործերին միջամտելու համար պարարտ հող նա-

խապատրաստելուն: Եվ ամենևին պատահական չէ, որ վերջերս Ադրբեջանում Թուրքիայի արդեն իսկ նախկին դեսպան Հուսեին Ավ-նի Կարսիօղլուն, ինչպես հաղորդել է ԸԿԸ գործակալությունը, ադր-բեջանական իշխանություններին հորդորել էր. «Դուք միայն պատե-րազմ սկսեք Լեռնային Ղարաբաղում և կտեսնեք, թե ինչպես կփո-թորկի իմ երկիրը»: Եվ, վերջապես, խնդիր է դրված նպաստել մի-ջազգային խաղաղարար ուժերի մուտքը հայ - ադրբեջանական բա-ժանման գոտի, որը, չմոռանանք նշել, գրեթե հարում է Իրանի Իսլա-մական Հանրապետության սահմաններին: Այս ամենը տարածաշր-ջանում, անտարակույս, կստեղծի լարվածության մի օջախ, ուր կկի-զակետվեն Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Եվրամիության և Իրանի կենսա-կան շահերը՝ դրանցից բխող անկանխատեսելի հետևանքներով: Ասել, որ այս ամենի մասին Լևոն Տեր-Պետրոսյանը չի մտածել, կար-ծում եմ, միամտություն կլինի: Իսկ եթե մտածել է ու շարունակում է վարել նման քաղաքականություն, ապա դա ոչ այլ ինչ է, քան քաղա-քականություն՝ ուղղված հայոց պետականության դեմ: Ահա նման մոտեցմամբ են պայմանավորված «Ազգային Միաբանություն կու-սակցության» նախագահ Արտաշես Գեղամյանի և մեր բոլորիս անա-չառ, սկզբունքային գնահատականները Լևոն Տեր-Պետրոսյանի և նրա թիմակիցների հասցեին: Ա.Գեղամյանը լավ գիտակցում է, թե ինչու է դարձել լևոնականների քարոզչամեքենայի հիմնական թիրա-խը: Մենք հասկանում ենք, թե Գեղամյանի դեմ ուղղված քաղաքա-կանությունը որքան ձեռնտու է թե՛ գործող, թե՛ նախկին իշխանու-թյուններին, որոնք անցած տասնամյակների ընթացքում բազմիցս ենթարկվել են «Ազգային Միաբանություն կուսակցության» ղեկավա-րության անխնա, սակայն հետն էլ ճշմարիտ քննադատությանը:

Վերը ես փորձեցի գնահատականներ տալ ներկայիս փուլում ծա-վալված տեր-պետրոսյանական գործունեությանը: Հիրավի, ճշմա-րիտ էր իմաստունը, երբ ասում էր. եթե ուզում ես իմանալ, թե քաղա-քական գործիչը ինչ կանի ապագայում, ապա վերլուծիր, թե նա ինչ է արել անցյալում: Սիրելի՛ ընթերցող, եկեք մտովի վերհիշենք, թե ինչ է արել Լևոնը իր իշխանության տարիներին:

Ինչո՞վ բացատրել նրա իշխանության տարիներին Հայաստանի բնակչության ճնշող մեծամասնության ապրած մղձավանջը, օրենքից վեր կանգնած և հակաժողովրդական իր գործունեության հենարանը հանդիսացող առանձին բարձր պաշտոնյաների՝ Հայաստանով մեկ սովորական մարդկանց շրջանում տարածած ահուսարսափը, աղմկահարույց սպանություններն ու հարյուր հազարավոր հայ մարդկանց արտագաղթն ու փախուստը երկրից՝ անտանելի դարձած կյանքի հետևանքով: Ինչո՞վ բացատրել Հայաստանի հզոր արդյունաբերության կործանումը, նույնիսկ այնպիսի ձեռնարկությունների փակումը, որոնք աշխատում էին տեղական հումքով և ծանրակշիռ օգուտ կարող էին տալ երկրի տնտեսությանը շրջափակման տարիներին: Ինչո՞վ բացատրել տրանսպորտի և զարգացած գյուղատնտեսության քայքայումը, արհեստականորեն էներգետիկ ճգնաժամի ստեղծումն ու դրա հետևանքով մարդկանց կյանքը դժոխքի վերածելը, ժողովրդի սեփականությունը՝ գործարանները, շինություններն ու ազգային հպարտության խորհրդանիշ հանդիսացող օբյեկտներն աննշան գներով յուրայիններին կամ «օտարին» սեփականաշնորհելը, տասնյակ հազարավոր հաստոցները, տրակտորներն ու կոմբայնները Պարսկաստան տանելն ու որպես մետաղի ջարդոն վաճառելը, աշխարհահռչակ գիտական կազմակերպությունների կազմալուծումը, բարձրագույն կրթական համակարգի ամլացումը, միջնակարգ մասնագիտական կրթօջախների վերացումը, դպրոցական ու նախադպրոցական համակարգի քայքայում: Էլ ո՞ր բնագավառը թվարկեմ… Ի՞նչ արեցին ժողովրդի միլիարդավոր ռուբլիների հասնող խնայողությունները և դրսից ստացած հարյուրավոր միլիոն դոլարների հասնող վարկերը, որոնք այդպես էլ ոչնչով չնպաստեցին երկրի տնտեսության զարգացմանը և միայն պարտքի տակ գցեցին սերունդներին ու դժվարություններ ստեղծեցին Հայաստանի ապագա զարգացման համար: Ինչո՞վ բացատրել, որ որակյալ կադրերի հսկայական բանակ ունեցող Հայաստանում ղեկավար պաշտոնների էին նշանակվում կիսագրագետ, աշխատանքի փորձ չունեցող, երբեմն էլ բարոյազուրկ մարդիկ: Բացատ-

ություն կա՞ նրան, որ շուտափույթ փակվում կամ էլ կազմալուծվում էին հազարավոր անդամներ ունեցող, նաև միջին ու փոքր աշխատանքային կոլեկտիվները, գրեթե ամբողջ բնակչությունը դառնում էր գործազուրկ՝ դրանից բխող սոցիալական ու բարոյահոգեբանական ծանր հետևանքներով:

Նորություն չեմ հայտնում. դեռ 1997թ. հոկտեմբերի 17-ին Արտաշես Գեղամյանի նախաձեռնությամբ ու համահեղինակությամբ Հայաստանի մոտ երկու տասնյակ անվանի մտավորականների ստորագրությամբ կոչ ուղղվեց համայն հայությանը, որում երկրում տիրող այն օրերի տխուր պատկերը ներկայացնելուց բացի, պահանջվում էր , որ Լևոն Տեր-Պետրոսյանն անմիջապես հրաժարական տա ՀՀ նախագահի պաշտոնից, քանի որ նրա իշխանավարման յուրաքանչյուր օրը նոր վտանգ էր առաջացնում՝ ուղղված Հայաստանի պետականությանը:

Մի խոսքով՝ Լևոն Տեր-Պետրոսյանն ու ՀՀՇ-ն երկիրը տանում էին դեպի կործանում: Միայն թող չփորձեն այս ամենը բացատրել և արդարացնել պատերազմական իրավիճակով: Շեշտեմ, որ Հայաստանի Հանրապետության ժողովուրդն ու արցախահայությունը մղում էին արդարացի, ազատագրական պատերազմ և դա հայրենասիրական  հզոր ալիք էր բարձրացրել ինչպես Հայաստանում, այնպես էլ համայն հայության շրջանում: Թշնամու զորքը չէր մտել Հայաստան ու դրա վտանգից չէր, որ մարդիկ տասնյակ հազարներով լքում էին հայրենիքը: Այն տարիներին մեր ժողովրդի ոգևորությունն այնքան մեծ էր, որ մարդիկ առանց աշխատավարձի, գիշեր-ցերեկ զենք ու զինամթերք էին արտադրում: Աշխարհասփյուռ հայության լավագույն զավակները գալիս էին հայրենիք՝ Արցախի ազատամարտին մասնակից լինելու նպատակով, օգնում ու մասնակցում էին բոլորը՝ ով ինչով կարող էր: Եվ ազգային զարթոնքն ու համազգային այդ տարիների ոգևորությունը չկազմակերպել, չնպատակաուղղել երկրի զարգացմանն ու բնակչության բարեկեցության բարձրացմանը, նշանակում է չուզել այդ անել:

Իսկ մեր չուզողն ո՞վ է…

Նորից գլուխ չէր բարձրացնի Լևոն Տեր-Պետրոսյանը, եթե գործող իշխանությունները ժամանակին քաղաքական և իրավական գնահատական տային նախկինների գործունեությանը, եթե հանցագործություն կատարած նախկին պաշտոնյաները պատժվեին: Այդպես է կյանքում:

Իսկ ի՞նչն է փոխվել: Արդյո՞ք տաս տարի Սև շենքում նստելուց հետո Լևոն Տեր-Պետրոսյանը զղջացել է իր արածների կամ չարածների համար: Արդյո՞ք ծրագրեր է մշակել՝ թե ինչպես հետ բերել արտագաղթածներին, ինչպես վերականգնել երբեմնի հզոր տնտեսությունը, ինչպես խաղաղություն սերմանել մարդկանց խաթարված հոգիներում: Իհարկե, ոչ: Նա փորձում է վերադառնալ մեծ քաղաքականություն մի նպատակով՝ իր կիսատ թողած սև գործը մինչև վերջ հասցնելու համար: Թերևս սա է եզակի հետևությունը, ինչին գալիս ես անկողմնակալ գնահատելով Լևոնի ու նրա թիմակիցների վերջին շրջանում ծավալած գործունեությունը:

Ահա թե ինչու, «Ազգային Միաբանություն կուսակցությունն» ու ՀՀ նախագահի թեկնածու առաջադրված Արտաշես Գեղամյանն իրենց պարտքն են համարում այս ամենի մասին բարձրաձայնել, գիտակցելով, որ հիշական ամբողջ քարոզչամեքենան, բանուգործը թողած, ասես թե մեր քննադատությունը դարձրին փրկօղակ, պատրվակ՝ զերծ մնալով միայն գործող իշխանություններին քննադատելու խոստումից, այն է՝ իրենց իսկ կողմից ի սկզբանե հայտարարված սկզբունքից: Ցույլերին մեկ անգամ ևս հիշեցնեմ «Ազգային Միաբանություն կուսակցության» սկզբունքային դիրքորոշումը. մենք մերժում ենք թե՛ գործող իշխանություններին և թե՛ նախկիններին, մենք մեզ երբեք չենք արատավորել հին ու նոր իշխանությունների դատապարտելի քաղաքականությանը որևէ ձևով մասնակից լինելու փաստով: Մենք մեր ժողովրդին, հայոց անկախ պետությանը խաղաղություն և զարգացում բերող կուսակցություն ենք, հույսի, լույսի, ապագայի կուսակցություն:

*Հ. Գ.* Հոդվածս պատրաստ էր տպագրության, երբ հրապարակվեց Սերժ Սարգսյանի՝ լրագրողի հարցին տված պատասխանը. «… շատ-շատ հարցերում ես Գեղամյանի հետ համաձայն չեմ, համաձայն չեմ նաև այն պատճառով, որ հաճախ նրա քննադատությունները իմ և իշխանությունների հասցեին դուրս են գալիս կառուցողական տրամաբանությունից, բայց, միևնույն ժամանակ, չի կարելի ժխտել, որ Գեղամյանը հայրենասեր քաղաքական գործիչ է, հիշեք նրա ելույթները եվրոպական ատյաններում, հիշեք նրա պահվածքը մեր երկրի համար կարևորագույն իրադարձությունների ժամանակ»: Պարոն Սարգսյանի մոտեցումները գնահատում եմ դրականորեն, որպես քաղաքական նոր մշակույթի դրսևորում՝ ուղղված քաղաքական ընտրանու կոնսոլիդացմանը՝ հանուն ազգային միաբանության, հանուն Հայաստանի Հանրապետության:

*Սարգիս Մուրադխանյան*
*«Ազգային Միաբանություն կուսակցության»*
*փոխնախագահ*

---

«168 ժամ», 22-24. XII. 2007: